Որոշումների կայացման գործընթացում հանրային մասնակցության դերի ավելացումը Հայաստանում

նախադեպերի ուսումնասիրություն

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Ես մասն եմ համայնքի

Որոշումների կայացման գործընթացում հանրային մասնակցության դերի ավելացումը Հայաստանում.

նախադեպերի ուսումնասիրություն

Երևան - 2009

Մասնագետների և ընթերցող լայն հասարակության ուշադրությանը ներկայացվող սույն օժանդակ ձեռնարկը նախատեսված է մասնակցային ժողովրդավարության և տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստման դասընթացներում կիրառելու նպատակով:

Գրքում զետեղված են հանրապետության բոլոր մարզերի տաս համայնքներում իրականացված տեղական բյուջեների քննարկումների, դրանց արդյունքում որոշումների կայացման, իրականացված ծրագրերի, հարկերի հավաքագրման և համայնքային այլ խնդիրների վերաբերյալ տասը նախադեպերի ուսումնասիրություններ:

This book is produced with the financial assistance of the European Union. The contents of this book are the sole responsibility of the International Center for Human Development and can under no circumstances be regarded as reflecting the position of the European Union.

Գիրքը հրատարակվել է Եվրոպական Միության օժանդակությամբ: Գրքի բովանդակության բացառիկ պատասխանատվությունը կրում է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, և այն չի կարող համարվել իբրև Եվրամիության տեսակետ:

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
www.ichd.org

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՍ ՄԻ ՄԱՍՆ ԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ.....5

ՀԱՄԱՅՆՔ՝ ՌԻՆԴ.....10

ՀԱՄԱՅՆՔ՝ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ.....22

ՀԱՄԱՅՆՔ՝ ՀԱՑԻԿ.....32

ՀԱՄԱՅՆՔ՝ ԱՉԱՋՈՒՐ.....41

ՀԱՄԱՅՆՔ՝ ՍԱՐՈՒԽԱՆ.....51

ՀԱՄԱՅՆՔ՝ ԱՇՏԱՐԱԿ.....60

ՀԱՄԱՅՆՔ՝ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ.....72

ՀԱՄԱՅՆՔ՝ ԱՐԵՎԻԿ.....80

ՀԱՄԱՅՆՔ՝ ԱՇՈՏԱՎԱՆ.....93

ՀԱՄԱՅՆՔ՝ ԱՐՃԱԿԱՆ.....104

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՃՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ.....113

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԽՈՍՔՆ Ի ՇՐՋԱՆՍ ՅՈՒՐ...117

ՀԱՎԵԼՎԱԾ 1.....128

ՀԱՎԵԼՎԱԾ 2.....134

Նախապատմությունը

Ամեն ինչ սկսվեց Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղից: Սառնաղբյուրում անցկացվեցին համահամայնքային քննարկումներ, համայնքի բնակիչները մասնակցեցին, քննարկեցին ու նախապատվություն տվեցին բյուջետային միջոցներով մարզադաշտ կառուցելու գաղափարին: Ավագանին ընդունեց բնակիչների որոշումն ու մարզադաշտի կառուցման գործընթացը մեկնարկեց: Արդյունքում ավելացավ համայնքի հարկերի հավաքագրումը, իսկ այս եզակի փորձը արձանագրվեց ու տեղական ինքնակառավարման խնդիրներով զբաղվողների համար դարձավ ուշագրավ նախադեպ, որն ուսումնասիրվեց և կիրառվեց տարբեր միջազգային փորձագետների կողմից:

Անհրաժեշտությունը

Մասնակցային ժողովրդավարությունը աշխարհի տարբեր երկրներում իրականացվող քաղաքականության համատեքստում ավելի ու ավելի լայն կիրառություն է գտնում ՝ անկախ երկրի զարգացվածության աստիճանից:

Թեպետ մեր պատմությունը սկսվեց Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղում, նրա արմատներն ավելի խորն են գնում: Խնդիրը հանգում է կառավարման համակարգի նոր մոտեցումներին, ապակենտրոնացման գաղափարի տրամաբանական շարունակությանը՝ մասնակցային կառավարման մոդելին: Մասնակցային ժողովրդավարության խնդիրն արծարծվել է տարբեր գրքերում, դասագրքերում: Այն կառավարման և տեղական ինքնակառավարման տեսությունների անբաժանելի մասն է: Իրականացվող հետազոտությունները ցույց են տալիս, որ մասնակցային ժողովրդավարությունն էությամբ առաջադիմական է, բազում օգուտներ է բերում և ընձեռում հնարավորություններ: Հետաքրքրական է, որ թեպետ մասնակցային ժողովրդավարության մոտեցումներն ու շարժառիթները տարբեր են, դրանք բոլորն էլ հանգում են մասնակցային ժողովրդավարության գաղափարին ու կիրառմանը: Մասնակցային ժողովրդավարության պատճառները երբեմն քաղաքական են՝ քաղաքական գործընթացների գեր կամ թերզարգացման պատճառով որոշակի շահեր հետապնդող խմբերի կողմից քաղաքական դաշտի «զավթման» արդյուն-

քում ձևավորվում է քաղաքական գործընթացներում բնակչության մասնակցության դեֆիցիտ: Երբեմն կառավարման համակարգի զարգացումը դրդում է դիմելու մասնակցային ժողովրդավարությանը: Նման դեպքերում շարժառիթը «արձագանքող կառավարողի» կերպարի ձևավորումն է և կառավարման արդյունավետության բարձրացումը:

Տեղական հասարակական կազմակերպությունների ներգրավումը

Ստորև բերված սխեման նկարագրում է համայնքի բյուջետային գործընթացում բնակիչների մասնակցությամբ համայնքային ուղղակի քննարկման մեխանիզմն ու դրա հիմնական տարրերը:



Մեր փորձը հավաստում է, որ հասարակական կազմակերպություններն էական դեր կարող են ստանձնել ուղղակի ժողովրդավարության մեխանիզմով բյուջեում գերակայությունների սահմանման գործում: Ի տարբերություն Սառնաղբյուր գյուղում կազմակերպված քննարկման, մյուս համայնքներում քննարկումները կազմակերպելիս հաշվի էր առն-

վել երկու հանգամանք: Նախ, ՄԶՄԿ-ն ակնհայտորեն չի կարող նման ակտիվ դերակատարում ստանձնել Հայաստանի մարզերի բոլոր համայնքներում: Լուծումը հասարակական այլ կազմակերպությունների հետ համագործակցությունն է և նրանց համապատասխան հմտություններով զինելը: Մյուս կողմից առկա է արդյունավետության բարձրացման խնդիրը, ինչը հնարավոր է քաղաքացիական հասարակության տեղական կառույցների ընդգրկմամբ: Չէ՞ որ տեղական ՀԿ-ն թերևս ավելի լավ գիտե մարզի համայնքները, նրանց խնդիրներն ու առանձնահատկությունները:

Այս մոտեցումները հաշվի առնելով, Հայաստանի տասը մարզերում ՄԶՄԿ-ն վերապատրաստեց տասը հասարակական կազմակերպությունների: Դրանց անդամները ստացան արդյունավետ հաղորդակցության, հետադարձ կապի ապահովման, մասնակցային ժողովրդավարության, Սառնաղբյուրի փորձի ամփոփման, հանրային քննարկման համակարգչային ծրագրի օգտագործման, մտքերի արդյունավետ «ամբողջականացման» և այլ թեմաների վերաբերյալ հմտություններ ու գիտելիքներ: Ինչպես հենց իրենք՝ ՀԿ-ներն են նշում, բնակիչների հետ աշխատանքը յուրահատուկ հմտություններ է պահանջում, որոնց քչերն էին տիրապետում: «Բոլորը չէ, որ կարող են բարդ մտքերը պարզ խոսքերով արտահայտել, ըմբռնել հասարակ բնակչի արտահայտած խոսքի խորհուրդը, կառավարել հուզական իրավիճակները և այլն»,- հավաստել են ՄԶՄԿ գործընկերները:

Սեղանավարների ու գրառողների համար մշակվել էին համապատասխան ուղեցույցեր:

Ինչ հիպոթեզներ են ստուգվել փորձի ընթացքում

Հայաստանի տասը մարզերի տասը համայնքներում կիրառված համահամայնքային քննարկման միջոցով փորձել ենք ամփոփել համայնքի բյուջեների ընդունման և դրանց իրագործման մասնակցային ժողովրդավարության մոդելը՝ յուրաքանչյուր դեպքում ցույց տալով կոնկրետ դեպքի յուրահատկությունները, առավելություններն ու թերությունները, ինչպես նաև առկա մարտահրավերներն ու դրանց լուծման հնարավոր ուղիները: Վերլուծության հիմնական թեզերն են.

1. *Համայնքային քննարկման ազդեցությունը համայնքի բյուջեի վրա*

   Թեպետ համայնքային քննարկման ընթացքում համայնքի բնակիչները կարծիք են արտահայտում բոլոր սցենարների վերաբերյալ և քվեարկում

դրանցից որևէ մեկի օգտին, իրավական տեսանկյունից նման արդյունքը ոչինչ չի նշանակում, քանի դեռ չի արտացոլվել համայնքի բյուջեում: Ուստի անհրաժեշտ է տեսնել, թե ինչպես և որքանով են քննարկումներն ազդել բյուջեի հաստատման մասին որոշման վրա:

2. *Համայնքում ձևավորված վստահության աստիճանը*

Մասնակցային ժողովրդավարության առավելություններից մեկը համայնքում վստահության մթնոլորտի ձևավորումն ու ամրապնդումն է: Դրա համար անհրաժեշտ է ոչ միայն համատեղ քննարկել համայնքային խնդիրներն ու ծրագրերը ներառել բյուջեում, այլև արդյունավետորեն իրականացնել ծրագրերը, մշտապես հաշվետու լինել բնակչությանը, խորհրդակցություններին տալ շարունակական բնույթ և գտնվել ակտիվ հաղորդակցության մեջ:

3. *Հարկերի ավելացումը՝ համայնքի զարգացման նախանշան*

Երբ վստահության սերմերը սկսում են ծիլեր տալ, դրանց ամրության և կայունության լավագույն առհավատչյան հարկերի հավաքագրման մակարդակն է: Արդյոք հարկ վճարողների թիվը ավելացել է, արդյոք ապառքները նվազում են, արդյոք համայնքը գիտակցում է, որ սեփական միջոցներով է զարգացնում համայնքը:

4. *Ներհամայնքային այլ խնդիրներ*

Համայնքներն ունեն նմանություններ: Երբեմն տարբեր համայնքներն ունեն միանման կապիտալ ծախսերի կարիք: Այդուհանդերձ, համայնքի բնակչությունը, կառուցվածքը, մտածելակերպն ու հարաբերությունները հիմնականում տարբերվում են: Անհրաժեշտ է նայել խորը և հեռուն՝ հասկանալու համար առանձին համայնքի երկարաժամկետ խնդիրները, պատկերացնել, թե որոնք են մարտահրավերները: Այս խնդրին փորձել ենք լուծում տալ սերտած դասերի վերլուծությամբ, կարողացել ենք բացահայտել և տալ լուծման հստակ դեղատոմսեր:

Այս և այլ կանխավարկածների վերաբերյալ ուշագրավ, որոշ դեպքերում հակասական, բայց որպես կանոն բացատրելի արդյունքները քաղել ենք քննարկումների և դրանց հետևած դիտարկումների վերլուծության արդյունքում: Քննարկումների մանրամասները և համապատասխան եզրահանգումները ներկայացնում ենք ստորև:

Տեղական ՀԿ ներկայացուցիչների ուսուցում:

ՀԱՄԱՅՆՔ՝ ՌԻՆԴ

Մարզ՝ Վայոց Ձոր

Տեղական ՀԿ՝ «Երիտասարդ ընտանիքի աջակցության կենտրոն»

Ռինդ համայնքի 2008 թվականի բյուջեում ներառելու առաջարկով քննարկման դրված սցենարները.

1. *գյուղամիջյան և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում,*
2. *գերեզմանոցի համար հատկացված տարածքների պարսպապատում,*
3. *անասունների համար խմելու ջրի տաշտամանների տեղադրում,*
4. *մանկապարտեզի կահավորում,*
5. *մշակույթի տան ներքին հարդարում,*
6. *զբոսայգու և հանգստի գոտու կառուցում:*

Սցենարները՝ հակիրճ

1. Գյուղամիջյան և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում

Խնդիրը.....

Ռինդ գյուղական համայնքում, բացի գյուղի հիմնական զարկերակը համարվող կենտրոնական ճանապարհից, առկա են ներհամայնքային նշանակության 7-8կմ և ևս 30-34կմ երկարությամբ հանդամիջյան ճանապարհներ: Ասֆալտի ծածկույթ չունեցող գրունտային այս ճանապարհները լուրջ խոչընդոտ են հանդիսանում համայնքի տնտեսական զարգացման և բնակչության տեղաշարժի համար: Դրանք կիսաքանդ են, բազմաթիվ մեծ ու փոքր ակոսներով: Ամռանը դառնում են փոշու աղբյուր, ձմեռվա ձնից ու սառույցից մաքրելը գրեթե անհնար է, գարնանային ու աշնանային անձրևների հետևանքով գոյացող ցեխաջրերը բարդություններ են առաջացնում երթևեկողների և անցորդների համար

Նշված ճանապարհների վրա են գտնվում համայնքի բազմաթիվ բնակելի տներ ու գյուղի մանկապարտեզը: Վերջին տարիներին աճում է ներգաղթը դեպի գյուղ, ավելանում է տնտեսությունների թիվը: Իսկ ներգյուղային ճա-

նապարհների այս վիճակը էական խոչընդոտ է դառնում բնակչության ներքին տեղաշարժի, հողերի մշակման աշխատանքները կազմակերպելու համար:

Առաջարկությունը .....

2008թ տարեկան բյուջեում առանձնացնել 2.5մլն դրամ նշված շուրջ 40 կմ երկարությամբ ճանապարհները հարթեցնելու և ներհամայնքային ճանապարհների 7-8կմ հատվածը խճապատելու համար: Նախատեսվում է ճանապարհների երկայնքով բացել նաև կողային առուներ անձրևաջրերի և ձյան հալոցքից առաջացող ջրերի հեռացումն ապահովելու համար:

2. Գերեզմանոցի համար հատկացված տարածքների պարսպապատում

Խնդիրը.....

Գյուղի գերեզմանոցը, որն ունի ավելի քան 40 տարվա պատմություն, այսօր հայտնվել է անպաշտպան վիճակում: Նախ, սոցիալական ծանր պայմաններն ու ֆինանսական միջոցների զգալի պակասը թույլ չեն տալիս ոչ բնակչությանը և ոչ էլ տեղական իշխանության մարմիններին պատշաճ հոգ տանել դրա պահպանության և բարեկարգման մասին: Գերեզմանոցի ողջ տարածքը /3-4 հեկտար/ պատվում է խոտածածկույթով և գարուն-աշուն ժամանակահատվածում հրապուրում է տավարածներին իրենց անասունների արոտը կազմակերպելու հենց այդ տարածքում, ինչի պատճառով գերեզմանները տրորվում են, փլուզվում և քանդվում են հուշարձանաքարերն ու պաշտպանիչ եզրաքարերը:

Ցավով պետք է խոստովանել, որ գյուղում արձանագրվել են գերեզմանագողության դեպքեր, որոնց հեղինակները գունավոր մետաղների «որսորդներ» են: Մինչդեռ գյուղի գերեզմանոցում հանգչում են ոչ միայն գյուղի հասարակ աշխատավորն ու մշակը, այլ նաև հայրենական ու ղարաբաղյան պատերազմի մարտիկների աճյունները:

Առաջարկություն .....

Գյուղապետարանը նախատեսում է իրականացնել գերեզմանոցի տարածքի պարսպապատում՝ շուրջ 500 գծամետր երկարությամբ: Աշխատանքները նախատեսվում է սկսել 2008թ-ի մայիս ամսին և ավարտել մինչև սեպտեմբեր ամիսը: Նախնական հաշվարկներով ծրագրի իրականացումը կպահանջի շուրջ 1.5 մլն ՀՀ դրամի ներդրում:

3. Անասունների համար խմելու ջրի տաշտամանների տեղադրում

Խնդիրը.....

Ռինդ համայնքի տնային տնտեսությունների գերակշռող մասը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղում հաշվվում է շուրջ 610 պայմանական անասնագլխաքանակ: Այդ թիվն անշուշտ կավելանա, եթե, ի թիվս այլ հարցերի, լուծվի նաև անասուններին խմելու ջրով ապահովելու հարցը:

Անասուններին ջրելու համար ներկայում անհրաժեշտ է լինում գյուղի միջով հոտը քշել դեպի գյուղի վերջնամասում գտնվող առուն: Այն դժվարություններ է ստեղծում գյուղացիների համար, հատկապես այն դեպքերում, երբ հոտն ուղեկցում են կանայք և երեխաները: Խոչընդոտներ են ստեղծում նաև ցուրտը, անձրևը, ձյունը: Բացի այդ, ճանապարհներով անցնելու ընթացքում դրանք աղտոտվում են՝ առաջ բերելով լրացուցիչ աշխատանքների կազմակերպման և իրականացման անհրաժեշտություն: Ուստի, անասունների համար ջրի խմոցների և տաշտերի տեղադրումը կենդանիների արոտի կազմակերպման համար հարմար վայրերում անհրաժեշտ խնդիր է:

Առաջարկություն.....

Անասունների ջրումը կազմակերպելու համար պահանջվում է կառուցել 25մմ տրամագծով 220մ երկարությամբ ջրագիծ, տեղադրել 6 հատ տաշտ և իրականացնել բետոնապատման աշխատանքներ՝ 25 խմ ծավալով: Այս ծրագիրն իրագործելու համար անհրաժեշտ է շուրջ 1.8 մլն ՀՀ դրամ նախատեսել համայնքի տարեկան բյուջեում:

4. Մանկապարտեզի կահավորում

Խնդիրը.....

Ռինդ գյուղի մանկապարտեզը կառուցվել և շահագործման է հանձնվել 1970-ականներին և նախատեսված էր մսուրային և նախադպրոցական տարիքի շուրջ 100 երեխաների համար: 1990-ականների սոցիալ-տնտեսական ճգնաժամն իր բացասական ազդեցությունն ունեցավ ինչպես մանկապարտեզի գործունեության, այնպես էլ գույքի պահպանման վրա:

2005թ. տեղական իշխանությունների ջանքերով հնարավոր եղավ մասնակի վերանորոգումների արդյունքում մասամբ վերականգնել մանկապարտեզի գործունեությունը: Ներկայում մանկապարտեզ են հաճախում շուրջ 27 երեխա, իսկ մանկավարժական և սպասարկող անձնակազմի թիվը կազմում

է 16 մարդ:

Սակայն առկա հնարավորություններն այնուամենայնիվ չեն բավարարում Ռինդ գյուղի իրական պահանջարկը, քանի որ այսօր գյուղում հաշվառվում են շուրջ 90 նախադպրոցական տարիքի երեխաներ: Մանկապարտեզում չեն գործում մսուրային տարիքի երեխաների խմբեր, ինչի անհրաժեշտությունը նույնպես խիստ զգացվում է: Մանկապարտեզի գույքը զգալիորեն մաշվել է, զգացվում է մահճակալների և սեղանների կարիք: Դահլիճն անհրապույր է, քիչ են աթոռները, եղածներն էլ ոչ բարվոք վիճակում են: Գրեթե չկան երեխաների զվարճանքի, մտավոր զարգացման համար անհրաժեշտ խաղալիքներ և դիդակտիկ նյութեր, գրադարանն անհրաժեշտ է համալրել նոր գրքերով և գրականությամբ:

Առաջարկություն .....

2008թ. տարեկան բյուջեում հնարավորություն է ստեղծվել առանձնացնել շուրջ 1.2 մլն դրամ մանկապարտեզը նոր գույքով հագեցնելու համար:

5. Մշակույթի տան ներքին հարդարում

Խնդիրը.....

Ռինդ գյուղը խորհրդային իշխանություններից ժառանգել է մեծ և հարմարավետ մշակույթի տուն: Բոլորին հայտնի է, թե ինչ մեծ դեր ունի նման հաստատությունը բնակչության մշակութային կյանքի կազմակերպման գործում:

Մշակույթի տանը գործում են 4-5 խմբակներ, մշտապես լինում են մշակութային միջոցառումներ, ժողովներ, հանդիպումներ: Մշակույթի տունը կահավորված է մասամբ: Դահլիճի սպասասրահի պատերի ներկը թափված է, հատակը՝ տեղտեղ քանդված, ինչն անհրապույր տեսք է հաղորդում մշակութային այդ օջախին:

Առաջարկություն .....

Առաջարկվում է իրականացնել մշակույթի տան շուրջ 500քմ տարածքի ներքին հարդարում՝ պատերի սպիտակեցում և հատակի մասնակի վերանորոգում, ինչի համար, ըստ նախնական հաշվարկների, կպահանջվի շուրջ 400 հազար դրամ:

6. Զբոսայգու և հանգստի գոտու կառուցում

Խնդիրը.....

Ռինդ գյուղն ունի գեղատեսիլ դիրք, սակայն այն գրեթե զուրկ է կանաչ տարածքներից: Գյուղում առկա միակ պուրակը գտնվում է մշակույթի տան դիմաց: 90-ականների սոցիալ-տնտեսական ճգնաժամը ստիպեց, որ պուրակը գրեթե ամբողջությամբ ամայանա: Պուրակի այժմյան 0.3 հա տարածքում աճում են մի քանի չխնամված ծառեր, հողը ենթարկվել է էռոզիայի: Մինչդեռ պուրակը կարող է դառնալ հանգստի գոտի բնակչության համար, ծառայել որպես խաղահրապարակ, տոնական օրերին միջոցառումների կազմակերպման և երիտասարդների հանգստի և ազատ ժամանցի անցկացման վայր:

Ըստ վերջերս անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքների՝ պարզվել է, որ գյուղի երեխաները և երիտասարդները պատրաստ են բացօթյա պայմաններում դիսկոտեկներ, սպորտային մասսայական միջոցառումներ, տոնական այլ մշակութային հանդեսներ կազմակերպել գյուղում: Պետք է հաշվի առնել, որ հատկապես գյուղի բնակչության հենց այդ տարիքային խումբն է, որ չունի անհրաժեշտ ինքնուրույնություն գյուղից դուրս մեկնելու և հանգիստն այլ վայրերում կազմակերպելու համար: Շահառուների այդ մեծ բանակի համար այսօր առաջնային հիմնախնդիր է համարվում հանգստի գոտու՝ համայնքային պուրակի ստեղծումը և գործարկումը:

Առաջարկություն .....

Ռինդ համայնքի բյուջետային գործընթացի արդյունավետության բարձրացման, հարկերի հավաքման ցուցանիշի բարելավման արդյունքում 2008 թվականի տարեկան բյուջեի նախնական ցուցանիշների վերլուծությունը հնարավորություն է ընձեռում տեղական իշխանություններին 2.2 մլն դրամին համարժեք ֆինանսական միջոցներ նախատեսել վերոհիշյալ ծրագիրն իրականացնելու նպատակով: Նախատեսվում է պուրակի տարածքը ցանկապատել, անցկացնել ոռոգման ջրագիծ, անցուղիները խճապատել, տեղադրել նստարաններ և հիմնել ծառուղի: Ծառատունկը նախատեսվում է իրականացնել շուրջ 450 քմ տարածքի վրա:

Քվեարկության արդյունքները.

	Կողմ
Գյուղամիջյան և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում	37
Գերեզմանոցի համար հատկացված տարածքների պարսպապատում	0
Անասունների համար խմելու ջրի տաշտամանների տեղադրում	1
Մանկապարտեզի կահավորում	23
Մշակույթի տան ներքին հարդարում	3
Զբոսայգու և հանգստի գոտու կառուցում	45
Ընդամենը	109

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համահամայնքային քննարկման արդյունքները և համայնքի բյուջեն

2008թ. փետրվարի 6–ին հաստատվեց Ռինդ գյուղական համայնքի 2008 թվականի տարեկան բյուջեն: Ինչպես նշված է ավագանու նիստի արձանագրության քաղվածքում. «Մասնակիորեն հաշվի առնելով 2007 թվականի դեկտեմբերի 8-ին Ռինդ համայնքում Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից անցկացված համահամայնքային քննարկման արդյունքում համայնքի բնակիչների կարծիքը՝ համայնքի ավագանին որոշեց 2008 թվականի ֆոնդային բյուջեի «Կապիտալ ծախսեր» հոդվածից՝

– 450,0 հազ. դրամ հատկացնել համայնքի հանդամիջյան ճանապարհների բարեկարգմանը,
– 1445,0 հազ. դրամ հատկացնել համայնքի մշակույթի տան տանիքի կապիտալ վերանորոգմանը»:

Ինչպես երևում է առաջին հայացքից, քննարկման արդյունքները մասնակիորեն են հաշվի առնվել համայնքի ղեկավարության կողմից: Մասնավորապես անտեսվել է զբոսայգու օգտին քվեարկած առավելագույն ձայների քանակը:

Այժմ փորձենք մի փոքր ավելի խորն ուսումնասիրել արդյունքները: Համայնքային քննարկումը պարունակում է ոչ միայն քվեարկության արդյունքներ, այլև, և որ ամենակարևորն է, մարդկանց նախասիրությունների ու դիրքորոշման հետևում գտնվող փաստարկներ ու դրդապատճառներ՝ արտահայտված մտքերի տեսքով, որոնք քննարկումից անմիջապես հետո ամփոփվում և տրամադրվում են որոշում կայացնողներին: Քննարկումների ընթացքում հնչած մտքերին կարող եք ծանոթանալ *հավելված 1-ում:* Այսպիսով, յուրաքանչյուր քննարկում իր մեջ պարունակում է ոչ միայն քանակական տվյալներ՝ քվեարկության տեսքով, այլև փաստարկներ, նախապատվություններ, բացատրություններ, առաջարկություններ, խորհուրդներ և այն ամենը, ինչ մարդիկ արտահայտել են քննարկման արդյունքում: Ամեն դեպքում, քանի որ այս որոշումը բացառիկ է, և փորձը ցույց է տվել, որ քվեարկության արդյունքները սովորաբար հաշվի են առնվում բյուջեում, փորձենք գտնել այլ բացատրություններ:

Մշակույթի տան վերանորոգման համար հատկացված միջոցները՝ 1.5 մլն դրամը և համայնքային քննարկման «մշակույթի տան վերանորոգման սցենարը» միմյանց չեն համապատասխանում: Խնդիրը նրանում է, որ բնակչության համեմատաբար նվազագույն աջակցություն ստացած ծրագիրը՝ մշակույթի տան վերանորոգումը, յուրօրինակ աջակցություն է ստացել արտաքին աղբյուրներից՝ 27 միլիոն դրամ, և համայնքը պարտավորվել է սեփական ներդրում կատարել 1.5 մլն դրամի չափով: Այսպիսով, համայնքային քննարկմանը մասնակցած բնակչության ձայնը «լսելի չի դարձել», արտաքին միջամտության և աջակցության պատճառով: Հայաստանում համայնքներին աջակցության նման մեխանիզմը տարածված է և էականորեն ազդում է համայնքի նախասիրությունների վրա: Փորձ չենք անի գնահատել նման մեխանիզմներով համայնքի որոշումների վրա ազդեցության արդյունավետությունը, քանի որ մեր օրինակում բացակայել է «1.5+27» միլիոն դրամ սցենարի ծրագիրը, և մարդիկ այն չեն քննարկել:

Վստահության գործոնը

Համահամայնքային քննարկման մեխանիզմով մասնակցային կառավարման իրականացման արդյունքներից մեկը համարվում է տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության միջև կապերի ամրապնդումն ու փոխադարձ վստահության բարձրացումը: Սրան հասնելու համար, իհարկե, անհրաժեշտ են մի շարք քայլեր, ինչպիսիք են

բնակչության առաջարկները լսելը, դրանք կյանքի կոչելը և այդ ամենի ընթացքում արդյունավետ հաղորդակցվելը՝ տեղեկատվությամբ կիսվելը:

Ռինդ համայնքի ղեկավարը նշում է. «Նախ առաջին անգամ էր նման հանդիպում կազմակերպվում: Բնականաբար մեզ համար էլ էր անսպասելի, բնակչության համար էլ. կարծես թերահավատություն կար, թվում էր՝ ձևական բնույթ է կրելու: Թեպետ հետո մեկ ուրիշ խնդիր էլ առաջ եկավ. չկարողացանք իրականություն դարձնել բնակիչների որոշումը: Դա էլ վատ էր իհարկե, որոշեցինք, բայց չարեցինք փաստորեն: Եվ դա վատ անդրադարձավ: Բայց, անշուշտ, ես կողմնակից եմ նման քննարկումներին, հանդիպումներին: Ինձ, օրինակ, շատ-շատ օգնեց: Այն նաև ուղեցույց էր ինձ համար»:

Դե ինչ, կարող ենք արձանագրել, որ.

– քննարկումից առաջ առկա էր թերահավատություն, ինչպես ՏԻՄ ղեկավարության, այնպես էլ բնակչության մոտ,
– թերահավատության խորացման առումով բացասաբար ազդեց այն, որ բնակչության ցանկությունը չիրագործվեց:

Սակայն.

– համայնքի ղեկավարը կողմնակից է այդ քննարկումների շարունակականությանը,
– քննարկումներն ուղղորդում են համայնքի ղեկավարին որոշումներ կայացնելու հարցում,
– համայնքի ղեկավարը գիտակցում է վստահության բարձրացման խնդիրը:

Ամփոփելով նշենք, որ նախ համայնքի ընդունված բյուջեում կայացված ընտրությունը, համաձայն համայնքի ղեկավարի, առավել օգտակար է եղել բնակչությանը և, հետո, բնակչության արտահայտած ցանկությունը կիրականացվի հետագայում: Այստեղ պետք է նշել կայացրած որոշումների շուրջ հաղորդակցության մասին, քանի որ խնդիրը երկկողմանի է: «Կայացրած որոշումն առավել օգտակար է բնակչության համար»-ը մի բան է, դրա մասին բնակչության տեղեկացվածության աստիճանը՝ մեկ այլ: Վերադառնալով համայնքային քննարկման և մասնակցային ժողովրդավարության գործընթացին՝ նշենք, որ այս դեպքում էլ են կարևորվում փոխադարձ խորհրդատվությունները և ինչ-որ ձևով կայացված որոշումների մասին փաստարկներով ու տեղեկատվությամբ հաղորդակցվելը:

Համահամայնքային քննարկումն ու հարկահավաքության գործընթացը

Համաձայն համայնքի ղեկավարի՝ պարզ չէ, թե արդյոք համայնքային քննարկումն ազդել է հարկերի հավաքագրման վրա: Ինչպես նշում է վերջինս, մարդիկ հետևյալ ձևով են մտածում. «Ծրագրերը անում են, ուրեմն պետք է արվի: հարկերը տանք էլ անելու են, չտանք էլ անելու են»: Ըստ էության գյուղի հիմնական ծրագրերն իրականացվել են արտաքին աջակցությամբ, և հարկատուների ներդրումը իրականում չնչին է եղել: Կարելի է ասել, որ մարդկանց նման մտածողությունը «արդարացված է»:

Եթե ամփոփենք մարդկանց նախապատվության, ինչպես նաև հարկերով ներդրումներ իրականացնելու նման մտածողության առկայությունը, ապա պետք է նշել, որ արտաքին աջակցության ծրագրերը պետք է չափազանց զգույշ մոտենան համայնքին և գիտակցեն, որ ոչ միայն ներդրումներ են կատարում համայնքում, այլև ազդում են մարդկանց ու համայնքում որոշումների կայացման մոդելի վրա՝ կարող են ինչպես մեծացնել այնպես էլ փոքրացնել ժողովրդավարության մակարդակը համայնքում: Այս խնդիրը լուծելու համար առաջարկվում է նման ծրագրերի պլանավորման, գերակայությունների ընտրության, ինչպես նաև որոշումների կայացման, իրականացման ու մոնիտորինգի հարցերին անդրադառնալիս առավելագույն չափով արդյունավետ հաղորդակցվել համայնքի բնակչության հետ և դա իրագործել մասնակցային մեխանիզմների միջոցով:

Ռինդ համայնքում հարկերի հավաքագրման և ապառքների դինամիկան հետևյալն է:





Ինչպես երևում է գրաֆիկներից, 2008 թվականին էականորեն աճել են հավաքագրված հարկերը, ինչպես նաև նվազել են ապառքների քանա-

կը: Դժվար է գնահատել համահամայնքային քննարկման ազդեցության աստիճանը, սակայն կարելի է փաստել, որ Ռինդ համայնքի բնակիչների մոտ 2008 թվականին աճել է հարկային պատասխանատվության գիտակցության աստիճանը:

«Ես մասն եմ համայնքի»

Համաձայն համայնքի ղեկավարի՝ Ռինդի բնակչության շրջանում էական բաժանարար գծեր չկան: Այսինքն, այս համայնքում ընդհանուր շահից բխող ծրագրեր անելու հավանականությունը համեմատաբար մեծ է: Ընդհանրապես, ցանկացած համայնք էականորեն զարգացում կապրի, երբ համայնքի անդամները միմյանց ընկալեն որպես մեկ համայնքի մասնիկներ, գիտակցեն ընդհանուր խնդիրների առկայությունն ու համատեղ ուժերով լուծեն դրանք: Ամեն դեպքում, ինչպես նշում են համայնքային քննարկումների սեղանավարներից շատերը, Ռինդ համայնքի քննարկումները մյուսներից հիմնականում տարբերվել են համեմատաբար երիտասարդ բնակչության առավել ակտիվ մասնակցությամբ: Թերևս սա էլ իր դերն է ունեցել զբոսայգուն նախապատվություն տալու գործում, որի իրագործումը, վերոնշյալ գործոններից ելնելով, ժամանակավորապես «հետաձգվել է»: Այսինքն, եթե ամփոփենք, որ Ռինդ համայնքում «հարուստ/աղքատ», «մտավորական/հասարակ գյուղացի» և այլ բաժանարար գծեր չկան, ապա «ահել/ջահել» բաժանումը առկա է: Այստեղ արդեն առնչվում ենք մասնակցային ժողովրդավարության իրագործման երիտասարդներին վերաբերվող նոր խնդիրների, որոնց լուծումը դեռևս առջևում է:

Համայնքի ղեկավարը ողջունում է մասնակիցներին:
Քննարկումը սկսված է:

Ես մասն եմ համայնքի...

Տեղական ՀԿ ներկայացուցիչների ստացած հմտությունները՝ կիրառության մեջ:

Քվեարկություն...

ՀԱՄԱՅՆՔ՝ **ՄԱՐԳԱՀՈՎԻՏ**

Մարզ՝ Լոռի

Տեղական ՀԿ՝ «Զարգացում հանուն քաղաքացիական հասարակության»

Մարգահովիտ համայնքի 2008 թվականի բյուջեում ներառելու առաջարկով քննարկման դրված սցենարները.

1. *գյուղամիջյան ճանապարհների բարեկարգում,*
2. *մարզադպրոցի համար շենքի ձեռքբերում,*
3. *մանկապարտեզի շենքի հիմնանորոգում,*
4. *մշակույթի տան հիմնանորոգում:*

Սցենարները՝ հակիրճ

1. Գյուղամիջյան ճանապարհների բարեկարգում

Խնդիրը.....

Մարգահովիտ գյուղական համայնքում առկա են ներհամայնքային նշանակության 50կմ ճանապարհներ: Ասֆալտի ծածկույթ չունեցող գրունտային այս ճանապարհները լուրջ խոչընդոտ են հանդիսանում համայնքի տնտեսական զարգացման և բնակչության տեղաշարժի համար: Դրանք կիսաքանդ են, բազմաթիվ մեծ ու փոքր ակոսներով: Ամռանը դառնում են փոշու աղբյուր, ձմեռվա ձնից ու սառույցից մաքրելը գրեթե անհնար է: Մինչդեռ նշված ճանապարհներից մի քանիսը կապում են գյուղը մարզկենտրոն և հարևան համայնքներ տանող հիմնական մայրուղու հետ: Դրանց վրա են գտնվում համայնքի բազմաթիվ բնակելի տներից բացի գյուղի դպրոցն ու մանկապարտեզը:

Առաջարկություն.....

Մինչ գյուղի ճանապարհները համապետական ծրագրերի շրջանակներում հիմնանորոգելու և ասֆալտապատելու հնարավորության փնտրտուքը, անհրաժեշտություն է առաջացել կատարելու դրանցից մի մասի, ընդհանուր առմամբ մինչև 10 կմ երկարությամբ ճանապարհների, վերանորոգում և հարթեցում: Համայնքի բյուջետային գործընթացի արդյունավետության բարձ-

ռացման, հարկերի հավաքագրման ցուցանիշի բարելավման շնորհիվ համայնքի 2008թ տարեկան բյուջեի նախնական ցուցանիշների վերլուծությունը հնարավորություն է ընձեռում տեղական իշխանություններին շուրջ 5 մլն դրամ նախատեսել գյուղամիջյան կենտրոնական՝ դպրոց ու մանկապարտեզ տանող ճանապարհները բարեկարգելու, հարթեցնելու և անձրևի ու ձյան հալոցքի ջրերի հեռացումն ապահովելու նպատակով ճանապարհների երկայնքով կողային առուներ բացելու աշխատանքներն իրականացնելու համար:

2. Մարզադպրոցի համար շենքի ձեռքբերում

Խնդիրը.....

Մարգահովիտը մարզական հարուստ ավանդույթներ ունեցող համայնք է: Գյուղի երիտասարդներից շատերը լրացրել են հանրապետության առաջատար մարզիկների, ԽՍՀՄ առաջնությունների մրցանակակիրների շարքերը:

Ներկա ֆինանսական սուղ պայմաններում էլ համայնքը փորձում է շարունակել սպորտային ավանդույթները: Գյուղում այժմ գործում են «կյոկուսինկայ» կարատեյի մեկ և ազատ ոճի ըմբշամարտի երեք խմբակներ: Մարզական ակումբի բացակայության պայմաններում խմբակների պարապմունքներն անցկացնելու համար օգտագործվում են գյուղի դպրոցի նիստերի դահլիճն ու մարզադահլիճը: Սակայն դրանց հնարավորությունները խիստ սահմանափակ են թե՛ տարածքի, թե՛ մարզումների կանոնավորության և հիգիենիայի ապահովման տեսանկյուններից:

Երեխաների ազատ ժամանակն արդյունավետորեն կազմակերպելու, առողջությունն ու ֆիզիկական պատրաստվածությունը բարելավելու, համայնքի սպորտային հին ու գեղեցիկ ավանդույթները վերականգնելու նպատակով խիստ անհարժեշտություն է համայնքում մարզադպրոցի հիմնումը:

Առաջարկություն.....

2008 թվականի տարեկան բյուջեում առանձնացնել շուրջ 5 մլն դրամ և գնել համայնքում գտնվող Գուգարքի տարածքային սպառողական կոոպերատիվին պատկանող հանրախանութի շենքը, բանակցություններ սկսել պետական պատասխանատու մարմինների, պետական և միջազգային հիմնադրամների ու դոնոր կազմակերպությունների հետ՝ շենքը հիմնանորոգելու, մարզական գույք ու միջոցներ հայթայթելու ուղղությամբ:

3. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում

Խնդիրը.....

Մարգահովիտ գյուղում դեռևս խորհրդային կարգերի օրոք կառուցվեց ու գործարկվեց մանկապարտեզ շուրջ 200 երեխաների համար: Սոցիալ-տնտեսական ճգնաժամի տարիներին մանկապարտեզը գրեթե դադարեցրեց գործունեությունը: Միայն 2005 թվականին համայնքի իշխանությունների ջանքերով հնարավոր դարձավ մասնակիորեն վերականգնել մանկապարտեզի գործունեությունը: Ներկայում այն սպասարկում է շուրջ 40 երեխաների և աշխատանքով է ապահովում համայնքի 7 բնակիչների:

Սակայն առկա շենքային ու գույքային հնարավորությունները չեն բավարարում համայնքի իրական պահանջարկը: Այսօր գյուղում հաշվառվում են շուրջ 250 նախադպրոցական տարիքի երեխաներ:

Դեռևս 2007 թվականի ընթացքում իրականացվել են մանկապարտեզի շենքի հիմնանորոգման և ևս երկու խմբերի համար պայմանների ապահովման աշխատանքների նախագծա-նախահաշվային աշխատանքներ:

Առաջարկություն.....

Ըստ նախահաշվի՝ պահանջվելու է շուրջ 47 մլն դրամ ծրագիրն իրագործելու համար: ՀՀ կառավարության և Սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ վարած բանակցությունների արդյունքում հնարավորություն է ստեղծվել 2008 թվականին սկսել հիմնանորոգման աշխատանքները: Մինչդեռ ֆինանսավորումը ստանալու նպատակով անհրաժեշտ է ապահովել համայնքի սեփական ներդրումը՝ ծրագրի բյուջեի 10%-ի չափով՝ շուրջ 5 մլն դրամ՝ որպես սեփական ներդրում:

4. Մշակույթի տան հիմնանորոգում

Խնդիրը.....

Դեռևս 1970-ականներին Մարգահովիտ գյուղում կառուցվեց և շահագործման հանձնվեց մշակույթի տունը: Այն էական դերակատարում էր ունենում գյուղում մշակութային կյանքի, երիտասարդ սերնդի բազմակողմանի և առողջ զարգացման գործում: Դրանում գործում էին բազմաթիվ ստեղծագործական, մշակութային ու սպորտային խմբակներ, տեղակայված էին գրադարանն ու մշակույթի դպրոցը:

Ճիշտ է 90-ականների ճգնաժամի պայմաններում մշակույթի տունը

չմատնվեց անգործության, և մինչ այժմ էլ այնտեղ գործում են գրադարանն ու արվեստի դպրոցն իր երաժշտական, նկարչական և շախմատի դասարաններով, սակայն համապատասխան ֆինանսական միջոցների պակասի պատճառով շենքն ու գույքը էականորեն մաշվել են:

2007 թվականին «Շեն» կազմակերպության կողմից իրականացվեցին մշակույթի տան հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ, և ծրագիրը գնահատվեց շուրջ 300 մլն դրամ:

Առաջարկություն .....

Համայնքի իշխանությունների կողմից պետական պատասխանատու մարմինների և Սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ տարված աշխատանքների արդյունքում հնարավորություն է ստեղծվել ծրագրի իրագործման համար ստանալ համապատասխան ֆինանսավորում, պայմանով, որ համայնքը կունենա ներդրում՝ ծրագրի 10%-ի չափով: Բացի շուրջ 5 մլն դրամ կանխատեսվող միջոցներից նախատեսվում է նաև համայնքային սեփականության գույքի օտարման և համայնքի ազատ աշխատուժի ներգրավմամբ լրացնել պահանջվող 10 տոկոս մասնակցությունը:

Քվեարկության արդյունքները.

	Կողմ
Գյուղամիջյան ճանապարհների բարեկարգում	51
Մարզադպրոցի համար շենքի ձեռքբերում	27
Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում	11
Մշակույթի տան հիմնանորոգում	7
Ընդամենը	96

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համահամայնքային քննարկման արդյունքները և համայնքի բյուջեն

2008թ. հունվարի 18–ին հաստատվեց Մարգահովիտ գյուղական համայնքի 2008 թվականի տարեկան բյուջեն: Այս համայնքում մասնակիորեն հաշվի էր առնվել անցկացված համայնքային քննարկման արդյունքները և 2008 թվականի համար նախատեսվել էին հետևյալ կապիտալ ծախսերը.

– 3830,0 հազ. դրամ հատկացնել գյուղապետարանի շենքի կապիտալ

վերանորոգմանը,

– 46553,2 հազ. դրամ հատկացնել համայնքի մանկապարտեզի հիմնանորոգմանը:

Մարգահովիտի բյուջեի համահամայնքային քննարկումները բարդ քննարկումների շարքից էին, որովհետև այստեղ քննարկվող տարբերակները պարունակում են մի շարք պայմաններ: Առաջին հայացքից պարզ երևում է, որ հաստատված բյուջեն չի արտացոլում քվեարկության արդյունքները: Սակայն կան մի քանի կարևոր հանգամանքներ, որոնք պետք է հաշվի առնել: Այսպես, համայնքի բնակիչները հավաքվում են, արտահայտում են իրենց կարծիքները, տալիս իրենց նախապատվությունները, որոնք պարզապես ընդունելը դեռևս բավարար չէ: Ընդունելուց բացի պետք է այն իրագործել, կյանքի կոչել, բավարարել բնակիչների կարիքները: Այս երկընտրանքն ունի երկու լուծում. կամ նախօրոք սեղանին են դրվում մինիմալիստական սցենարներ, այնպես, որ ինչ էլ ընտրեն բնակիչները, գյուղապետարանը հետո այն կարող է ընդունել և կյանքի կոչել կամ դրվում են համայնքի կարիքներից բխող ծրագրեր, և գյուղը սկսում է այն քննարկել:

Մարգահովիտն ընտրել է երկրորդ ճանապարհը, և այս փորձը ցույց է տալիս, որ այն առավելություններ ունի: Նախ և առաջ կարևոր է, որ քննարկումների ժամանակ վերլուծվեն ոչ միայն համայնքի բնակիչների ցանկությունները, այլև դրանց իրագործման հնարավորությունները: Այսպես, եթե դիտարկենք քննարկման արդյունքները, կտեսնենք, որ ճանապարհների վերանորոգումն ու մարզադպրոցի հիմնումը թեպետ կարևորվում են, սակայն նշվում է. «…եթե իհարկե հնարավոր լինի իրագործել» արտահայտությունը: Ավելին, համայնքի ղեկավարի հետ հարցազրույցում վերջինս նշում է. «Ճանապարհները բարեկարգել ենք, բայց ասֆալտապատել բացառվում է: Ես էլ կցանկանայի այնքան փող ունենայինք, որ ասֆալտապատեինք. դա իրենք որ ասում են, մի քիչ ցանկությունների հարց է: Եղել է այդ հարցը, իրենց հետ քննարկել ենք, էլի բաց ենք քննարկել, մարզպետն էլ է եկել փոխմարզպետի հետ, ժողովրդի հետ քննարկել ենք: Նրանք էլ էին ասում ասֆալտենք, բայց քանի կմ էին ասֆալտելու: Ասացին այդքան գումարին կարող ենք 500մ ասֆալտապատել, բայց 500 մետրը այս մեծ գյուղում ինչ հարց կլուծի: Այդ մարդիկ ինչ կմտածեն, այդ փողերը փոշիացրինք: Իրենցից շատ ես էլ եմ կողմ ասֆալտապատելուն: Բայց ինչու՞ չեմ բարձրաձայնում, որովհետև ես գիտեմ դրա գինը. մեր ուժերով դա անհնար է, իսկ պետությունից այդքան մեծ, ահռելի գումար բե-

րելը շատ դժվար է: Մշակույթի տան ծրագիրը 1 միլիոն դոլար է կազմել: Որ հիմնադրամի հետ խոսում ես, ասում են. «շատ է, պիտի մի երեք հիմնադրամ իրար միացնենք, մի 10 տոկոս էլ մենք տանք, որ կարողանանք անել»: Այսինքն այդ ցանկությունները շատ լավ է, ուղղակի հնարավորությունները պետք է համապատասխանեն դրանց»:

Կարիքների գնահատման մեթոդոլոգիան հաճախ քննադատվում է այն պարզ պատճառով, որ մարդկանց կարիքները կարող են շատ մեծ լինել, գերազանցել հնարավորությունների սահմանը, ու համայնքը, չհիմնավորված, ժամանակ ու ռեսուրսներ վատնի դրանց իրագործման վրա՝ փոխանակ իր հնարավորությունների սահմաններում զարգացնի համայնքը: Իսկ կյանքի փորձը վկայում է, որ սեփական ուժերին ապավինելու պրակտիկան երկարաժամկետ հատվածում միշտ էլ իրեն արդարացնում է:

Վստահության գործոնը

Մարգահովիտ համայնքի ղեկավարությունն, ըստ էության, լսել է իր բնակչության ձայնը և ցանկացել է այն իրագործել: Սակայն, գիտակցելով դրա անհնարինությունը՝ գնացել է երկրորդ լավագույն տարբերակով և սկսել մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները:

Նշենք, որ մոնիտորինգի նպատակով իրականացված այցելությունների ժամանակ պարզվել է, որ ճանապարհների մասնակի նորոգման աշխատանքներ կատարվել են, թեպետ բյուջեում միջոցներ նախատեսված չեն եղել:

Մյուս կողմից տեղին է անդրադառնալ գյուղապետարանի շենքի կապիտալ վերանորոգմանը բյուջեից հատկացված գումարների հարցին, մի բան, որ քննարկման չէր դրվել, թեպետ խնդիրը առկա է եղել: Մասնակցային ժողովրդավարություն չի նշանակում համայնքի ավագանուն և համայնքի ղեկավարին զրկել սեփական հայեցողությամբ որոշումների կայացման իրավունքից: Ի վերջո պատասխանատվությունն ամբողջությամբ նրանց վրա է: Այստեղ կրկին որոշումների կայացման գործընթացում արդյունավետ ու թափանցիկ հաղորդակցության խնդիր է առաջանում, երբ կայացրած որոշումների հիմնավորումները պետք է հստակ ներկայացվեն բնակչությանը: Համաձայն համայնքի ղեկավարի. «Ժողովուրդը տեղյակ է լինում, թե ինչպես են ծախսվում գումարները: Դա պարտադիր է: Եթե ուրիշ բան չլինի, թերթի միջոցով ենք կարողանում այդ մեծ գումարների մասին տեղեկացնել, բացի աշխատավարձը, մնացած գումարների մասին թերթով տեղեկացնում ենք: Այսինքն պարզ երևում է

ինչ նպատակով ինչ գումար ենք ծախսել: Երկու թերթով էլ լուսաբանվում է: Ճիշտ է ամիսը մեկ անգամ է լույս տեսնում, բայց միևնույնն է՝ այդ գումարներն էլ առանձնապես հաճախակի չեն ծախսվում, այնպես որ ժողովուրդն իրազեկվում է»:

Պետք է նշել, որ համայնքի ղեկավարի կողմից վստահություն ձևավորման կարևորության խնդիրը գիտակցվում է, և այդ առումով համայնքային քննարկման մոդելը լիարժեքորեն բավարարել է այս խնդիրը: Ամեն դեպքում համայնքը շարունակում է ակտիվ հաղորդակցության դաշտում ապավինել ավանդական՝ «դեմառդեմ» մեթոդներին, իսկ հաղորդակցության «զանգվածային» մեթոդը մնում է պասիվ՝ թերթում հայատարարություն տալու ձևը: Համայնքի ղեկավարը նշում է. «Երբ գնում ու մարդկանց հետ յուրաքանչյուր խնդրի շուրջ բաց խոսում ես, ցանկացած թեմայի շուրջ քննարկում անցկացնում, վստահությունը ավելանում է: Նրանք դրանից ոգևորվում են. Եկել ես իրենցից կարծիքներ ես լսում ու հաշվի առնում, ուրեմն, ինչպես ասում են, «մարդու տեղ ես դնում»:

Համահամայնքային քննարկումն ու հարկահավաքության գործընթացը

Փորձենք ներկայացնել մի պարզ սխեմա և դրա միջոցով քննարկել Մարգահովիտ համայնքի հարկերի հավաքագրման գործընթացը.



Այս շղթայաձև սխեման կարելի է պարզ նկարագրել համայնքի ղեկավարի խոսքերով. «Երբ բնակիչները տեսնում են իրենց համար գործ ես անում, ավելի պատրաստակամ են դառնում: Այսինքն, դու ասում ես այս մի գործը արվեց, բայց այս մյուսը մնում է, պետք է հարկերը լավ վճարեք,

այդ գումարը այդտեղից է գոյանալու: Տարեց տարի վրա զգացվում է, որ կա տեղաշարժ: Իսկ եթե գյուղապետարանը ոչ մի գործ չանի, բնակիչն ինչ պիտի ասի.«Փողը տալիս եմ, տանում եք, ձեր համար աշխատավարձ եք ստանում, ձեր տուն գնում: Ես վճարեմ, դուք աշխատավարձ ստանաք»: Այս պարագայում հարկերի հավաքելիությունը կիջնի»: Փաստորեն համայնքի ղեկավարը ներկայացնում է ոչ միայն վստահության սխեման, այլև հնարավոր անվստահության առաջացման վտանգը: Միևնույն ժամանակ գիտակցվում է ժամանակի գործոնը, այն, որ վստահությունը և հարկերի հավաքագրումը փոխադարձաբար բարելավվում է տարիների ընթացքում:

Մարգահովիտ համայնքում հարկերի հավաքագրման և ապառքների դինամիկան հետևյալն է:





Հստակ երևում է, որ 2008 թվականին ոչ միայն էականորեն աճել են հավաքագրված հարկերը, այլ նաև էականորեն նվազել են ապառքները:

«Ես մասն եմ համայնքի»

Մարգահովիտ գյուղում ընդհանուր շահի համար համատեղ ջանքեր ներդնելը կարևորվում է: Մասնավորապես, համայնքի ղեկավարի կողմից նշվում է. «Չէ, մեր գյուղը Երևանի կամ որևէ մեծ քաղաքի նման չի: Այդպիսի բաժանումներ չկան, ասենք շաբաթօրյակ ենք անում, մեկ մարդու նման տեսնում ես կանգնած են, տանից կարող է մի մարդ է գալիս, կամ երկու, կարող է մեկն էլ չի գալիս, բայց գիտես, որ այդ օրը զբաղված է, սակայն միևնույն է՝ մասնակցում են: Եթե ընդհանուր գործեր լինեն, էլի կանեն, պատրաստակամ են»:

Թերևս Մարգահովիտի փորձի յուրահատկությունը կայանում է նրանում, որ համայնքի ղեկավարությունն ի վիճակի է եղել բարդ և որոշ գոր-

ծոններով պայմանավորված սցենարներ քննարկել բնակչության հետ, հետագայում դրանց իրագործման հնարավորությունը բանակցել տարբեր դոնորների, ՀՀ Կառավարության ու այլ միջազգային կառույցների հետ և ընտրել հնարավոր տարբերակներից ամենացանկալին:

Մյուս խնդիրը, որը ցայտուն է Մարգահովիտում և կարող է առաջանալ այլ համայնքներում, երկարաժամկետ ծրագրերի պլանավորման ու իրագործման խնդիրն է: Մարզադպրոցի շենքի ձեռքբերումը, հիմնանորոգումը, գույքի ձեռքբերումը պահանջում են երկար ժամանակ ու մեծ միջոցներ: Նման ծրագրերի մասնակցային ժողովրդավարության մեխանիզմներով իրագործման հաջողված փորձ դեռևս չկա, թեպետ Մարգահովիտի դեպքը ցույց է տալիս, որ նման ծրագրերը կարելի է քննարկել համայնքի բնակչության հետ, սակայն պարզ չի, թե ինչ անել հետո:

Համայնքի խնդրները հավասարապես հուզում են և՛ մեծահասակներին, և՛ երիտասարդներին:

Կարծիքները կիսվում են...

ՀԱՄԱՅՆՔ՝	ՀԱՑԻԿ
Մարզ՝	Շիրակ
Տեղական ՀԿ՝	«Համայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոն»

Հացիկ համայնքի 2008 թվականի բյուջեում ներառելու առաջարկով քննարկման դրված սցենարները.

1. *գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում,*
2. *գերեզմանոցի համար հատկացված տարածքների պարսպապատում,*
3. *խմելու ջրի ջրամբարի վերանորոգում,*
4. *մանկապարտեզի համար նոր շենքի ձեռքբերում,*

Սցենարները՝ հակիրճ

1. Գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում

Խնդիրը.....

Հացիկ գյուղական համայնքում, բացի գյուղի հիմնական զարկերակը համարվող մարզկենտրոնին կապող կենտրոնական ճանապարհից, առկա են ներհամայնքային նշանակության 18կմ երկարությամբ ճանապարհներ: Ասֆալտի ծածկույթ չունեցող այդ գրունտային ճանապարհները լուրջ խոչընդոտ են հանդիսանում համայնքի տնտեսական զարգացման և բնակչության տեղաշարժի համար, քանի որ կիսաքանդ են, բազմաթիվ մեծ ու փոքր ակոսներով:

Առաջարկությունը.....

Առաջարկվում է 2008 թվականին իրականացնել ներհամայնքային նշանակության 10կմ երկարության ճանապարհների հարթեցում և խճապատում: Համայնքի 2008թ. տարեկան բյուջեում անհրաժեշտ է առանձնացնել 2.0 մլն դրամ վերոհիշյալ ծրագիրն իրականացնելու համար: Բացի հարթեցումից և խճապատումից՝ նախատեսվում է նաև ճանապարհների երկայնքով բացել կողային առուներ անձրևաջրերի և ձյան հալոցքից առաջացող ջրերի հեռա-

ցումն ապահովելու համար:

2. Գերեզմանոցի համար հատկացված տարածքների պարսպապատում

Խնդիրը.....

Շիրակի մարզի Հացիկ գյուղը հիմնադրվել է 1810 թվականին և ունի հարուստ պատմություն: Պատմության մի հատվածն էլ, 200 տարվա ժամանակագրությամբ, իր մեջ ամփոփում է գյուղի գերեզմանատունը: Ժամանակի ընթացքում գերեզմանոցին տրամադրված տարածքը հետզհետե ընդլայնվում է: Ներկայում այն զբաղեցնում է 3 հա տարածք, իսկ պարագիծը կազմում է շուրջ 1200մ:

Այսօր գերեզմանոցը տրորվում է անասունների կողմից, փլուզվում և քանդվում են հուշարձանաքարերն ու պաշտպանիչ եզրաքարերը:

2005թ. համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրականացվեց գերեզմանատան տարածքի շուրջ 80% -ի պարսպապատում: Ներկայում առաջացել է ցանցապատի վերանորոգման անհրաժեշտություն:

Առաջարկություն .....

Առաջարկվում է միջոցներ հատկացնել գերեզմանոցի տարածքի շուրջ 150 մ շրջագծի պարսպապատման համար: Նախնական հաշվարկներով ծրագրի իրականացնումը կպահանջի շուրջ 500 հազար ՀՀ դրամի ներդրում:

3. Խմելու ջրի ջրամբարի վերանորոգում

Խնդիրը.....

Հացիկ համայնքի խմելու ջրի մատակարարման ներտնտեսային ցանցն ու ջրամբարը կառուցվել են 1970 թվականին: Համակարգը ներկայում խմելու ջրով է ապահովում գյուղի շուրջ 1200 բնակչությանը՝ ավելի քան 315 տնտեսություններին:

Չնայած համայնքի իշխանությունների կողմից պարբերաբար իրականացվող վերանորոգման աշխատանքներին՝ համայնքի ջրամատակարարման համակարգը գտնվում է վատթար վիճակում, զգալի են կորուստները, հաճախակի են վթարները: Մասնավորապես, 2007 թվականի մայիս ամսին փլուզվեց խմելու ջրամբարի մի մասը: Այն մինչ օրս չի վերանորոգվել, ինչը լուրջ խնդիր կարող է առաջացնել համայնքի համար: Խմելու ջրի ջրամբարը սնվում

է Ղուկասյանի տարածաշրջանի Ղազանչի ավազանից եկող ջրագծից, և մայր գծից ջրամատակարարման ժամանակավոր դադարեցման դեպքում այն ի վիճակի է 2 օր ինքնուրույն համայնքն ապահովել ջրով:

Առաջարկություն .....

Ներկայում համայնքի իշխանությունների կողմից ակտիվ աշխատանքներ են իրականացվում համապետական ծրագրերի շրջանակներում ջրամբարը կապիտալ վերանորոգելու և նորացնելու ուղղությամբ: Այնուամենայնիվ համայնքի անխափան ջրամատակարարումն ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է մասնակի վերանորոգմամբ վերականգնել ջրամբարի փլուզված մասը:

Անհրաժեշտ է շուրջ 3,0 մլն ՀՀ դրամ նախատեսել համայնքի տարեկան բյուջեում ջրամբարը վերանորոգելու նպատակով:

4. Մանկապարտեզի համար նոր շենքի ձեռքբերում

Խնդիրը.....

Դեռ 70-ականներին Հացիկ գյուղում հիմնվեց և մինչև 1988 թվականը գործում էր շուրջ 60 երեխաների համար նախատեսված մանկապարտեզ: Այն աշխատանքով էր ապահովում գյուղի 10 բնակիչների: 88-ի դեկտեմբերյան արհավիրքը ավերեց նաև Հացիկ գյուղի մանկապարտեզը՝ համայնքի երեխաներին զրկելով նախադպրոցական կրթության և դաստիարակության այս կարևորագույն հիմնարկի ծառայություններից:

Երկրաշարժի հետևանքների վերացման ՀԽՍՀ պետական ծրագրի շրջանակներում նախագծվեց և մեկնարկեցին նոր մանկապարտեզի շինարարության աշխատանքները: Սակայն 90-ականներին սոցիալական և տնտեսական ճգնաժամի պայմաններում մանկապարտեզի կառուցումը ձգձգվեց և վերջնականորեն դադարեց: Ժամանակի ընթացքում կիսակառույցի շինհրապարակը, գտնվելով փոսի մեջ, ամբողջությամբ լցվեց ջրով, ինչի արդյունքում նույն հիմքի վրա մանկապարտեզի շենքի կառուցումը դարձավ աննպատակահարմար:

Հացիկ գյուղական համայնքում ներկայում հաշվառվում են շուրջ 40 մսուրային և նախադպրոցական տարիքի երեխաներ: Ակնհայտ է, որ համայնքում մանկապարտեզ ունենալը խիստ անհրաժեշտություն է ինչպես երիտասարդ ընտանիքների սոցիալական հոգսը թեթևացնելու, այնպես էլ մատաղ սերնդի կրթությունը կազմակերպելու տեսանկյուններից:

Առաջարկություն .....

Նպատակ ունենալով լուծելու համայնքային նշանակության այս խնդիրը՝ համայնքի իշխանությունները մանկապարտեզի նոր շենք կառուցելու փոխարեն առավել նպատակահարմար են գտնում ձեռքբերել համայնքում առկա պատրաստի շինություններից մեկը և այն վերակառուցել որպես մանկապարտեզ: Միևնույն ժամանակ, համայնքային գույքի արդյունավետ կառավարման տեսանկյունից առաջարկվում է օտարել մանկապարտեզի համար նախատեսվող կիսակառույցը, իսկ օտարումից ստացված եկամուտը ներդնել նոր շենքի ձեռքբերման գործում: Հացիկ համայնքի 2008թ-ի տարեկան բյուջեում անհրաժեշտ է նախատեսել շուրջ 4,0 մլն դրամ մանկապարտեզի նոր շինություն ձեռքբերելու նպատակով:

Քվեարկության արդյունքները

	Կողմ
Գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում	47
Գերեզմանոցի համար հատկացված տարածքների պարսպապատում	2
Խմելու ջրի ջրամբարի վերանորոգում	24
Մանկապարտեզի համար նոր շենքի ձեռքբերում	20
Ընդամենը	93

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համահամայնքային քննարկման արդյունքները և համայնքի բյուջեն

Հացիկ համայնքի 2008 թվականի բյուջեում ամրագրվել են հետևյալ ծախսերը.

– 399,5 հազար դրամ հատկացնել Հացիկ համայնքի գյուղամիջյան ճանապարհների բարեկարգմանը,
– 143,1 հազար դրամ հատկացնել համայնքի ջրագծի գերեզմանների տարածքով անցնող հատվածի վերամոնտաժմանը,
– 500,0 հազար դրամ հատկացնել KFW–ի ֆինանսական աջակցությամբ իրականացվող Հացիկի ջրամբարի կառուցմանը:

Հաստատված բյուջեն ամբողջությամբ արտացոլում է համահա-

մայնքային քննարկման, ինչպես նաև քվեարկության արդյունքները: Փաստորեն Հացիկ համայնքի դեպքն ամբողջությամբ հաստատում է մասնակցային ժողովրդավարության արդյունավետությունը համայնքի տարեկան բյուջեի նախագծի կազմման և հաստատման գործընթացում: Հացիկ համայնքի մոնիտորինգի արդյունքում բացահայտվել են նոր մի քանի հետաքրքիր փաստեր: Նախ, տարեկան բյուջեն հաստատելու համար հրավիրված ավագանու նիստում որևէ առարկություն չի եղել բնակչության արտահայտած տեսակետների ու նախապատվությունների շուրջ և պարզապես որոշվել է բյուջեում ընդգրկել բնակչության ցանկությունը: Ավելին, ընդգրկվել է միանգամից 2 ցանկություն՝ ճանապարհների բարեկարգումը և ջրամբարի վերանորոգումը: Ընդ որում, քանի որ համայնքը կարողացել է գերմանական ծրագրով շահել ջրամբարի կառուցման ծրագիր, ապա բյուջեում արտացոլված է միայն համայնքի ծրագրի մասնակցության գումարը: Այստեղ տեղին է նշել այն կարևոր հանգամանքը, որ փաստորեն արտաքին օժանդակությամբ իրականացվող ծրագիրն ամբողջությամբ համընկել է բնակչության արտահայտած ցանկությունների հետ. մի բան, որ ոչ բոլոր համայնքներում է արձանագրվել: Իսկ արտասահմանյան կազմակերպության օժանդակությամբ իրագործվող ծրագիրը հնարավորություն է տվել համայնքին ուղղել ազատ միջոցները նոր ջրագծի կառուցմանը:

Վստահության գործոնը

Հացիկ համայնքում բնակչության վստահությունը համայնքի ղեկավարության հանդեպ պետք է որ բավականին բարձր լինի, քանի որ բնակչությանը ներգրավել են բյուջեի կարևոր ծախսերի քննարկմանը, քննարկման արդյունքները հաշվի են առել ու ներառել համայնքի բյուջեում, կարողացել են արտաքին միջոցներ ներգրավել ու առավել մեծ ծրագիր իրագործել գյուղի հիմնախնդրի՝ խմելու ջրի հարցը լուծելու համար, արդյունքում ազատվել են լրացուցիչ միջոցներ և կառուցվել է նոր ջրագիծ, ինչի շնորհիվ նվազեցվել է ջրի աղտոտվելու վտանգը:

Թվարկումն իսկապես տպավորիչ է, քանի որ, հետևելով Հացիկ համայնքի կառավարման ընթացքին՝ պետք է նշել, որ իրականում ավելին է արվել, ինչը կարևոր է ընդհանուր վստահության մթնոլորտում համայնքի հետագա աշխատանքներ վարելու և համայնքը զարգացնելու համար:

Քննարկման ընթացքում բնակչությունը նշում էր, որ, թեպետ ջրամբարի դերը կարևոր է, սակայն փլուզված պատի վերականգնումն անիմաստ

է և պետք է ավելի լուրջ աշխատանքներ իրականացնել: Արդյունքում ջրամբարն ամբողջությամբ կառուցվելու է, և ինչպես նշում է համայնքի ղեկավարը.«եվրոստանդարտով՝ ցանկապատով, լուսավորությամբ և պահակակետով»:

Քննարկման ընթացքում համայնքի բնակչությունը նաև շեշտել և քվեարկել է մանկապարտեզի նոր շենքի ձեռքբերման սցենարի օգտին: Արդյունքում, համայնքի ղեկավարի հերթական ընտրություններում վերջինիս վերընտրվելուց հետո համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրում ընդգրկվել է մանկապարտեզի նոր շենքի ձեռքբերման կամ կառուցման ծրագիրը:

Վստահության ստեղծման հաջորդ նախապայմանը արդյունավետ հաղորդակցությունն է: Մեջբերենք համայնքի ղեկավարի կողմից տրված խոստումը՝ ակնկալելով, որ այն կիրագործվի ու դրական հետևանքներ կունենա. «Մարդիկ արդեն կարծես թե համայնքի ֆինանսներին ծանոթացել են՝ թե ծախսերին, թե եկամտային մասին: Համայնքում ժողով եմ հրավիրելու ու ներկայացնելու եմ, թե իրենից ինչ է ներկայացնում գյուղապետարանը, որովհետև մարդիկ մինչև հիմա չգիտեն գումարը որտեղից է գոյանում, աշխատավարձը որտեղից է վճարվում: Կարելի է ասել շուրջ 80 տոկոսը չգիտեն, թե համայնքն ինչպես է աշխատում: Պետք է ներկայացնել գյուղապետարանի գործունեության հիմնական նպատակները, և թե ինչ է իրենից ներկայացնում այս կառույցը»:

Հացիկ համայնքում ակտիվ դերակատարում ունի ավագանին, որին պարբերաբար հաշվետու է լինում համայնքի ղեկավարը: Համայնքում առկա է նաև հայտարարությունների տախտակ, որտեղ համայնքի հետ կապված հաղորդագրություններ են հրապարակվում:

Համահամայնքային քննարկումն ու հարկահավաքության գործընթացը

Գյուղապետարանը նշում է, որ քննարկումներից հետո նկատվել է միտում, երբ մարդիկ ինքնուրույն են գալիս ու ցանկանում վճարել հարկերը: Ընդհանրապես հարկերի վճարման գործընթացը ոչ միայն պարզապես գործողություն է, այլ նաև վերաբերմունք: Այս համայնքում բնակչության անդամները հստակ տեղեկանում են, թե որքան հարկեր են հավաքվել, որքան են պարտքերը, տույժերը, տուգանքները: Մարդկանց տրամադրվում են ամսական և եռամսյակային ծանուցագրեր:

Հետաքրքիր է, որ հարկահավաքման խնդիրը սկսվեց քննարկվել նաև Հացիկի համահամայնքային քննարկման ժամանակ: Քննարկումներից

պարզ է դառնում, որ խնդիրն ավելի շուտ նախկին տարիների կուտակած պարտքերն են, ոչ թե ընթացիկ հարկերը: Գյուղում ձևավորվող եկամուտն հիմնականում կախված է գյուղատնտեսությունից, և հարկերի հավաքման մակարդակն ավելի շուտ կախված է մարդկանց հավաքած բերքից՝ եկամուտից: Տեսնենք, թե ինչպես է եղել հարկերի հավաքման դինամիկան:





2008 թվականին հարկերի հավաքագրումն իրոք էականորեն աճել է: Թեպետ միևնույն ժամանակ աճել են ապառքների չափը:

«Ես մասն եմ համայնքի»

– Հացիկ համայնքի բնակչության շուրջ 60 տոկոսն ունի բարձրագույն կրթություն, և գյուղն այժմ 70-ից ավելի ուսանողներ ունի,– նշում է համայնքի ղեկավարը: Սա գյուղի համար մի կողմից մեծ առավելություն է, իսկ մյուս կողմից՝ կորցրած հնարավորություն, քանի որ այդ գիտելիքները ռեալիզացնելու տեղ չկա: Գյուղը դեռևս լիարժեք չի հարմարվել շուկայական հարաբերությունների խաղի կանոններին:

Ինչպես նշում է համայնքի ղեկավարը, գյուղում հայտնվել են ֆերմերներ և աշխատողներ, սակայն հաճախ մարդիկ «ամաչում են» գնալ ուրիշի մոտ աշխատել: Սա թերևս ժամանակի հետ լուծելի խնդիր է, և շուկան գուցեև լուծի այս խնդիրը: Սակայն, քանի որ Հացիկ գյուղի հիմնական եկամուտներն ապահովում է գյուղատնտեսության ոլորտը, և արտագնա աշխատողների քանակն էլ չնչին է, ապա հարց է ծագում, թե ինչպիսի՞ն են տնտեսական հարաբերությունների դաշտում հնարավոր համայնքային լուծումները: Չէ՞ որ տնտեսական դաշտում էլ կան ընդհանուր խնդիրներ. թեպետ սեփականատերերը տարբեր են: Պարզվում է, որ այս խնդիրները

դեռևս լուծված չեն. յուրաքանչյուր ֆերմեր առանձին գնում է սերմացուն, առանձին է պատվիրում տեխնիկա և այլն: Թեպետ պետք է նշել որոշակի տեղաշարժերի մասին, օրինակ՝ տրակտորն այլևս կենտրոնական փողոց չի մտնում, որպեսզի չվնասի այն, աղբահանությունը կանոնակարգվել է:

Ինչպես տեսնում ենք, Հացիկ գյուղում համայնքային ու գործարար հարաբերությունների կանոնակարգման՝ ընդհանուր շահին ուղղված լուծումներ գտնելու խնդիր կա, որ հետագայում պետք է իր լուծումն ստանա: Եվ եթե համայնքի բյուջեով իրականացվող ծրագրերի հանդեպ որոշ վստահության ծիլեր են ի հայտ եկել, ապա ընդհանուր առմամբ դեռևս բնակչության մոտ առկա է հուսախաբության, միմյանց կամ այլ ծրագրերին չվստահելու խնդիր: Իսկ իրականում այս համայնքում մեծ ներուժ կա հետագա այլ համընդհանուր խնդիրներ համատեղ քննարկելու և լուծելու համար:

Քննարկման ընթացակարգի ներկայացում:

Համայնքի ղեկավարը հավասար ձայնի իրավունքով մասնակցում է քվեարկությանը:

ՀԱՄԱՅՆՔ՝ **ԱՉԱՋՈՒՐ**

Մարզ՝ Տավուշ
Տեղական ՀԿ՝ «Նվաճում»

Աչաջուր համայնքի 2008 թվականի բյուջեում ներառելու առաջարկով քննարկման դրված սցենարները.

1. *մանկապարտեզի համար գույքի ձեռքբերում,*
2. *գյուղամիջյան ճանապարհների բարեկարգում,*
3. *գերեզմանոցի համար հատկացված տարածքների պարսպապատում,*
4. *խմելու ջրի ջրագծերի վերակառուցում:*

Սցենարները՝ հակիրճ

1. Մանկապարտեզի համար գույքի ձեռքբերում

Խնդիրը.....

Աչաջուր գյուղի մանկապարտեզը կառուցվել ու շահագործման էր հանձնվել 1976 թվականին և նախատեսված էր մսուրային և նախադպրոցական տարիքի ավելի քան 80 երեխաների համար: Մինչև 80-ականների վերջը մանկապարտեզը գործում էր իր նախատեսված հզորությամբ՝ լուծելով թե՛ մատաղ սերնդի դաստիարակության, թե՛ երիտասարդ ընտանիքների զարգացման և թե՛ սոցիալական որոշ խնդիրներ:

1988թ ավերիչ երկրաշարժի հետևանքով մանկապարտեզի շենքը զգալիորեն վնասվեց, իսկ վրա հասած սոցիալ-տնտեսական ճգնաժամն իր հերթին իր կործանարար ազդեցությունը թողեց մանկապարտեզի գործունեության վրա՝ ի վերջո, շահագործումից հանելով շենքը: Առանց այդ էլ զգալիորեն մաշված մանկապարտեզի գույքն անգործության շուրջ 15 տարիների ընթացքում դարձավ օգտագործման համար ոչ պիտանի:

Տեղական իշխանությունների ջանքերով հնարավոր դարձավ դպրոցի մասնաշենքերից մեկում վերսկսել մանկապարտեզի գործունեությունը: Ներկայում այն ծառայություններ է մատուցում գյուղի շուրջ 30 ընտանիքների 40 երեխաներին: Սակայն ստեղծված հնարավորությունները չեն բավարարում գյուղում տվյալ ծառայության հանդեպ առկա պահանջարկը:

Մասնավորապես, 2007 թվականի տվյալներով գյուղում հաշվառվում են շուրջ 70 նախադպրոցական տարիքի երեխաներ: Սակայն մանկապարտեզի այսօրվա արդյունավետ գործունեությունը կազմակերպելու համար, բացի տարածքի խնդրից, խիստ արդիական է գույքով ապահովելու և նորացնելու հարցը: Այսօր իսկ զգացվում է մահճակալների, սեղանների ու աթոռների խիստ կարիք: Գրեթե չկան երեխաների զվարճանքի, մտավոր զարգացման համար անհրաժեշտ խաղալիքներ և դիդակտիկ նյութեր, գրքեր և երեխաների դաստիարակության համար անհրաժեշտ ժամանակակից այլ պարագաներ:

Առաջարկություն .....

Աչաջուր համայնքի բյուջետային գործընթացի արդյունավետության բարձրացման, հարկերի հավաքագրման ցուցանիշի բարելավման շնորհիվ 2008թ տարեկան բյուջեում հնարավորություն է ստեղծվել առանձնացնել շուրջ 1.5 մլն դրամ՝ մանկապարտեզը նոր գույքով համալրելու համար:

2. Գյուղամիջյան ճանապարհների բարեկարգում

Խնդիրը.....

Աչաջուր գյուղը Հայաստանի ամենահին բնակատեղիներից մեկն է: Դրա մասին հիշատակվում է դեռևս 16-րդ դարի հիշատակարաններում: Գյուղի հնության մասին են վկայում ոչ միայն պատմության էջերն, այլև մինչև մեր օրերը գոյատևող պատմության ու մշակութային հուշարձաններն ու կոթողները: Գյուղից շուրջ 10 կմ հեռավորության վրա է գտնվում միջնադարյան հոյակերտ կոթողներից մեկը՝ Մակարավանքը, ինչի առկայությունը համայքնում տուրիզմի զարգացման լուրջ հեռանկար է խոստանում: Այդ նույն ուղղության վրա է գտնվում գյուղի հնագույն գերազմանատներից մեկը, որտեղ ամփոփված է համայնքի պատմության մի ողջ դարաշրջան:

Սակայն, վերջին տարիներին Մակարավանք հասնելը, անգամ գերեզմանոց այցելելը համայնքի բնակիչների համար դարձել է դժվարին խնդիր: Հիմնական խոչընդոտը, թերևս, ճանապարհներն են: Ինչպես ներհամայնքային մյուս ճանապարհները, Մակարավանք տանող երբեմնի ասֆալտապատ այս ճանապարհը նույնպես լուրջ խնդիր է դառնում համայնքի տնտեսական զարգացման և բնակչության տեղաշարժի համար: Այն կիսաքանդ է՝ բազմաթիվ մեծ ու փոքր ակոսներով:

Առաջարկություն .....

2008թ տարեկան բյուջեում առանձնացնել 1.5 մլն դրամ գյուղից դեպի գերեզմանատուն ու Մակարավանք տանող շուրջ 11.5 կմ երկարությամբ ճանապարհի մի հատվածի՝ 800մ-ի հարթեցման, բարեկարգման, խճապատման, ինչպես նաև անձրևներից, ձնհալից և հնարավոր վթարներից առաջացող սելավաջրերի հեռացման համար կողային առուներ բացելու համար:

3. Գերեզմանոցի համար հատկացված տարածքների պարսպապատում

Խնդիրը.....

Գյուղի տարածքում գտնվող մեկուկես դարվա պատմություն ունեցող չորս գերեզմանատներում, գյուղի հիմնադրումից ի վեր, իրենց հանգրվանն են գտել մեր պապերն ու նրանց մեծերը, գյուղի կայացման համար մեծ ներդրում ունեցող անվանի ու հասարակ մարդիկ, այնտեղ են հանգչում հայրենական ու Ղարաբաղյան պատերազմի մարտիկների աճյունները:

Գյուղի Ցուցուլիա, Գյուղատեղ և Թմբադիր կոչվող վայրերն ամփոփող գերեզմանատունը վերոհիշյալ գերեզմանատներից թերևս ամենահինն է: Այն գյուղի համար ունի պատմական նշանակություն, մինչդեռ այսօր այն հայտնվել է անպաշտպան վիճակում: Նախ, սոցիալական ծանր պայմաններն ու ֆինանսական միջոցների զգալի պակասը թույլ չեն տալիս ո՛չ բնակչությանը և ո՛չ էլ տեղական իշխանության մարմիններին պատշաճ հոգ տանել դրա պահպանության և բարեկարգման մասին: Գերեզմանոցի ողջ տարածքը (5 հեկտար) պատվում է խոտածածկույթով և գարուն-աշուն ժամանակահատվածում հրապուրում է տավարածներին իրենց անասունների արոտը կազմակերպելու հենց այդ տարածքում, ինչի պատճառով գերեզմանները տրորվում են, փլուզվում և քանդվում են հնագույն հուշարձանաքարերն ու պաշտպանիչ եզրաքարերը:

Առաջարկություն .....

Յուրաքանչյուր տարի համայնքի սեփական միջոցների հաշվին իրականացվում են գերեզմանատան տարածքի պահպանման միջոցառումներ: 2008 թվականի բյուջեով, նույնպես, համայնքի իշխանությունները նախատեսում են իրականացնել գերեզմանոցի տարածքի շուրջ 2կմ պարսպի վերանորոգում և ամրացում՝ առանձնացնելով դրա համար 1.5 մլն դրամ: Նախատեսվում է աշխատանքները սկսել 2008թ. մայիսին և ավարտել մինչև սեպտեմբեր:

4. Խմելու ջրի ջրագծերի վերակառուցում

Խնդիրը.....

Աչաջուր գյուղի խմելու ջրի ջմատակարարման ներտնտեսային ցանցն ու 2 ջրամբարները կառուցվել են 1960-ական թվականներին: Համակարգը ներկայում խմելու ջրով է ապահովում գյուղի տնային տնտեսությունների շուրջ 70 տոկոսին, մինչդեռ, ջրամատակարարման համակարգը գտնվում է վատթար վիճակում, զգալի են կորուստները, հաճախակի են վթարները: Հատկապես անմխիթար է գյուղից դեպի Մակարավանք ուղղության վրա գտնվող ջրամբարից գյուղ իջնող խողովակաշարերի վիճակը: Դրանք ջրով են ապահովում գյուղի շուրջ 450 տնտեսությունների, սակայն հիմնականում փոքր տրամաչափի են և զգալիորեն մաշված: Ամբողջ տարվա ընթացքում տեղի ունեցող հաճախակի վթարները նախ խաթարում են անխափան ջրամատակարարումը, այնուհետև, սելավներ առաջացնելով՝ ավիրում առանց այդ էլ անմխիթար վիճակում գտնվող ճանապարները, որոնք հատկապես ձմռան ամիսներին սառցապատվում են, դառնում անանցանելի:

Առաջարկություն.....

Ներկայում համայնքի իշխանությունների կողմից ակտիվ աշխատանքներ են իրականացվում համապետական ծրագրերի շրջանակներում խմելու ջրի ջրամատակարարման համակարգն ամբողջությամբ վերակառուցելու և վերանորոգելու ուղղությամբ: Այնուամենայնիվ համայնքի անխափան ջրամատակարարումն ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է մասնակիորեն վերանորոգել ակունքներից դեպի ջրամբարը եկող հիմնական ջրատարերի շուրջ 450 գմ հատվածը և, այդ ջրամբարից գյուղի սնուցումն ապահովող մի քանի փոքր տրամաչափի խողովակների փոխարեն, տեղադրել նոր 150մմ տրամագծով խողովակաշար՝ 400 գմ երկարությամբ: Անհրաժեշտ է շուրջ 1.5 մլն ՀՀ դրամ նախատեսել համայնքի տարեկան բյուջեում նշված աշխատանքներն իրականացնելու նպատակով:

Քվեարկության արդյունքները

	Կողմ
Մանկապարտեզի գույքի ձեռքբերում	41

Գյուղամիջյան ճանապարհների բարեկարգում	10
Գերեզմանոցի համար հատկացված տարածքների պարսպապատում	0
Խմելու ջրի ջրագծերի վերակառուցում	45
Ընդամենը	96

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համահամայնքային քննարկման արդյունքները և համայնքի բյուջեն

Աչաջուր համայնքի 2008 թվականի բյուջեում ամրագրվել են հետևյալ ծախսերը.

– 2 մլն դրամ հատկացնել Աչաջուր համայնքի խմելու ջրի մատակարարման ցանցի վերանորոգման աշխատանքներին,
– 2,5 մլն դրամ հատկացնել համայնքի մանկապարտեզի համար նոր գույք ձեռք բերելուն:

Աչաջուր համայնքի 2008 թվականի բյուջեում, փաստորեն, ամրագրվել են այն հիմնական կապիտալ ծախսերը, որոնք համայնքի բնակչությունը քննարկել էր և քվեարկել՝ հօգուտ: Քվեարկության արդյունքում ձայների բաշխումը թույլ է տալիս եզրակացնել, որ քննարկման դրված սցենարներից 2-ը հավասարապես կարևոր և հրատապ են համայնքի համար: Ի դեպ, բոլոր քննարկումների ժամանակ սցենարները ներկայացվել են որպես փոխադարձ բացառող, այսինքն մարդիկ քվեարկում էին՝ գիտակցելով, որ միայն մեկ ծրագիր է հնարավոր լինելու իրականացնել տարեկան բյուջեի միջոցների հաշվին: Այս դեպքում տեսնում ենք, որ, ինչպես մի քանի այլ համայնքների դեպքում, հաշվի առնելով բնակչության ցանկությունները՝ ընտրվել է առավելագույն ձայն հավաքած միանգամից 2 ծրագիր և հաստատվել համայնքի բյուջեով:

Հետաքրքրական է համայնքային քննարկման միջոցով բյուջեի ծախսերի որոշման վերաբերյալ Աչաջուր համայնքի ղեկավարի կարծիքը. «Բնականաբար, նախկինում մենք միշտ հաստատել ենք բյուջե ու ծրագրեր ենք ընդունել, կենսագործել, որոնց միայն ավագանին և գյուղապետարանի աշխատողներն են տեղյակ եղել: Բայց համահամայնքային քննարկ-

ման ժամանակ ոչ միայն ավագանու, այլ նաև ողջ համայնքի, տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչներն էին ներգրավված ծրագրերի քննարկմանը: Եվ, բնականաբար, եթե նրանք ներգրավում են և իրենց կարծիքն են հայտնում, իրենց խոսքն են ասում գյուղին հուզող հարցերի վերաբերյալ, ուրեմն արդեն ողջ հասարակությունը, համայնքի բոլոր անդամներն են իրենց ձայնը բարձրացնում: Միաժամանակ, այս գործընթացը կարծես պարտավորեցնում է համայնքի ղեկավարին և ավագանուն, որ այդ որոշումները կատարվեն»:

Վստահության գործոնը

Աչաջուր համայնքը ոչ միայն կարողացել է բնակչության հուզող 2 ցավոտ խնդիրներն ամրագրել բյուջեում, այլև դրանք իրագործվել են 2008 թվականին: Բնակչության վերաբերմունքը համայնքի ղեկավարի հանդեպ փոխվում է տվյալ դեպքում, քանի որ իրենց բարձրացրած հարցերը լուծվեցին, ինչը նշանակում է, որ ղեկավարը փաստորեն ի վիճակի է լուծել իրենց խնդիրները: Մենք գործ ունենք այն դեպքի հետ, երբ բնակչության ակնկալիքներն իրականացան, և որոշակի վստահություն հաստատվեց առ այն, որ բնակչության բարձրացրած խնդիրները լսվում են և իրագործվում: Այնպես որ համայնքի ղեկավարները միշտ պետք է գիտակցեն հնարավոր վստահության կորստի վտանգը և փորձեն ամբողջ ջանքերը ներդնել մարդկանց հուզող հարցերի լուծմանը, և ինչպես նշում է Աչաջուր համայնքի ղեկավարը. «Մարդկանց կարծիքն ինձ համար ուղենիշ է իմ հետագա գործունեության համար»:

Համահամայնքային քննարկումն ու հարկահավաքության գործընթացը

Աչաջուր համայնքում իրագործվեց համայնքի անդամների հավանությանն արժանացած միանգամից երկու ծրագիր, որոնցից և ոչ-մեկը չէր իրագործվի, եթե հարկերը չհավաքվեին: Նախկինում հարկահավաքման ցուցանիշը համայնքում շատ ցածր մակադրակի վրա է եղել: Մինչև 2006 թվականը առավելագույն ցուցանիշը կազմել է նախատեսվածի 43 տոկոսը միայն: Հարկերի հավաքման ցուցանիշի կտրուկ բարձրացումը ակնառու կերպով ցույց է տալիս, թե ինչպես է այն ազդում գյուղի զարգացման և ծրագրերի իրագործման վրա:

Աչաջուր համայնքի ղեկավարը մի հետաքրքիր հանգամանք է նշում համահամայնքային քննարկման ու հարկերի հավաքագրման միջև կապի առումով: Դա Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, որպես

համայնքում անմիջական շահ չհետապնդող, չեզոք և անկախ փորձագետների միջամտությունն է, որ հավատ է ներշնչել բնակչության մոտ առ այն, որ ծրագրերը կիրականացվեն, իսկ դրա համար անհրաժեշտ է վճարել հարկերը: Երբ հարկերը վճարելու պահանջը դրվում է ուղղակի համայնքի ղեկավարի կողմից, բնակչությունը կարող է մտածել. «հաստատ իր համար է ջանում, որ միջոցները դնի իր գրպանը»:

Աչաջուր համայնքի հարկերի հավաքագրման և կուտակված ապառքների դինամիկան հետևյալն է.





Ինչպես երևում է գրաֆիկներից 2008 թվականին հարկերի հավաքագրումը նվազել է, իսկ ապառքների չափը 2007 թվականի համեմատ՝ աճել: Պետք է հուսալ, որ իրականացված ծրագրերն, այսինքն փաստացի իրականացված գործը, կնպաստեն վստահության ամրապնդմանը և հարկերի վճարման ցուցանիշը կսկսի աճել:

«Ես մասն եմ համայնքի»

Աչաջուր համայնքի բնակչությունը համեմատաբար մեծաթիվ է՝ շուրջ 5000 մարդ, և այն գտնվում է կուսակցական կառույցների ակտիվ աշխատանքի կիզակետում: Թեպետ համայնքը մեծ է, սակայն հասարակական կազմակերպությունների ակտիվությունն է ցածր: Նշենք, որ մեր հարցումները ցույց տվեցին, որ համայնքի համար կամավոր աշխատելու և ընդհանուր գործին նպաստելու ոգևորվածություն չկա, ինչպես նշում է համայնքի ղեկավարը՝ նույնիսկ աշակերտներին դժվար է հրավիրել համայնքի համար ծառատունկի մասնակցելու: Թերևս այս համայնքում արտացոլվում է հայաստանյան այն իրողությունը, որ սոցիալական հարաբերություններն իրենց տեղը զիջում են տնտեսական հարաբերություններին: Իսկ շուկան

ամեն խնդիր չէ, որ կարող է լուծել:

Ընդհանրապես դժվար է գտնել վերլուծություն, որտեղ երևան քաղաքական կուսակցությունների դերն ու ազդեցությունը համայնքների զարգացման վրա: Այս թեման դժվար է քննարկել, սակայն միևնույն ժամանակ դժվար է խուսափել այս թեմայից, երբ որոշակի խնդիրների առաջ ես կանգնում: Մասնավորապես.

– երբեմն կուսակցությունները համայնքում ծավալում են կատաղի մրցակցություն,
– կուսակցությունների մրցակցային պայքարը տեղի է ունենում ոչ միայն ընդդիմադիր ու իշխող կուսակցությունների միջև, այլև ներիշխանական ճամբարում,
– կուսակցությունների իշխանության գալու պայքարը համայնքում ստեղծում են բաժանարար գծեր,
– համայնքին առնչվող ընդհանուր խնդիրները հետին պլան են մղվում համապետական քաղաքական պայքարին լծված խմբերի կողմից:

Այս խնդիրները հետագա լուրջ վերլուծության կարիք ունեն, իսկ քաղաքական կուսակցությունները՝ համայնքներում իրենց աշխատանքի ու համայնքի զարգացման վրա ազդեցության ինքնագնահատման:

Էկրաններին արտացոլվում են հնչած մտքերը:

Համայնքի ղեկավարը մասնակցում է քննարկումներին:

Քվեարկության արդյունքներն արտացոլվում են էկրաններին:

ՀԱՄԱՅՆՔ՝ ՍԱՐՈՒԽԱՆ

Մարզը՝ Գեղարքունիք

Տեղական ՀԿ՝ «Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատ»

Սարուխան համայնքի 2008 թվականի բյուջեում ներառելու առաջարկով քննարկման դրված սցենարները.

1. *ներհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգում,*
2. *ակումբի դահլիճի կապիտալ վերանորոգում,*
3. *«Պալի տակ» կոչվող թաղամասում կամուրջի կառուցում և ճանապարհի խճապատում,*
4. *թիվ 1 մանկապարտեզի մասնաշենքի կապիտալ վերանորոգում,*
5. *ոռոգման ջրի խորքային հորի հորատում:*

Սցենարները՝ հակիրճ

1. Ներհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգում

Խնդիրը.....

Սարուխան գյուղական համայնքում, բացի գյուղը մարզկենտրոնին կապող կենտրոնական ճանապարհից, առկա են 20-25 կմ երկարությամբ ներհամայնքային նշանակության ճանապարհներ:

2007թ. համայնքի բյուջետային միջոցների հաշվին իրականացվեցին ներհամայնքային մի քանի ճանապարհների ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: 2008 թվականի ծրագրի մեջ նախատեսվում է ներառել համայնքի այն փողոցները, որոնց վրա են գտնվում թիվ 1 և թիվ 2 գերեզմանոցները, թիվ 3 միջնակարգ դպրոցը, թիվ 2 մանկապարտեզը և համայնքի բազմաթիվ բնակելի տներ:

Առաջարկություն.....

Առաջարկվում է համայնքի 2008թ բյուջեում նախատեսել 8-9 մլն դրամ համայնքի համար կարևորագույն նշանակություն ունեցող թիվ 1, թիվ 2 գե-

ռեզմանոցներ և նախրատապ տանող ճանապարհները վերանորոգելու, հարթեցնելու, խճապատելու, ջրահեռացման կողային առուները վերականգնելու և բարեկարգման ընթացիկ այլ օժանդակ աշխատանքներ կատարելու համար:

2. Ակումբի դահլիճի կապիտալ վերանորոգում

Խնդիրը.....

Սարուխան գյուղի ակումբը կառուցվել և շահագործման էր հանձնվել 1970 թվականին: Մինչև 90-ական թվականները ակումբում գործում էին բազմաթիվ մշակութային, ստեղծագործական ու սպորտային խմբակներ: Ակումբի շուրջ 300 հոգու համար նախատեսված դահլիճում կազմակերպվում էին տարաբնույթ հասարակական ու մշակութային միջոցառումներ:

Վերջին տարիներին ակումբը հիմնականում մատնվեց անգործության: Գույքի պահպանումը ծառացավ համայնքի առջև որպես դժվարին խնդիր: 2004թ.ին համայնքի իշխանությունների և անդամների ջանքերով հնարավոր եղավ վերանորոգել դրա տանիքը, 2007-ին՝ ակումբի 1-ին հարկի մի հատվածը: Առանձնացվեցին խաղասենյակներ շախմատի, նարդու և այլ խաղերի համար:

Առաջարկություն.....

Համայնքի 2008թ. բյուջեում նախատեսել 8-9 մլն դրամ համայնքի մշակույթի տան դահլիճի կապիտալ վերանորոգման համար:

3. «Պալի տակ» կոչվող թաղամասում կամուրջի կառուցում և ճանապարհի խճապատում

Խնդիրը.....

Գյուղի միջով հոսող Գոլում գետակը գյուղը բաժանում է առանձին մասերի և դժվարություններ ստեղծում համայնքի թաղամասերի միջև կայուն հաղորդակցություն ապահովելու տեսանկյունից:

Համայնքի կարևոր և առաջնահերթ խնդիրներից է «Պալի տակ» կոչվող թաղամասում Գոլում գետակի վրա կամրջի կառուցումը, որի շնորհիվ ուղիղ կապ կապահովվի «Ճմեր» և «Պալի տակ» կոչվող թաղամասերի միջև:

Առաջարկություն .....

Նախատեսվում է համայնքի 2008թ. բյուջեում նախատեսել 8-9 մլն դրամ համայնքի վերը նշված թաղամասում կամուրջ կառուցելու և այդ երկու թաղամասերը միմյանց կապող շուրջ 1կմ երկարությամբ ճանապարհը խճապատելու և բարեկարգելու նպատակով:

4. Թիվ 1 մանկապարտեզի մասնաշենքի կապիտալ վերանորոգում

Խնդիրը.....

Համայնքի թիվ 1 մանկապարտեզը կառուցվել և շահագործման է հանձնվել 1970-ական թվականներին: Այն նախատեսված էր շուրջ 200 նախադպրոցական և մսուրային տարիքի երեխաների համար:

Այժմ մանկապարտեզի գործունեությունը կրում է սեզոնային բնույթ: Ձմեռվա ամիսներին այն հիմնականում չի գործում: Մանկապարտեզ են հաճախում համայնքի նախադպրոցական տարիքի շուրջ 80 երեխա, մինչդեռ առկա հնարավորությունները չեն բավարարում համայնքի իրական պահանջարկը:

Մանկապարտեզի գույքը զգալիորեն մաշվել է: Շենքն ունի կապիտալ վերանորոգման կարիք: Խիստ արդիական է մանկապարտեզի մասնաշենքերից մեկի կապիտալ վերանորոգման հարցը:

Առաջարկություն .....

Անհրաժեշտ է համայնքի 2008թ. բյուջեում նախատեսել 8-9 մլն դրամ համայնքի թիվ 1 մանկապարտեզի մի մասնաշենքը հիմնովին վերանորոգելու համար:

5. Ոռոգման ջրի խորքային հորի հորատում

Խնդիրը.....

Սարուխան համայնքում հաշվվում են շուրջ 622 հա տնամերձ հողատարածքներ, որոնցից շուրջ 450-ն ապահովված են ոռոգման ջրով: Գյուղի ներտնտեսային ոռոգման ցանցը սնվում է մի քանի խորքային հորերից և ոռոգման ջրի ավազանից: Սակայն ոռոգման ջրի առկա աղբյուրների հզորությունները չեն կարող լիարժեքորեն ապահովել համայնքը ոռոգման ջրով:

Առաջարկություն .....

Սարուխան գյուղի «Ղռաջներ» կոչվող թաղամասի շուրջ 100հա մակերեսով տնամերձ և գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերը ջրդի դարձնելու համար անհրաժեշտ է հորատել խորքային նոր հոր, որի համար անհրաժեշտ է համայնքի 2008թ. բյուջեից հատկացնել 8-9 մլն դրամ:

Քվեարկության արդյունքները

	Կողմ
Ներհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգում	51
Ակումբի դահլիճի կապիտալ վերանորոգում	8
«Պալի տակ» կոչվող թաղամասում կամուրջի կառուցում և ճանապարհի խճապատում	2
Թիվ 1 մանկապարտեզի մասնաշենքի կապիտալ վերանորոգում	3
Ոռոգման ջրի խորքային հորի հորատում	2
Ընդամենը	66

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համահամայնքային քննարկման արդյունքները և համայնքի բյուջեն

Սարուխան համայնքի 2008 թվականի բյուջեում ամրագրված է.

– 15,0 մլն դրամ հատկացնել Սարուխան համայնքի կենտրոնական փողոցից դեպի թիվ երկու գերեզմանատուն տանող ճանապարհի հիմնանորոգման և ասֆալտապատման համար:

Սարուխանի համահամայնքային քննարկման, ինչպես նաև քվեարկության արդյունքները ցույց են տալիս բնակչության կողմից ներհամայնքային ճանապարհների վերանորոգման ընդգծված անհրաժեշտությունը:

Դիտարկումները վկայում են, որ Սարուխանում համահամայնքային քննարկումից հետո բնակիչներն ավելի հետաքրքրված էին գյուղի կյանքով, գյուղի ծրագրերով և այդ հանդիպումից հետո արդեն հետևում, միշտ հետաքրքրվում և հարցուփորձ էին անում ծրագրի հաստատման և իրագործման մասին: Մյուս կողմից բնակչության նման ակտիվությունը, հետ-

ևողականությունն ու հետաքրքրությունը էականորեն անդրադարձել են բյուջեի ընդունման գործընթացի վրա: Հետևությունն ակներև է. համայնքի բնակիչների ակտիվությունը, մասնակցությունը համայնքի կառավարմանը չպետք է լինի միջոցառումից միջոցառում, իսկ մասնակցային գործընթացը՝ առիթից առիթ:

Վստահության գործոնը

Սարուխան համայնքում գյուղապետարանը փորձել է ոչ միայն բավարարել բնակիչների ցանկությունները, այլև գերազանցել նրանց կարիքները: Քննարկման ներկայացված միջոցներից ավելի մեծ գումար է սահմանվել բյուջեում, ինչի հաշվին ծրագրվել է նաև ասֆալտապատել ճանապարհները:

Արդյո՞ք գյուղի բնակիչները ծանոթ են բյուջեի հաստատման և իրականացման ամբողջ բյուրոկրատական ու մասնագիտական գործընթացին: Թերևս քչերը ծանոթ լինեն, սակայն կան խնդիրներ, որոնք դժվարացնում են ծրագրերի իրագործումն՝ ըստ ժամանակացույցի, մասնավորապես, հարկերի մեծ մասը վճարվում է տարեվերջին, այսինքն մեծ ծրագրերն հնարավոր է իրականացնել քննարկումից առնվազն մեկ տարի հետո, համեմատաբար մեծ ծրագրերը պահանջում են հանրապետական մասշտաբով մրցույթի հայտարարում, հաղթողի որոշում և այլն: Սարուխանում, ըստ սահմանված ընթացակարգի հաստատվել է բյուջեն, կազմվել է նախահաշիվը, ինտերնետով տրվել մրցույթի հայտարարություն, իսկ որոշ կազմակերպություններ ներկայացրել են իրենց փաթեթները: Սակայն այս բոլոր գործողությունների մասին անտեղյակ բնակչությունը բնականաբար անվստահորեն կարող է մոտենալ համահամայնքային քննարկման գործընթացին, մասնակցային ժողովրդավարությանը, քանի դեռ բուն աշխատանքները չեն սկսվել: Ինչպես նշում է համայնքի ղեկավարը. «Երևի գործն անելուց հետո վստահության առումով որևէ բան կփոխվի, քանի որ ինչպես ասում են՝ մինչև աչքները չտեսնի, չեն հավատա»:

Գյուղում նշում են, որ քննարկումից հետո գյուղացիների վերաբերմունքում իրոք փոփոխություն է նկատվում, հետաքրքրություն է նկատվում: Թերևս, ինչպես նշում է համայնքի ղեկավարը, այս ամենի պատճառը հարաբերությունների ձևական կողմի նվազեցման արդյունք է և, փաստորեն, համահամայնքային քննարկման ժամանակ անմիջական շփումը, համայնքի ղեկավարի, ավագանու անդամների, վարչության ու բաժնի պետերի հետ հավասար ձայնի իրավունքով սեղանի շուրջ նստե-

լը, կարծիք արտահայտելն ու քվեարկելը մարդկանց մեջ ինչ-որ պատ կոտրում է: «Շատ հաճախ որոշ մարդիկ չէին ցանկանում համայնքի ղեկավարից կամ աշխատակազմից ճշտել, թե ինչ եղավ այս կամ այն գործը, հիմա, այդ հանդիպումից հետո մարդիկ ավելի անկաշկանդ են դարձել: Նվազել է ֆորմալությունը: Այն ժամանակ մի քիչ ուրիշ էր, հիմա մտածում են, որ ավելի լավ է հետաքրքրվենք, հարցնենք» :

Համահամայնքային քննարկումն ու հարկահավաքության գործընթացը

Սարուխան գյուղում մեծ տոկոս են կազմում արտագնա աշխատողները, գյուղի եկամուտների հիմնական մասը ձևավորվում է տարեվերջին, երբ նրանք վերադառնում են: Այս առումով դժվար է գնահատել համահամայնքային քննարկման ազդեցությունը հարկերի հավաքագրման վրա: Թերևս Սարուխան գյուղի փորձը ցույց է տալիս, որ քննարկումները ճիշտ կլինի իրականացնել ոչ միայն ապագա ծրագրերի համար, այլև գյուղի նախորդ տարվա իրականացրած ծրագրերի ու հավաքված հարկերի արդյունքների գնահատման համատեքստում: Նման քննարկման ձևաչափը պետք է լինի՝ ինչ էինք պլանավորել, ինչ արեցինք ու ինչ ենք պատրաստվում անել: Նայենք թվերին.





Այսպես, 2008 թվականին հարկերի հավաքագրումը նվազել է: Եվ թեպետ գույքահարկի որոշակի աճ կա, հողի հարկի հավաքագրումն էապես նվազել է: Ինչպես նշեց համայնքի ղեկավարը, արտագնա աշխատանքի աճին զուգահեռ գյուղատնտեսությամբ զբաղվողների քանակն ու պարապուրդի մատված հողերի ծավալն աճում է: Սա այն դեպքն է, երբ գյուղացիները հարուստ են, սակայն գյուղն աղքատ է: «Ինչու՞ հողից հարկ վճարեմ, եթե հողից եկամուտ չեմ ստացել». կարող են մտածել բնակիչները:

Այս հարցի պատասխանը փորձենք տալ հաջորդիվ:

«Ես մասն եմ համայնքի»

Սարուխան գյուղում առկա պլանները հետքարքիր են և դրանց իրագործումը դրական ազդեցություն կարող է ունենալ գյուղի զարգացման վրա: Նախ, համայնքի ղեկավարը, տեսնելով համահամայնքային քննարկման արդյունավետությունը, որոշել է նման միջոցառում անցկացնել յուրաքանչյուր բյուջեի հաստատումից առաջ: Ավելին, համայնքի ղեկավարը պատրաստվում էր հրավիրել բնակչությանը և ներկայացնել իր պաշտոնավարման 3 տարվա իրականացրած ծրագրերի, բյուջեի հաշվետվությունը: Թերևս չպետք է մոռանալ, որ համայնքի ղեկավարը ընտրովի մարմին է և իր բնակիչներին սիրաշահելու քաղաքական խնդիր ունի իր առջև դրված: Այս առումով մասնակցային ժողովրդավարության միջոցով մարդկանց լսելը և հետագայում բնակչության կարիքները հոգալու ունակություն ցուցաբերելը, քաղաքական առումով՝ մարդկանց ձայները շահելու առումով, պետք է լավ շարժառիթ լինի գյուղապետերի համար: Շահում է գյուղը, շահում են գյուղի բնակիչները, շահում է համայնքի ղեկավարը:

Սարուխան համայնքի մյուս յուրահատկությանն անդրադարձանք հարկահավաքման բաժնում, երբ գյուղը միատարր չէ, կան հարուստներ ու աղքատներ, կան արտագնա աշխատողներ և գյուղացիներ և այլն: Ստացվում է, որ արտագնա աշխատողների ինչ-որ մասը, լինելով համեմատաբար ունևոր, հող չի մշակում, հարկ չի վճարում և օգտվում է գյուղապետարանի իրականացրած այն ծրագրերից, որոնք իրականացվել են հողագործությամբ զբաղվող գյուղացիների հարկի հաշվին: Նման վիճակը գյուղում կարող է առաջացնել սոցիալական լարվածություն: Նախանշված լուծումներ և դեղատոմսեր չկան, և գյուղն ինքը պետք է որոշի հաղթահարելու ուղիները:

Համաձայն համայնքի ղեկավարի՝ ծագել է հիմնադրամ ստեղծելու և հիմնադրամի միջոցով գյուղի ծրագրերն իրականացնելու միտք: Եթե սրան գումարենք համահամայնքային քննարկումների միջոցով ապագա ծրագրերի որոշման ու գերակայությունների հաստատման փորձը, կարող ենք ասել, որ Սարուխան համայնքում հնարավոր է, որ իրոք ձևավորվի համայնքի զարգացման յուրօրինակ մոդել:

Քննարկումները թեժանում են:

մանկապարտեզ էին հաճախում, գոհ էինք, տարրե
ությունը շատ մեծ է մանկապարտեզ հաճախող ու
չհաճախող երեխաների միջև թե՛ զիտելիքների,
թե՛ դաստիարակության հարցում:
142. Ես կառաջարկեի դրագրերում մերաաել
հիվանդանոցի կառուցումը, քանի որ գյուղը մեծ է,
միքը բոյոեր ու բժիշկներ ունենք բարձրագույն
ավարտ, և նրանք կաշխատենք, և հիվանդները
ճանապարհին չեն մնա:
141. Ինչ տաս հոգի աշխատեն, ինչ 8000 մարդ, էս
տաան ել հետդ, էդ ճանապարհով բայեն.

ՀԱՄԱՅՆՔ՝ **ԱՇՏԱՐԱԿ**

Մարզ՝ Արագածոտն

Տեղական ՀԿ՝ «Արագածոտնի հասարակական և ոչ առևտրային կազմակերպությունների ֆորում»

Աշտարակ քաղաքային համայնքի 2008 թվականի բյուջեում ներառելու առաջարկով քննարկման դրված սցենարները.

1. *բազմաբնակարան շենքերի տանիքների կամ շքամուտքերի ու աստիճանավանդակների վերանորոգում,*
2. *աղբյուր հուշարձանի տեղափոխման և տեղի ընտրության հարցը,*
3. *համայնքային ենթակայության երկրորդային փողոցների վերանորոգում և բարեկարգում:*

Սցենարները՝ հակիրճ

1. Բազմաբնակարան շենքերի տանիքների կամ շքամուտքերի ու աստիճանավանդակների վերանորոգում

Խնդիրը.....

Աշտարակ համայնքն ունի 105 բնակելի բազմաբնակարան շենքեր: Բազմաբնակարան շենքերի բնակելի ֆոնդը կազմում է 2308 բնակարան՝ 73000 քմ ընդհանուր մակերեսով:

Եթե խորհրդային տարիներին բնակելի ֆոնդի կառուցումը, շահագործումը և պահպանումը իրականացվում էր պետական միջոցների հաշվին, ապա ներկայում տվյալ խնդրի հիմնական բեռն ընկած է նախ՝ բնակարանների սեփականատերերի, ապա տեղական իշխանությունների ուսերին:

Ցավոք սրտի վերջին տարիների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ բնակսպասարկման և ոչ բնակելի տարածքների շահագործումից գանձվող վարձավճարների հավաքելությունը կազմում է ընդամենը 25-30%: Մինչդեռ համայնքի կառավարման ներքո գտնվող 63 բնակելի շենքերից 57-ը սպասարկվում է քաղաքապետարանի բազմաբնակարան շենքերի սպասարկման բաժնի կողմից, մնացած շենքերի համար սպասարկման վարձավճար չի գանձվում և սպասարկվում են տարածքային կառավարման տեղամասերի կողմից (նախկին թաղայիններ):

Առաջարկություն .....

Աշտարակ քաղաքի 2008 թվականի բյուջեում առանձնացնել 15-20 մլն դրամ գումար բազմաբնակարան շենքերի մասնակի վերանորոգման նպատակով:

Մասնավորապես, քաղաքապետարանի կողմից առաջարկվում է 2008 թվականի քաղաքաշինական ծրագրում և տարեկան բյուջեում ներառել կամ՝

Ա. թվով 5-7 բնակելի շենքերի հիմնականում 4 մուտք ունեցող թեք լանջավոր տանիքների մասնակի վերանորոգումը.

կամ՝

Բ. վերանորոգման աշխատանքներ իրականացնել 11 բնակելի շենքերի շքամուտքերում և աստիճանավանդակներում.

2. Աղբյուր հուշարձանի տեղափոխման և տեղի ընտրության հարցը

Խնդիրը.....

Աշտարակ քաղաքը հարուստ է պատմության և մշակույթի արժեքավոր հուշարձաններով: Աշտարակի բերդի, որի շինարարությունը վերագրվում է մ.թ.ա. 1-ին հազարամյակին, Ծիրանավոր, Սպիտակավոր, Կարմրավոր եկեղեցիների, (4-7 –րդ դարեր), Մարինե (13-րդ դար), Սուրբ Սարգիս (13-րդ դար) կամուրջի, Մուղնիի վանքի և այլ բազմաթիվ մեծ ու փոքր կոթողների ու խաչքարերի շարքում իր ուրույն տեղը, դերն ու նշանակությունն ունի Աշտարակի խորհրդանիշերից մեկը համարվող Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող աղբյուր-հուշարձանը:

Դեռևս խորհրդային իշխանությունների օրոք հուշարձանն Ուռուց հրապարակից ապամոնտաժվեց և տեղափոխվեց ներկայիս հարկային տեսչության շենքի հարևանությամբ գտնվող պուրակ: Տեղափոխման օրվանից այն չի գործում և մնացել է ուշադրությունից դուրս:

Աշտարակցիների շրջանում շրջանառվում է կարծիք, որ աղբյուր-հուշարձանը անհրաժեշտ է տեղափոխել իր նախկին վայրը, որը գործնականում անիրագործելի է, քանի որ քաղաքաշինական բարեփոխումների արդյունքում հրապարակը ստացել է ավարտուն տեսք:

Համայնքի իշխանությունները, համայնքի սոցիալ-մշակութային կյանքի զարգացման ոլորտում ունեցած լիազորությունների շրջանակներում, գտնում են նպատակահարմար 2008 թվականի համայնքի զարգացման ծրագրում ներառել հուշարձանի վերականգնման խնդիրը:

Առաջարկություն .....

2008 թվականի տարեկան բյուջեում առանձնացնել 1,5 մլն դրամ գումար աղբյուրը տեղափոխելու և վերաբացելու ծրագիրն իրագործելու նպատակով: Մասնավորապես համայնքի բնակչությունից ակնկալվում է հետևյալ հարցերի պատասխանները.

- *գտնո՞ւմ եք արդյոք համայնքի ֆինանսական միջոցներից մասհանումը աղբյուր-հուշարձանի վերաբացման համար նպատակահարմար,*
- *պե՞տք է արդյոք տեղափոխել աղբյուր հուշարձանը իր ներկայիս գտնվելու վայրից,*
- *ո՞րն է, Ձեր կարծիքով, Աշտարակ քաղաքում աղբյուր հուշարձանի տեղադրման ամենահարմար վայրը:*

3. Համայնքային ենթակայության երկրորդային փողոցների վերանորոգում և բարեկարգում

Խնդիրը.....

Աշտարակի համայնքի իշխանությունների ներկայացմամբ և ՀՀ կառավարության աջակցությամբ ընթացքի մեջ է Աշտարակ քաղաքի քաղաքաշինության գլխավոր հատակագծի կազմման աշխատանքները, որում, ի թիվս մի շարք խնդիրների, յուրահատուկ տեղ է հատկացվում ներհամայնքային ճանապարհների վերանորոգմանն ու բարեկարգմանը:

Առաջարկություն .....

Նպատակ ունենալով Աշտարակ քաղաքի քաղաքաշինության գլխավոր հատակագծի իրականացումը՝ քաղաքային իշխանությունները 2008 թվականի համայնքի զարգացման ծրագրով նախատեսում են շարունակել ներհամայնքային փողոցների լուսավորության ցանցի ընդլայնման, փողոցների ու մայթերի քանդված հատվածների ասֆալտապատման, փողոցների անվանատախտակների տեղադրման աշխատանքները: Մասնավորապես, 2008 թվականի ծրագրի մեջ ներառված են հետևյալ փողոցների ասֆալտապատման աշխատանքները՝

1. *Թաղիադյան – 276մ*
2. *Թադևոսյան – 550 մ*
3. *Շիրազ - 730մ*
4. *Ղափանցյան – 370 մ*
5. *Մայիսյան -165մ*

6. *Ոսկանյան – 375մ*
7. *Գր.Լուսավորիչ -325մ*
8. *Շինարարների – 225մ*
9. *Եղբայրության –310մ*
10. *Նժդեհի –950մ*
11. *Չաուշի – 600մ*
12. *Բագավանի -500մ*
13. *Միկոյան եղբայրներ-500մ*
14. *Քասաղի – 500մ*

Վերոնշյալ փողոցները հիմնականում հատվում են գլխավոր փողոցների հետ և քիչ թե շատ համարվում են ծանրաբեռնված:

Փողոցներից մի քանիսը համարվում են գլխավոր փողոցները կապակցող միակ ուղին, ինչպես նաև դրանք շրջանցող երթուղիներ: Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում վերոնշյալ փողոցները հանդիսանում են տարանցիկ ճանապարհներ:

Անհրաժեշտ է առանձնացնել 30-40մլն ՀՀ դրամ վերոհիշյալ ծրագիրն իրագործելու համար:

Պետք է փաստել սակայն, որ սահմանված գումարը չի բավարարում ծրագիրն ամբողջ ծավալով իրագործելու համար: Այդ ուղղությամբ համայնքի իշխանությունները շարունակելու են աշխատանքները համայնքային նշանակության խնդիրների լուծման գործին բնակչությանն ավելի ակտիվ ներգրավելու, պետական կամ այլ կազմակերպություններից ու անհատներից համապատասխան աջակություն ստանալու ուղղությամբ:

Իսկ մինչ համապատասխան միջոցների հայթայթումը, համայնքի ղեկավարությունը հայցում է Ձեր աջակցությունը ծրագրում ընդգրկված փողոցների վերանորոգման առաջնահերթությունը սահմանելու հարցում՝ առկա միջոցների շրջանակներում, ըստ սահմանված առաջնահերթության, վերանորոգման ծրագիրը 2008-ին մեկնարկելու համար:

4. Քվեարկության արդյունքները

Հաշվի առնելով Աշտարակի բյուջեի հնարավորություններն ու մի քանի նախաձեռնություններ միաժամանակ իրականացնելու կարողությունը, համահայնքային քննարկման քվեարկության փուլն ուներ առանձնահատկություններ, ինչի մասին տես “Ազդեցության վերլուծություն” ենթակետի ներքո:

Քվեարկություն 1. Բազմաբնակարան շենքերի տանիքների կամ շքամուտքերի ու աստիճանավանդակների վերանորոգում

	Կողմ
Տանիքների մասնակի վերանորոգում	75
Շքամուտքի վերանորոգում	21
Ընդամենը	96

Քվեարկություն 2. Աղբյուր հուշարձանի տեղափոխման և տեղի ընտրության հարցը

	Կողմ
Հուշարձանին գումար տրամադրել	89
Հուշարձանին գումար չտրամադրել	1
Ընդամենը	90

	Կողմ
Հուշարձանը տեղափոխել	63
Հուշարձանը չտեղափոխել	27
Ընդամենը	90

Աշտարակ քաղաքի խորհրդանիշը համարվող Աղբյուր-հուշարձանի գտնվելու վայրի մասին իրենց կարծիքն են հայտնել համաքաղաքային հանդիպմանը մասնակցած շուրջ 100 քաղաքացիներից 63-ը: Աշտարակ քաղաքի բնակիչների պատասխանների բաշխվածությունից ակնհայտ է, որ նրանց մեծամասնությունը Աղբյուր հուշարձանը ցանկանում է տեսնել Ձինիշյան հրապարակում: Քաղաքացիների կարծիքով Ձինիշյան հրապարակն այն վայրն է, որտեղ հուշարձանը կգտնվի բոլորի ուշադրության կենտրոնում և, հետևաբար, էլ ավելի կգնահատվի: Քաղաքացիների համեմատաբար մեծ թիվ կազմող պատասխանների հաջորդ խմբի համաձայն՝ հուշարձանն անհրաժեշտ է թողնել իր ներկայիս գտնվելու վայրում: Ստորև բերված աղյուսակն առավել ակնհայտ է դարձնում համաքաղաքային հանդիպմանը մասնակցած Աշտա-

րակ քաղաքի բնակիչների կարծիքն այս հարցի վերաբերյալ:

Աղբյուր-հուշարձանի գտնվելու ցանկալի վայրը	Յուրաքանչյուր վայրին տրված կողմ ձայների քանակը
Ջինիշյան հրապարակ (գտնվելու նախկին վայրը)	40
Ներկայիս գտնվելու վայրը	13
Կոմիտասի այգի	2
Երաժշտական դպրոցին կից այգի	2
Զբոսայգի	2
Զոհվածների հուշահամալիրի մոտ	1
Զախ ափ	1
«Հպարտ» տեղ	1
Ն.Աշտարակեցու հրապարակ	1

Քվեարկություն 3. Համայնքային ենթակայության երկրորդային փողոցների վերանորոգում և բարեկարգում

Փողոցների առաջնահերթությունը որոշվել է մասնակիցներին տրամադրելով փողոցների ցանկը, որտեղ 1-ից 14 սանդղակով պետք է բնակիչները նշեին իրենց փողոցների վերանորոգման հերթականությունը: Արդյունքում համաքաղաքային հանդիպման ընթացքում քաղաքի 94 բնակիչների կողմից ըստ առաջնային կարևորության (1-14 սանդղակային թվերով) գնահատվել են Աշտարակ քաղաքի այն փողոցները, որոնք գտնվում են առավել կամ պակաս անբարվոք վիճակում և, համապատասխանաբար, հրատապ կամ ոչ հրատապ վերանորոգման կարիք ունեն:

Փողոցների անվանումները	Դասակարգումն ըստ 1-14 սանդղակի[1]														
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	Տվյալ փողոցը չնշելը
Գր. Լուսավորիչ	16	17	15	6	10	7	4	3	3	4	3	0	2	1	7
Թադևոսյան	14	12	16	9	12	5	9	2	1	4	2	3	2	2	7
Ղափանցյան	14	11	9	9	11	6	10	7	3	5	4	2	3	3	3

Քասաղի	12	17	6	6	4	4	9	7	2	2	5	3	5	10	6
Բագավանի	17	3	11	9	5	5	4	6	4	6	3	2	6	12	5
Շիրազ	3	9	13	11	5	11	5	4	4	6	5	11	2	3	7
Եղբայրություն	3	3	2	9	10	12	6	5	9	5	7	11	6	3	9
Թաղիադյան	3	4	3	11	9	10	7	4	5	5	11	4	7	5	11
Ոսկանյան	6	10	2	3	9	10	5	9	7	0	5	7	10	7	10
Մայիսյան	4	1	9	5	6	4	9	10	10	6	10	7	6	4	9
Միկոյան եղբ.	1	4	3	5	1	2	6	7	11	13	6	7	13	11	9
Նժդեհի	2	4	4	2	5	4	6	9	9	12	11	7	7	7	10
Շինարարների	4	6	2	4	3	3	9	10	15	10	11	6	5	3	9
Չաուշի	2	0	4	6	3	5	3	6	6	9	5	16	11	14	9

Բնակիչների գնահատականներն ամփոփվել են աղյուսակի և գրաֆիկների տեսքով, որոնք թույլ են տալիս առանձնացնել Աշտարակ քաղաքի ինչպես խիստ անբարվոք վիճակում գտնվող փողոցները, այնպես էլ այն փողոցները, որոնց վերանորոգումն այդքան էլ առաջնային չէ:

Ստացված տվյալների համաձայն առաջնային վերանորոգման կարիք ունեն Աշտարակ քաղաքի հետևյալ փողոցները՝

1. *Գր. Լուսավորիչ,*
2. *Թադևոսյան,*
3. *Ղափանցյան,*
4. *Քասաղի,*
5. *Բագավանի,*
6. *Շիրազի:*

Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է նշել, որ բնակիչների մի մասը առաջադրված 14 փողոցները գնահատելիս, որպես առաջնային վերանորոգման կարիք ունեցող փողոցներ, նշել է միայն մի քանիսը: Սակայն աղյուսակը ցույց է տալիս, որ առաջնային վերանորոգման կարիք ունեցող վերոնշյալ վեց փողոցների դեպքում էլ, շատ քիչ թվով մարդիկ են, որ այդ փողոցներն ընդհանրապես չեն նշել: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ այս փողոցներն իսկապես բնակչության համար առաջնային նշանակություն ունեն ու անբարվոք

1 Սանդղակը կազմվել է ըստ առաջնահերթության. 1-ամենաառաջանահերթ, 2՝ 2-րդ առաջանահերթություն, և այլն: Քննարկման մասնակիցները յուրաքանչյուր փողոցին տվել են վերանորոգման առաջնահերթություն ըստ իրենց, իսկ աղյուսակում ամփոփված են, թե յուրաքանչյուր փողոցի համար ըստ առաջնահերթության՝ ինչքան մարդ է քվեարկել: Օրինակ, Գր. Լուսավորիչ փողոցին 1-ին առաջնահերթություն տվել է 16 մարդ, 2-րդ առջնահերթություն 17 մարդ, 3-րդ առաջնահերթություն 15 մարդ, և այլն:

վիճակում են, ուստի անհապաղ վերանորոգում են պահանջում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համահամայնքային քննարկման արդյունքները և համայնքի բյուջեն

Աշտարակ քաղաքային համայնքի 2008 թվականի հաստատված բյուջեում ամրագրված է.

– 3000,0 հազար դրամ հատկացնել Աշտարակ քաղաքի աղբյուր հուշարձանը Ջինիշյան հրապարակ տեղափոխելուն և վերակառուցմանը,
– 30000.0 հազար դրամ հատկացնել Աշտարակ քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգմանը,
– 17625.0 հազար դրամ հատկացնել Աշտարակ քաղաքի երկրորդային փողոցների ասֆալտապատմանն ու բարեկարգմանը:

Աշտարակում անցկացրած համաքաղաքային քննարկումը մյուսներից տարբերվում է, ինչպես նպատակով, այնպես էլ բովանդակությամբ: Սակայն չի տարբերվում արդյունքներով, այսինքն համայնքի ավագանին հիմք է ընդունել համաքաղաքային քննարկման արդյունքները և բնակչության կարծիքը հաշվի է առել համայնքի բյուջեն հաստատելիս:

Աշտարակ քաղաքն իր բնակչության քանակով էապես գերազանցում է մյուս բաժիններում ներկայացրած համայնքներին: Քննարկել ամբողջական բյուջեն քաղաքի հիմնական բնակչության հետ բավական բարդ է, քանի որ.

– քաղաքային խնդիրներն իրենց բարդությամբ տարբերվում են գյուղական համայնքի խնդիրներից,
– քաղաքի բնակչությունը նվազ միատարր է, և հատվածական շահերը գերակայում են,
– բյուջետային միջոցները ծավալներով մեծ են, ուստի յուրաքանչյուր տարի իրականացվում են մի քանի խոշոր ծրագրեր, և այլն:

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ խնդիրներին ուրույն լուծում է տրվել համաքաղաքային քննարկման բովանդակության՝ սցենարների և քվեարկության թեմաների ու ձևերի փոփոխության միջոցով: Քննարկվել է ոչ թե միմյանց բացառող ծրագրեր, այլ ծրագրի հարմարավետության խնդիրը, իսկ ընդունելի լինելու դեպքում ծրագրային տարրերի շուրջ ծավալվել է քննարկում և իրականացվել քվեարկություն: Այսպես, բազմաբնակարան

շենքերի ծրագիրը իրագործելու դեպքում, բնակչությունը քվեարկել է հոգուտ այս ծրագրին հատկացվող միջոցները շենքերի տանիքները վերանորոգելուն ուղղելուն, որն արտացոլվել է տարեկան բյուջեում:

Հաջորդ խնդիրը եղել է աղբյուր հուշարձանը տեղափոխելու վերաբերյալ: Բնակչությունը ոչ միայն քննարկել ու քվեարկել է աղբյուր հուշարձանի տեղափոխման կամ չտեղափոխման խնդիրների շուրջ, այլև բաց հարցի միջոցով ներկայացրել է տեղափոխման առավել նպատակահարմար վայրը: Ընդհանրապես, համաքաղաքային քննարկման առավելություններից է փաստարկված քննարկումը, ինչպես նաև սեղանավարների փորձառու միջնորդությամբ համաքաղաքային քննարկման ժամանակ մտքային գրոհի կազմակերպումը, երբ բնակչությունն ինքնուրույն սկսում է ոչ թե պարզապես կողմ կամ դեմ փաստարկներով հանդես գալ, այլ նոր մտքեր գեներացնել ու առաջարկություններով հանդես գալ: Այս փորձը ցույց է տալիս, որ ապագայում հնարավոր է քննարկել բաց թեմաներ, երբ համաքաղաքային քննարկման մասնակիցներն առանց նախօրոք մշակված սցենարների կարող են ինքնուրույն ձևավորել սցենար, ծրագիր: Ամփոփելով նշենք, որ բնակիչների մեծամասնության կարծիքը հաշվի առնվեց, և աղբյուր հուշարձանը որոշվեց տեղափոխել Ջինիշյան հրապարակ:

Ճանապարհների շինարարությունը նույնպես հաստատվել է բյուջեով, և, համաձայն բնակչության արտահայտած առաջնահերթության՝ վերանորոգվում են:

Վստահության գործոնը

Ինչպես նշեցինք, Աշտարակը համեմատաբար մեծ քաղաք է, և բնականաբար համաքաղաքային քննարկման մասնակիցների թվաքանակը չնչին տոկոս է կազմում քաղաքի ողջ բնակչության համեմատ: Թեպետ, ինչպես հարցազրույցում նշում է փոխքաղաքապետը. «Հասարակ քաղաքացիներ կան, ովքեր այսօր գալիս են ու մասնակցում են ավագանու նիստերին, լսում են, իրենց առաջարկներն են անում: Իսկ այն մարդիկ, ովքեր մասնակցել էին համաքաղաքային հանդիպմանը, այսօր արդեն ավելի հաճախ են դիմում ավագանու նիստերին մասնակցելու: Կարող եք շրջել կամ հարցնել քաղաքում, որ մենք մեր խոստացածն անում ենք»: Փոխքաղաքապետի այս դիտարկումն անշուշտ ճշմարիտ կարող է լինել ամենատարբեր համայնքների համար. նրանք ովքեր մասնակցել են քննարկմանը և տեսնում են, որ բնակչության կարծիքը հաշվի է առնվել՝ աղբյուր հուշարձանը տեղափոխվել է, շենքերի տանիքները վերանո-

րոգվում են, ճանապարհները ասֆալտապատվում, լուսավորվում, առավել շատ կվստահեն տեղական ինքնակառավարման մարմիններին: Իսկ նրանք, ովքեր չեն մասնակցել կամ այն փողոցի բնակիչները, ում փողոցը առաջնահերթությամբ օրինակ 5-րդն է և ուշ է վերանորոգվելու, փաստորեն դժգոհ կարող է մնան, չհասկանան պատճառները, թե ինչու՞ է մեկ այլ փողոց վերանորոգվում, իսկ իրենցը՝ ոչ: Քաղաքի բնակչությունը մեծ է, ուստի համայնքի ղեկավարությունը պետք է ապավինի հանրային կապերին, առավել ժամանակակից մեթոդներով ոչ միայն հաղորդակցվի բնակչության հետ, այլև հաշվետու լինի, ցույց տա կատարված աշխատանքը: Երկարաժամկետ հատվածում կարևորվում է համաքաղաքային քննարկումների անցկացումը քաղաքին հուզող ցանկացած թեմայով, այնպես, որ համաքաղաքային քննարկումը դառնա բոլորին հայտնի մի ինստիտուտ, որի միջոցով ուղղակիորեն կարելի է քննարկել ու լուծել քաղաքի հիմնախնդիրները:

Այժմ քաղաքը սահմանափակվում է նորություններ տրամադրելով՝ թե ինչ օրակարգով է ավագանին հավաքվում, ինչ որոշումներ է կայացրել, առաջիկայում ինչ է ակնկալվում անել և այլն՝ «Աշտարակ» թերթում տպելով: Քաղաքապետարանի առաջին հարկում արկղ է տեղադրված, որպեսզի ցանկացած հարցով, բողոք, թե դրական արձագանք որևէ հարցին, քաղաքացիները իրենց կարծիքները գցեն այդ արկղի մեջ: Իսկ քաղաքացիներից նրանք, ովքեր (արդեն 2000-ից ավել ընտանիք) լարային հեռուստատեսություն ունեն, վազող տողով տեղեկանում են քաղաքապետարանի աշխատանքների նորությունների մասին հայտարարություններին:

Համահամայնքային քննարկումն ու հարկահավաքության գործընթացը

Հարկերի հավաքագրումն Աշտարակում առավել համակարգված է, կազմվում և բնակիչներին են տրամադրվում ծանուցագրեր, հարկային տեսուչները շրջում են տներով: Սակայն հարկահավաքության ընկալումը տարբերվում է գյուղական համայնքում նույնանման գործընթացից: Դա շատ բնական է, քանի որ համայնքի բյուջեն մեծ է, սոցիալապես նվազ ապահով բնակիչների համար նման գումարները քաղաքի վրա ծախսելը շռայլություն են թվում, և կա բնակչության մի հատված, որն անիմաստ է համարում այնպիսի ծախսը, ինչպիսին, օրինակ, Աղբյուր-հուշարձանի կառուցումն է, որի փոխարեն «կարելի էր 5000 դրամ գումար բաժանել ժողովրդին»:





«Ես մասն եմ համայնքի»

Աշտարակ քաղաքում և՛ համաքաղաքային քննարկումներն են այլ կերպ անցկացվել, և՛ քվեարկությունը, և՛ հարկերի հավաքագրման խնդիրներն են այլ, ինչպես նաև այլ է համայնքի բնակչության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև վստահության հաստատման գործընթացը:

Աշտարակ քաղաքում մասնակցային ժողովրդավարության այս դեպքը ցույց է տալիս, որ քաղաքային, այսինքն առավել մեծ մասշտաբով խնդիրների քննարկում հնարավոր է ու այն թողնում է իր դրական հետևանքը: Սակայն այն լիարժեք դարձնելու համար անհրաժեշտ է, որպեսզի առավել արդյունավետ աշխատեն տեղական ինքնակառավարման մյուս բաղադրիչները, մասնավորապես.

- համաքաղաքային քննարկումները դարձնել մշտապես գործող մեխանիզմ ոչ միայն բյուջեի, այլ քաղաքին հուզող ցանկացած խնդիր քննարկելու հարցում,
- ուժեղացնել քաղաքի հանրային կապերի գործառույթը, տեսանելի դարձնել կատարված աշխատանքները,
- բարձրացնել հաշվետվողականության և թափանցիկության մակարդակը,
- քաղաքի զարգացման ծրագրերին զուգահեռ իրականացնել նաև քաղաքի սոցիալական խնդիրները լուծող ծրագրեր,
- իրականացնել «համաթաղային» քննարկումներ, երբ քննարկման ենթակա խնդիրները հատվածական են,
- հզորացնել քաղաքում առկա վերլուծական ներուժը, կատարել սոցիոլոգիական, վիճակագրական հարցումներ, վերլուծությունները հրապարակել բնակչության համար և այլն:

Համայնքի խնդիրների քննարկման ժամանակ դահլիճները միշտ մարդաշատ են:

Հմտությունների փոխանցումը շարունակվում է նաև բուն քննարկումների ընթացքում. փորձառու գրառողն օժանդակում է տեղական ՀԿ ներկայացուցչին վարել քննարկումը:

ՀԱՄԱՅՆՔ՝ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ

Մարզ՝ Արարատ

Տեղական ՀԿ՝ «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն»

Նոր Խարբերդ համայնքի 2008 թվականի բյուջեում ներառելու առաջարկով քննարկման դրված սցենարները.

1. *կենտրոնական փողոցի վերանորոգում,*
2. *ներհամայնքային միջանկյալ ճանապարհների բարեկարգում,*
3. *մշակույթի տան գույքի ձեռքբերում:*

Սցենարները՝ հակիրճ

1. Կենտրոնական փողոցի վերանորոգում

Խնդիրը.....

1928 թվականից՝ Նոր Խարբերդ գյուղի հիմնադրման օրվանից սկսած, դրա հիմնական զարկերակն է մնում այսպես կոչված «առաջին» կամ ներկայիս Բաղրամյան փողոցը: Փողոցն ունի շուրջ 1.3կմ երկարություն: Ինչպես և նախկինում, այժմ էլ այն կարևոր նշանակություն ունի համայնքի համար: Դրա վրա են գտնվում գյուղի բազմաթիվ տնային տնտեսություններ, բազմաբնակարան շենքեր, հասարակական սննդի և սպասարկման կետերի մեծ մասը, 2-րդ միջնակարգ դպրոցը, մանկապարտեզը, տեղական իշխանության մարմինների վարչական շենքը և գերեզմանատունը: Այդ փողոցով է համայնքը կապվում հարևան համայնքների, մարզկենտրոնի և մայրաքաղաքի հետ:

Այն չափազանց ծանրաբեռնված ճանապարհ է ոչ միայն այն պատճառով, որ հանդիսանում է մեծ բնակչություն ունեցող, նախկինում քաղաքատիպ ավանի կարգավիճակ ունեցող համայնքի կենտրոնական փողոցը, այլ նաև այն պատճառով, որ դրանից է օգտվում Երևան քաղաքի Շենգավիթ թաղամասի այգեգործական տնտեսությունների շուրջ 25 հազար բնակչությունը:

Կառուցման օրվանից փողոցը մշտապես եղել է ասֆալտապատ և բարեկարգ: Սակայն շահագործման բարձր ինտենսիվության, ինչպես նաև բնակլիմայական պայմանների ազդեցության հետևանքով այն արագորեն մաշվում է, առաջանում են մեծ ու փոքր փոսեր, որոնք անձրևների ընթաց-

քում լցվում են ջրով՝ դառնալով ցեխի, իսկ ամռանը՝ փոշու աղբյուր: Փողոցի երկայնքով ձգվում է ջրահեռացման առուն, որը նույնպես փողոցի ինտենսիվ շահագործման, ինչպես նաև համայնքի անդամների կողմից անխնա օգտագործման արդյունքում քանդվում է, լցվում աղբով՝ առաջացնելով հաճախակի խցանումներ:

Առաջարկություն

Համայնքի իշխանությունները ծրագրում են 2008 թվականին իրականացնել փողոցի ասֆալտե ծածկույթի մասնակի վերանորոգումներ և կողային առվի բարեկարգում ու մաքրում: Նոր Խարբերդ համայնքի 2008թ. տարեկան բյուջեում անհրաժեշտ է առանձնացնել շուրջ 5,0 մլն դրամ փողոցի վերանորոգման նպատակով:

2. Ներհամայնքային միջանկյալ ճանապարհների բարեկարգում

Խնդիրը.....

Նոր Խարբերդ գյուղի թաղամասերի միջով անցնող բազմաթիվ միջանկյալ փողոցները կարևորագույն նշանակություն և գործառույթ ունեն համայնքի համար՝ միմյանց կապելով գյուղի հիմնական ճանապարհներն ու թաղամասերը, հնարավորություն ստեղծելով հարմարավետ հաղորդակցություն ապահովելու տնային տնտեսությունների, հացի արտադրամասի, թիվ 1 դպրոցի և այլ ձեռնարկությունների ու հիմնարկների միջև:

Դրանք հիմնականում 500-800 մետր երկարություն ունեցող, նախկինում ասֆալտապատ ճանապարհներ են, որոնք վերջին տարիների ընթացքում ամբողջությամբ կորցրել են իրենց ասֆալտե ծածկույթը, դրանց վրա առաջացել են բազմաթիվ մեծ ու փոքր ակոսներ, դարձել են դժվարանցանելի թե՛ երթևեկության, թե՛ հետիոտնի համար:

Լրացուցիչ բարդություններ է ստեղծում նաև փողոցների լուսավորության համակարգի խափանվածությունը: Դեռևս խորհրդային տարիներին լուսավորված և բարեկարգ այս փողոցները վերջին տարիներին, օրվա գիշերային ժամերին հայտնվում են խավարի մեջ: Մութ անկյուններում և կուտակված աղբի շուրջ հավաքվող թափառական շները վտանգում են բնակիչների անվտանգությունն ու խանգարում անդորրը:

Առաջարկություն.....

Համայնքի ղեկավարությունը ծրագրում է գյուղի Բաղրամյան փողոցը

հատող և վեց հիմնական փողոցները միմյանց կապող 5 միջանկյալ ճանապարհները հարթեցնել և վերականգնել գիշերային լուսավորության համակարգը: Այդ նպատակով ծրագրվում է վերանորոգել կամ տեղադրել 60 լուսավորության սյուներ և տեղակայել ժամանակակից լուսավորող սարքեր:

Անհրաժեշտ է առանձնացնել շուրջ 5,0 մլն դրամ նշված ծրագրի իրագործման նպատակով:

3. Մշակույթի տան գույքի ձեռքբերում

Խնդիրը.....

Նոր Խարբերդ գյուղում դեռևս 1961-63 թվականներին կառուցվեց շուրջ 400 մարդու համար նախատեսված մշակույթի տուն: Այն էական դերակատարում էր ունենում գյուղում մշակութային կյանքի զարգացման, երիտասարդ սերնդի բազմակողմանի և առողջ զարգացման գործում: Դրանում գործում էին բազմաթիվ ստեղծագործական, մշակութային ու սպորտային խմբակներ, կազմակերպվում էր ուսուցում բուժքույրի, կարուձևի և այլ մասնագիտություններով: Գործող թենիսի խմբակի շնորհիվ գյուղի երիտասարդները մշտապես առաջատար տեղեր էին զբաղեցնում հանրապետական մրցաշարերում, իսկ պարի խումբը, իր բարձր վարպետության ու ճանաչվածության շնորհիվ, մշտապես հրավերքներ էր ստանում արտասահմանյան երկրներից և ճանաչելի դարձնում հայ պարարվեստը աշխարհին:

Մշակույթի տունը իր գործունեությունը պահպանեց մինչև 1993 թվականը, որից հետո վրահաս սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում մատնվեց անգործության, գույքն ամբողջությամբ մաշվեց և դարձավ օգտագործման համար ոչ պիտանի:

2004 թվականին ՀՀ նախագահի հովանավորությամբ, Սոցիալական ներդրումների հիմնադրամի օժանդակությամբ և համայնքի իշխանության մարմինների ջանքերով մշակույթի տունը հիմնանորոգվեց և 2006 թվականին հանձնվեց շահագործման:

Այժմ դրանում գործում են երաժշտական դպրոց՝ 120 աշակերտով, գրադարան՝ 33 հազար կտոր գրականությամբ, վերանորոգվել և կահավորվել է դահլիճը: Շենքում իր գործունեությունն է ծավալում «Համայնքային գործողությունների հանձնաժողով» երիտասարդական հասարակական կազմակերպությունը: Այնուամենայնիվ շինության հզորությունները, համապատասխան միջոցների ու գույքի առկայության պայմաններում, թույլ կտային ընդլայնել մշակույթի տան գործունեությունը, ներգրավել նոր երիտասարդների, խթանել

և՛ ձեռներեցությունը, և՛ մշակութային կյանքը:

Առաջարկություն .....

Նոր Խարբերդ համայնքի բյուջետային գործընթացի արդյունավետության բարձրացման, հարկերի հավաքագրման ցուցանիշի բարելավման շնորհիվ գրանցված ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս համայնքի ինքնակառավարման մարմիններին 2008թ. տարեկան բյուջեում նախատեսել շուրջ 5,0 մլն դրամ մշակույթի տան համար ժամանակակից տեսալսողական, համակարգչային տեխնիկական միջոցներ, սպորտային գույք և անհրաժեշտ կահույք գնելու համար: Ծրագրի իրագործման արդյունքում ակնկալվում է մշակույթի տանը հիմնել համակարգչային սենյակ, վերականգնել թենիսի սպորտաձևի նախկին ավանդույթները, հարմարավետ պայմաններ ապահովել մշակույթի տան այցելուների համար, կազմակերպել կինոդիտումներ, երաժշտական միջոցառումներ, ավելի շատ երիտասարդների կտրել անգործությունից և փողոցից:

Քվեարկության արդյունքները

	Կողմ
Կենտրոնական փողոցի վերանորոգում	6
Ներհամայնքային միջանկյալ ճանապարհների բարեկարգում	77
Մշակույթի տան գույքի ձեռքբերում	8
Ընդամենը	91

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համահամայնքային քննարկման արդյունքները և համայնքի բյուջեն

Նոր Խարբերդ համայնքի 2008 թվականի բյուջեում ամրագրված է.

– կապիտալ նորոգումների ծախսեր, այդ թվում՝ միջհամայնքային ճանապարհներ, 56323 հազար դրամ,
– գույքի ձեռքբերում, սարքեր, սարքավորումներ՝ 5900 հազար դրամ:

Նշենք, որ համայնքի բյուջեն 2008 թվականի համար մեծ է եղել՝ պայմանավորված նախորդ տարվա մեծ մնացորդով, ինչպես նաև համայնքին

պատկանող ակտիվների վաճառքից ստացված շուրջ 28 մլն դրամ գումարով:

Ըստ էության, Նոր Խարբերդ համայնքում համահամայնքային քննարկումից քիչ անց տեղի է ունեցել համայնքի ղեկավարի ընտրություններ, և ընտրվել է նոր ղեկավար: Համայնքի ղեկավարը նշում է. «Ասֆալտապատել այդ փողոցները համայնքի բյուջեով ուղղակի հնարավոր չէ: Փորձում ենք մեր գրպանից կամ ուրիշ աղբյուրի օգնությամբ մի բան անել, խճապատում ենք, մի շարք փողոցների վրա բավականին աշխատանք արվել է: Մինչդեռ մարդկանց անգամ չի հետաքրքրում՝ դա իմ գրպանից է արվել, թե ոչ: Պետք է գազիֆիկացում անել, բայց էլի ոչ բյուջեով: Հետո եթե մի փողոցը անես, մյուս փողոցի բնակիչը կասի. բա ինչու՞ մեր փողոցները աչքաթող արեցիք»:

Թեպետ բնակիչները ցանկացել են համայնքի երկրորդային փողոցները վերանորոգել, այնուամենայնիվ գումարները ծախսվել են կենտրոնական փողոցի վերանորոգման վրա:

Ընդհանրապես համայնքների կառավարման տեսանկյունից սուբյեկտիվ գործոնը մեծ դեր է խաղում: Եթե այդպես չլիներ, ապա համայնքի ղեկավարներն ու ավագանիները չէին ընտրվի ու չէին փոփոխվի: Նոր համայնքի ղեկավարի համար կան այլ գերակայություններ, և, քանի որ բյուջեի կառավարումն իր պատասխանատվության խնդիրն է, ապա առաջնորդվում է իր սահմանած գերակայություններով:

Վստահության գործոնը

Նոր Խարբերդ համայնքի դեպքի յուրօրինակությունը, փաստորեն, կայանում է նրանում, թե ինչպես իրականացնել մասնակցային ժողովրդավարություն, երբ փոխվում է համայնքի ղեկավարությունը՝ իր հետ փոխելով նախկին գերակայությունները: Հումորով նշենք, որ սա, փաստորեն, մասնակցային և ներկայացուցչական ժողովրդավարության «բախման, կոնֆլիկտի» ակնառու օրինակ է, ուր «հաղթել է» ներկայացուցչական ժողովրդավարության մոդելը: Իսկ լուծու՞մը. լավագույն լուծումն իհարկե նա է, որ հաղթողներ և պարտվողներ չլինեն, իսկ մեր առաջարկությունը նման պարագայում այն է, որ գերակայությունների փոփոխության դեպքում, ցանկալի է, որ նոր համայնքի ղեկավարը անցկացնի ևս մեկ համահամայնքային քննարկում, որտեղ ներկայացնի գերակայության փոփոխության փաստարկները և դրանք դնի համայնքային քննարկման: Այլապես համայնքի ղեկավարը կարող է աստիճանաբար կորցնել վստահությունը:

Մյուս խնդիրը համայնքի ղեկավարի կողմից մասնակցային ժողովրդավարության և բնակչության արտահայտած կարծիքների հանդեպ ունեցած վստահությունն է: Սա թերև կոնֆլիկտ կարող է լինել պրոֆեսիոնալիզմի՝ «թվերն ու փաստերը ցույց են տալիս, թե գյուղին ինչ է պետք», և նախապատվությունների միջև՝ «ես գիտեմ, որ սա ինձ ու իմ համայնքին ավելի ձեռնտու կլինի»: Այս թեման վաղուց շոշափվել է, և նշվել է ընդհանրապես աշխարհում մասնակցային ժողովրդավարության մոդելների ու մեխանիզմների տարածման միտումը: Եվ թերևս այս բացը լավագույն կերպով կլրացվեր, եթե նախկինում գյուղապետարանի կողմից համահամայնքային քննարկման գործընթացը և արդյունքները համոզիչ կերպով ներկայացվեին և փաստարկված ամփոփվեին: Հաշվի առնելով Նոր Խարբերդի փորձը՝ կարելի է առաջարկել ցանկացած համահամայնքային քննարկում արձանագրել ու դարձնել առավելագույնս ներկայացուցչական, որպեսզի բուն քննարկումը և դրա արդյունքները վստահություն ներշնչեն ցանկացած համայնքի անդամի, այդ թվում ցանկացած հաջորդ համայնքի ղեկավարի համար:

Համահամայնքային քննարկումն ու հարկահավաքության գործընթացը

Նոր Խարբերդ համայնքում 2008 թվականին հարկերի վճարման ցուցանիշն ավելացել է: Թեպետ, այս դեպքում դժվար է կապ գտնել համայնքային քննարկման հետ, նամանավանդ, որ իրականացրած ծրագրերը տասնյակ անգամ գերազանցում են հավաքված հարկերի գումարները՝ շնորհիվ նախորդ տարվա մնացորդի, դոտացիայի և վաճառած համայնքային ակտիվների:





Ապառքները հիմնականում մնացել են նույն մակարդակի վրա, և ինչ-

պես նշում է համայնքի ղեկավարը. «Այսօր չես կարող ժողովրդից այդքան փող գանձել. գիտես, որ հացի խնդիր ունի, գիտես որ հողը չի մշակել, բայց միևնույն է պետք է հարկ վճարի: Մենք տեսնում ենք, որ դաշտերը մշակված չեն, բայց միևնույն է՝ պետք է հարկերը վճարի: Եթե մենք երկու անգամ այդպես ստիպենք հարկը վճարել, երրորդ անգամ այդ մարդը կասի վերցրեք, հողն էլ չեմ ուզում: Դրա համար էլ մտնում ենք ժողովրդի դրության մեջ»: Նշենք, որ հարկերի հավաքագրման խնդիրը փաստորեն առնչվում է բնակչության սոցիալական վիճակի հետ, և, այդ պատճառով նույնպես, դժվար է ուղղակի կապ գտնել մասնակցային ժողովրդավարության ու հարկահավաքման մակարդակի հետ:

«Ես մասն եմ համայնքի»

Նոր Խարբերդ համայնքն ունի ևս մեկ յուրահատկություն, ինչը դժվարացնում է համայնքային խնդիրների համատեղ լուծումը: Դա համայնքի կառուցվածքն է: Այս համայնքում բնակվում են Հայաստանի բոլոր մարզերից տեղափոխված մարդիկ: Նոր Խարբերդում մեկ «խզում» արձանագրվել էր գյուղապետերի փոփոխության ժամանակ, իսկ մեկ այլ «խզում էլ» գոյություն ունի «ես մասն եմ համայնքի» ընկալման մեջ: Այս առումով համայնքի ղեկավարը նշում է. «Մեր համայնքում չկա «գյուղամեջ», մարդիկ իրար հետ չեն հավաքվում: Այսօր ժողովուրդը գործից գալիս է, չի էլ հետաքրքրում, թե ինչ է կատարվում՝ ի տարբերություն այլ գյուղերի»:

Թերևս համահամայնքային քննարկման այս փորձը ցույց է տալիս, որ սա հենց այն ֆորմատն է, որ կարող է էականորեն բարձրացնել «սա իմ համայնքն է» զգացումը, որն էլ իր հերթին կբերի «ես էլ եմ պատասխանատու համայնքիս զարգացման համար» ընկալումը: Համայնքի ղեկավարը և ընդհանրապես ՏԻՄ-երը չպետք է փորձեն միայնակ լուծել համայնքի խնդիրները, այլ պետք է կարողանան ստեղծել փոխադարձ վստահության մթնոլորտ, բարձրացնել յուրաքանչյուր համայնքի անդամի պատասխանատվության և գործին օգնելու պատրաստակամության աստիճանն ու համընդհանուր ջանքերով զարգացնել համայնքը: Խզումներ համայնքում չպետք է լինեն, իսկ դրան հասնելու համար շատ ջանքեր ու աշխատանք է պահանջվում իրականացնել: Իսկ համահամայնքային քննարկումն այն լավագույն գործիքներից է, որ կարող է վերացնել խզումները:

Քննարկումից առաջ մասնակիցները ծանոթանում են հերթական սցենարին:

Որոշ սցենարներ վայելում են մասնակիցների ակնհայտ համակրանքը:

ՀԱՄԱՅՆՔ՝ ԱՐԵՎԻԿ

Մարզ՝ Արմավիր

Տեղական ՀԿ՝ «Արմավիրի զարգացման կենտրոն»

Արևիկ համայնքի 2008 թվականի բյուջեում ներառելու առաջարկով քննարկման դրված սցենարները.

1. *գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում,*
2. *խմելու ջրի ջրագծերի կառուցում և վերանորոգում, ջրամբարման նոր բաքի տեղադրում,*
3. *մշակույթի տան տանիքի վերանորոգում,*
4. *հայրենական պատերազմում զոհվածների հուշարձանի և հանգստի գոտու կառուցում,*
5. *սպորտային հրապարակի բարեկարգում և ընդլայնում:*

Սցենարները՝ հակիրճ

1. Գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում

Խնդիրը.....

Արևիկ գյուղական համայնքում, բացի գյուղի հիմնական զարկերակը համարվող հարևան համայնքներին և մարզկենտրոնին կապող կենտրոնական ճանապարհից, առկա են ներհամայնքային նշանակության շուրջ 15կմ երկարությամբ ճանապարհներ:

Երբեմնի ասֆալտապատ, ներկայում հիմնականում գրունտային ծածկույթ ունեցող այս ճանապարհները լուրջ խոչընդոտ են հանդիսանում համայնքի տնտեսական զարգացման և բնակչության տեղաշարժի համար, քանի որ կիսաքանդ են, բազմաթիվ մեծ ու փոքր ակոսներով:

Համայնքի բյուջեից, գրեթե յուրաքանչյուր տարի, տրամադրվում են միջոցներ ներհամայնքային ճանապարհների վերանորոգման նպատակով: Միևնույն ժամանակ համայնքի ղեկավարությունը աշխատանքներ է տանում դրանց հիմնանորոգման և ասֆալտապատման նպատակով տարբեր պետական և ոչ պետական ծրագրերում ընդգրկվելու և համապատասխան միջոցներ ներգրավելու ուղղությամբ:

Առաջարկություն .....

Առկա ռեսուրսների շրջանակներում ծրագրվում է 2008 թվականին իրականացնել ներհամայնքային նշանակության և հանդամիջյան 10-12կմ երկարության ճանապարհների հարթեցում և խճապատում: Անհրաժեշտ է բյուջեում առանձնացնել 5 մլն ՀՀ դրամ վերոհիշյալ ծրագիրն իրականացնելու համար: Բացի հարթեցումից և խճապատումից՝ նախատեսվում է նաև ճանապարհների երկայնքով բացել կողային առուներ անձրևներից և ձյան հալոցքից առաջացող ջրերի հեռացումն ապահովելու համար:

2. Խմելու ջրի ջրագծերի կառուցում և վերանորոգում, ջրամբարման նոր բաքի տեղադրում

Խնդիրը.....

Արևիկ համայնքի խմելու ջրի մատակարարման ներտնտեսային ցանցն ու ջրի ամբարման համար նախատեսված բաքերի համակարգը կառուցվել են 1960 թվականին, դեռևս խորհրդային իշխանությունների օրոք: Համակարգը ներկայում խմելու ջրով է ապահովում 2700 բնակչության թվաքանակ ունեցող Արևիկ համայնքի 900 տնտեսությունների շուրջ 70 տոկոսին: Այն բաղկացած է շուրջ 1.5կմ ջրագծերի ցանցից և 3 ջրամբարման բաքերից:

Չնայած համայնքի իշխանությունների կողմից պարբերաբար իրականացվող վերանորոգման աշխատանքներին՝ համայնքի ջրամատակարարման համակարգը գտնվում է վատթար վիճակում, զգալի են կորուստները, հաճախակի են վթարները: Տնտեսությունների թվի աճի, հետևաբար խմելու ջրի սպառման ծավալների աճի պայմաններում գյուղում ներկայում առկա ջրամբարման 3 բաքերը չեն ապահովում բնակչության պահանջարկը:

Առաջարկություն .....

2008 թվականի տարեկան բյուջեի նախնական ցուցանիշների վերլուծությունը հնարավորություն է ընձեռում տեղական իշխանություններին շուրջ 5,0 մլն ՀՀ դրամ նախատեսել համայնքի տարեկան բյուջեում ցանցն ընդլայնելու և վերանորոգելու ընդհանուր առմամբ 300գմ ծավալով և գյուղում ջրամբարման 5տ տարողությամբ 4-րդ բաքի կառուցման աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով: Ծրագրի իրագործման արդյունքում ակնկալվում է համայնքի տնտեսությունների խմելու ջրով ապահովվածությունը հասցնել շուրջ 90 տոկոսի:

3. Մշակույթի տան տանիքի վերանորոգում

Խնդիրը.....

Դեռ 50-ականների վերջերին Արևիկ գուղում կառուցվեց և հիմնվեց մշակույթի հարմարավետ և գեղեցիկ մի օջախ: Այն էական նշանակություն էր ունենում գյուղի մշակութային կյանքի զարգացման գործում: Կառույցի ավելի քան 900քմ. մակերեսի վրա գործունեություն էին ծավալում բազմաթիվ ուսումնական խմբակներ, հիմնվել էր գրքերի հարուստ պաշար ունեցող գրադարան, կառուցվել էր դահլիճ, որտեղ պարբերաբար կազմակերպվում էին տոնական, համերգային ու հասարակական բազմաթիվ այլ միջոցառումներ, հրավիրվում էին կինոդիտումներ:

Ֆինանսական միջոցների սղության պայմաններում մշակութային օջախը հիմնականում դադարեցրեց իր գործունեությունը: Ավելին, գույքի կառավարման, շահագործման և պահպանման հարցերը դարձան դժվարին խնդիրներ համայքի իշխանությունների համար:

Համայնքի անդամների և իշխանությունների ջանքերով հնարավոր եղավ պահպանել գրադարանն ու գույքը, այն գործում է մինչ այժմ և էական դեր խաղում մատաղ սերնդի դաստիարակման գործում: Շենքում բացվել է խաղասենյակ, որտեղ իրենց ժամանակն են անցկացնում Արևիկ գյուղի բնակիչները: Ներկայում աշխատանքներ են տարվում մշակույթի տան շենքում գյուղի բուժկետը հիմնելու և կահավորելու ուղղությամբ: Շենքի մի փոքր հատվածում էլ հիմնվել է գյուղապետարանը:

Առաջարկություն.....

Նպատակ հետապնդելով զարգացնել համայնքի մշակութային կյանքը, վերաբացել խմբակներն ու դահլիճը, ինչպես նաև կազմակերպել մշակույթի տան շենքի պատշաճ պահմանումը՝ համայնքի իշխանությունները ծրագրում են 2008 թվականին կապիտալ վերանորոգել շենքի տանիքը:

Արևիկ համայնքի բյուջետային գործընթացի արդյունավետության բարձրացման, հարկերի հավաքագրման ցուցանիշի բարելավման, ինչպես նաև գույքի կառավարման արդյունավետության բարձրացման արդյունքում հնարավոր է դարձել 2008թ-ի տարեկան բյուջեում նախատեսել շուրջ 5,0 մլն դրամ՝ մշակույթի տան շուրջ 300քմ մակերեսով տանիքը հիմնանորոգելու նպատակով:

4. Հայրենական պատերազմում զոհվածների հուշարձանի և հանգստի գոտու կառուցում

Խնդիրը.....

Համաշխարհային երկրոդ աշխարհամարտի ընթացքում ֆաշիզմի նկրտումների դեմ պայքարի ելած միջազգային հանրության շարքերում իր նշանակալի մասնակցությունն ու դերակատարումն ունեցավ նաև Հայաստանը: Բազմահազար հայ զինվորների ու հրամանատարների շարքում հայրենիքի պաշտպանությանը ելան նաև Արևիկ գյուղի հայրերն ու զավակները: Եվ եթե անգամ կային ընտանիքներ, որոնց անդամները չէին մեկնել ռազմաճակատ, ապա նրանք էլ իրենց անձնազոհ աշխատանքով ապահովում էին թիկունքը: Ցավոք սրտի, մարդկության առջև հառնած այս արհավիրքի դեմ պայքարը խլեց տասնյակ հազարավոր մարդկային կյանքեր: Արևիկ գյուղի զավակներից 20-նն իրենց կյանքը նվիրաբերեցին այդ գործին:

70-ական թվականներին ԽՍՀՄ իշխանությունների կողմից նախաձեռնություն ցուցաբերվեց՝ գյուղում Հայրենական պատերազմում զոհվածների հուշարձան կառուցելու: Հատկացվեց համապատասխան տարածք, իրականացվեցին նախագծային աշխատանքներ: Սակայն աշխատանքները ձգձգվեցին, իսկ Հայաստանի անկախացումից հետո դրանց շարունակման մասին, ի վերջո, մոռացվեց: Մինչդեռ խնդիրը դուրս չեկավ համայնքի ինքնակառավարման մարմինների ուշադրության կենտրոնից:

Առաջարկություն.....

Վերսկսել հուշակոթող-համալիրի կառուցումը: Նախատեսվում է մշակել նոր և իր չափերով ու ռեսուրսների ներգրավմամբ մատչելի մի նախագիծ, հատկացված վայրում հիմնել պուրակ, ինչպես նաև նախատեսել հնարավորություն ապագայում հայոց մեծ Եղեռնի զոհերի ու Ղարաբաղյան ազատամարտի զոհվածների հիշատակին նվիրված այլ հուշարձաններ կառուցելու համար: Աշխատանքները 2008 թվականին մեկնարկելու նպատակով բյուջեում նախատեսվում է պլանավորել շուրջ 5 մլն ՀՀ դրամ:

5. Սպորտային հրապարակի բարեկարգում և ընդլայնում

Խնդիրը.....

Արևիկ համայնքի առօրեայում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում սպորտը: Գյուղի բնակչության մեջ մեծ թիվ են կազմում տարբեր մարզաձևե-

րում ընդգրկված երիտասարդները, որոնց շարքում կան ինչպես մարզական ասպարեզում առաջին քայլեր անողներ, այնպես էլ վաստակ ունեցող մարզիկներ: Գյուղը հպարտանում է իր երիտասարդներով, ովքեր, տարբեր մարզաձևերում ձեռք բերելով զգալի հաջողություններ՝ ճանաչել են տալիս մեր համայնքը ողջ հանրապետությունում:

Խոստումնալից արդյունքներ է արձանագրում Արևիկ գյուղի ֆուտբոլային թիմը, որը մարզային և միջմարզային առաջնություններում մշտապես կայուն արդյունքներ է արձանագրում: Մասնավորապես, Համայնքի «Արևիկ» ֆուտբոլային թիմը 3-4 տարիների ընթացքում պարբերաբար նվաճում է մարզի առաջատարի տիտղոսը, միջմարզային առաջնություններում 2006 թվականին զբաղեցրել է երկրորդ իսկ 2007 թվականին՝ երրորդ տեղերը:

Հաշվի առնելով գյուղի բնակչության և հատկապես երիտասարդության հակվածությունը դեպի սպորտը՝ համայնքի իշխանությունների, բոլոր անդամների ջանքերով ու մասնակցությամբ 1995-96 թվականներին կառուցվեց ֆուտբոլային մարզահրապարակ՝ ընդհանուր առմամբ շուրջ 8,0 հազար քմ մակերեսով: Սակայն այն ներկայում ունի զգալի նորացման, ընդլայնման և բարեկարգման անհրաժեշտություն: Բացի այդ, մարզական կյանքն աշխուժացնելու և երիտասարդներին այլ մարզաձևերում ներգրավելու նպատակով նպատակահարմար է դիտվում կառուցել նաև վոլեյբոլի ու բասկետբոլի հրապարակներ, մարզահրապարակների երկայնքով հիմնել ժամանակակից պահանջներին բավարարող վազքուղի:

Առաջարկություն .....

Արևիկ համայնքի բյուջետային գործընթացի արդյունավետության բարձրացման, հարկերի հավաքագրման ցուցանիշի բարելավման 2008 թվականի տարեկան բյուջեի եկամուտների վերլուծության արդյունքում հնարավոր է համարվում առանձնացնել համապատասխան ֆինանսական միջոցներ նշված երկարաժամկետ ծրագիրն այս տարի մեկնարկելու համար: Նախատեսվում է իրականացնել ֆուտբոլային հրապարակի հիմնանորոգում և բարեկարգում, ինչպես նաև մյուս մարզահրապարակների համար նախատեսված տարածքի հարթեցում և պարսպապատում երկաթյա ճաղերով: Նախնական հաշվարկներով ծրագրի մեկնարկի համար կպահանջվի շուրջ 5 մլն դրամի ներդրում: Ծրագրի իրականացումը նախատեսվում է շարունակել նաև 2009-10 թվականների ընթացքում:

Քվեարկության արդյունքները

	Կողմ
Գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում	12
Խմելու ջրի ջրագծերի կառուցում և վերանորոգում, ջրամբարման նոր բաքի տեղադրում	76
Մշակույթի տան տանիքի վերանորոգում	8
Հայրենական պատերազմում զոհվածների հուշարձանի և հանգստի գոտու կառուցում	3
Սպորտային հրապարակի բարեկարգում և ընդլայնում:	0
Ընդամենը	99

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համահամայնքային քննարկման արդյունքները և համայնքի բյուջեն

Արևիկ համայնքի ավագանու նիստի արձանագրության քաղվածքում կարդում ենք.

– հաշվի առնելով 2008 թվականի փետրվարի 6-ին Արևիկ համայնքում Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից անցկացված համահամայնքային քննարկման արդյունքում համայնքի բնակիչների կարծիքը՝ համայնքի ավագանին որոշեց 2008 թվականի ֆոնդային բյուջեի «Կապիտալ ծախսեր» հոդվածից 2800,0 հազար դրամ հատկացնել Արևիկ համայնքում խմելու ջրի նոր բաք կառուցելու և ջրագծերի վերանորոգման համար:

Նշենք, որ Արևիկ համայնքում համահամայնքային քննարկումն անցկացվել է երբ արդեն 2008թ. տարեկան բյուջեն հաստատվել էր: Այսինքն Արևիկ համայնքի ղեկավարությունը պատրաստակամություն է հայտնել բնակչության հետ քննարկել կապիտալ ծախսերի առաջնահերթությունը այն բանից հետո, երբ բյուջեն արդեն ընդունված էր: 2008 թվականի բյուջեով արդեն իսկ նախատեսված էին այլ ծրագրերի իրականացում, սակայն համահամայնքային քննարկումից հետո բյուջեն ամբողջությամբ փոխվեց՝ համապատասխանեցվելով բնակչության արտահայտած կարծիքին:

Համահամայնքային քննարկումը բավական մեծ ազդեցություն ունեցավ Արևիկ համայնքում որոշումների կայացման գործընթացում բնակչության ներգրավման տեսանկյունից: Բնակիչներն իրենք ներգրավվեցին բյուջեի կազմման գործընթացում, համայնքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը և քվեարկության արդյունքում իրենց կողմից ընտրված հիմնախնդիրը՝ խմելու ջրագծերի վերանորոգումը, ներգրավվեց 2008 թվականի բյուջեում:

Արձանագրենք, որ Արևիկ համայնքի փորձը ցույց է տալիս, որ համահամայնքային քննարկում կարելի է իրականացնել ցանկացած պահի, և պարտադիր չէ, որ այն տեղի ունենա բյուջեի հաստատումից առաջ: Ամեն դեպքում սա իրականացնելու համար անհրաժեշտ է.

– գիտակցել, որ ընդունված որոշումը վերջին ատյանի ճշմարտություն չէ երբևէ,
– լինել բաց՝ նոր մտքեր ու առաջարկություններ լսելու համար,
– պատրաստակամություն ունենալ փոխելու սեփական տեսակետն ու կայացրած որոշումը, մասնավորապես՝ բյուջեի մասին,
– վստահել համահամայնքային քննարկման գործընթացին և արդյունքներին, այսինքն, որ այս մոդելը կաշխատի և արդյունավետորեն կբացահայտվեն համայնքի առաջնահերթ խնդիրները:

Վստահության գործոնը

Արևիկ համայնքի 2008 թվականի բյուջեն հաստատված է, սակայն գյուղապետարանը հրավիրում է մարդկանց քննարկման, լսում է նրանց կարծիքը ու փոփոխություն է մտցնում համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում և 2008 թվականի բյուջեում: Սա արդեն խոսուն փաստ է, որ տեղական ինքնակառավարման մարմինը քայլ է անում դեպի բնակչությունը, որին ի պատասխան բնակչությունն է արձագանքում ղեկավարության այդ քայլին՝ հասարակական վստահության ցուցաբերման կամ դրա աստիճանի բարձրացման ձևով: Ինչպես նշում է համայնքի ղեկավարը. «Բնակիչները շատ գոհ և ոգեշնչված էին, որ գյուղում տեղի ունեցավ համահամայնքային քննարկում և արդյունքում ընդունվեց խմելու ջրագծերի վերանորոգման ծրագիրը: Բնակչությունը զգաց, որ իրենց առաջարկները գյուղապետարանն ընդունում և կատարում է: Այդ առումով կարելի է ասել, որ գյուղապետարանի նկատմամբ համայնքի ունեցած վստահությունը գնալով մեծանում է, ինչն

էլ ծառայում է հօգուտ ողջ համայնքի: Համայնքի բնակիչները զգացին, որ որոշակի դրական տեղաշարժ եղավ, նրանք ականատես եղան իրենց կայացրած որոշման իրագործմանն ու արդյունքներին: Ջրաֆիկացման աշխատանքների իրականացման ողջ ընթացքում բնակիչները հաճախակի գալիս հետաքրքրվում էին գործերի ընթացքով»:

Խմելու ջրագծերի վերանորոգման աշխատանքների մի մասն արդեն կատարված է՝ ամբողջությամբ ջրաֆիկացվել են երկու փողոցներ: Դրանք ամենավատթար վիճակում գտնվող փողոցներն էին, որոնց բնակիչները ամենից ավելի էին դժգոհում համահամայնքային քննարկման ընթացքում: Այդ տնտեսությունները երկար տարիներ ջուր չէին ունեցել: Առաջիկայում նախատեսվում է ամբողջ գյուղը ջրով ապահովել. ջրաֆիկացման աշխատանքները կշարունակվեն 2009 թվականին:

Համահամայնքային քննարկումն ու հարկահավաքության գործընթացը

2008 թվականին որոշակի դրական փոփոխություն է արձանագրվել հարկերի հավաքագրման ոլորտում, քանի որ հենց համահամայնքային հանդիպման ժամանակ նշվեց, որ այդ աշխատանքները հնարավոր կլինի իրականացնել միայն այն դեպքում, երբ բնակիչները կանոնավոր կերպով վճարեն հարկերը: Ինչպես նշում է համայնքի ղեկավարը. «Մենք ասում ենք, որ իրենց մուծած գումարների հաշվին ենք բոլոր աշխատանքները կատարում՝ հողի հարկի, գույքահարկի և տարատեսակ վարձավճարների:»





Հարկերի հավաքագրումը նախորդ տարիների համեմատ ընդհանուր առմամբ բարելավվել է, սակայն կան մի շարք գործոններ, որոնք ազդում են բնակչության վճարունակության վրա: Նախ Արևիկ գյուղը հիմնակա-

նում հայտնի է իր խաղողագործությամբ և գյուղի բնակչության եկամուտը ստացվում է խաղողի իրացումից՝ օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին: Խաղողի բերքի հինսունհինը տոկոսը սեղանի խաղող է, ոչ արդյունաբերական նշանակության և հիմնականում արտահանվում է Ռուսաստան: Սակայն 2008 թվականին եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով մեծ բերք չի ստացվել, ինչն էլ ազդել է բնակիչների կողմից հարկեր վճարելու կարողության վրա: Երկրորդ խոչընդոտող գործոնը ճանապարհների ոչ բարվոք վիճակն է, ինչն էականորեն խոչընդոտում է բերքի մեքենաներով արտահանմանը: Անկախ նշված խոչընդոտներից, տեսնում ենք, որ հարկերն իրոք հավաքվել են: Թերևս կարելի է արձանագրել, որ Արևիկում համահամայնքային քննարկումը դրական ազդեցություն թողեց հարկահավաքման վրա:

Համայնքի ղեկավարը նշում է. «Ընթացքում առանձին բնակիչներ գալիս հարցնում էին, թե ինչքան գումար է ծախսվել: Գյուղապետարանը պատրաստակամորեն տրամադրում էր նրանց տեղեկություն ծախսերի մասին: Դա իրենց գումարն է, և մենք, վերջիվերջո, այդ գումարները նորից հետ ենք վերադարձնում իրենց՝ ապրանքի տեսքով, պատրաստի արդյունքի տեսքով: Մարդկային զարգացման միջազգային կենտրոնն էլ օգնեց ինձ բնակիչների հետ ավելի արդյունավետ համագործակցելու հարցում»:

Արդյո՞ք բոլոր համայնքի ղեկավարներն են գիտակցում այն, ինչ արտահայտում է Արևիկ համայնքի ղեկավարը. «գյուղապետարանի միջոցները համայնքի բնակչության գումարներն են, որոնք հետ են վերադարձվում հանրային ապրանքի տեսքով»: Թերևս առավելապես տարածված է այն մտածելակերպը, թե հարկերը դրանք պարտավորություններ են, որոնք բնակիչները պետք է իրականացնեն, իսկ համայնքի ղեկավարությունը ինքնուրույն պետք է որոշի դրանք ծախսելու ուղղություններն ու ձևերը: Երբեմն համայնքի ղեկավարների հետ զրուցելիս, հարցազրույց վարելիս, կամ մամուլում արտահայտած տեսակետներում լսում ես. «Մենք իրականացրեցինք..., գյուղապետարանը այս ծրագիրն իրագործեց, և այլն», առավել ևս չենք խոսում «ես արեցի» մտածողության խնդրի մասին: Մինչդեռ Արևիկ համայնքի դեպքը արտահայտում է նոր մտածողություն և ժողովրդավարության հիմքը հանդիսացող պարադիգմ. «Բնակիչն է պետությունը»:

«Ես մասն եմ համայնքի»

Արևիկ համայնքում հետաքրքիր արդյունք գրանցվեց 4-րդ՝ «Սպոր-

տային հրապարակի բարեկարգում և ընդլայնում» սցենարի քննարկման ընթացքում: Թեպետ համայնքի բնակիչների կողմից կարևորվում էր խնդիրը, գիտակցվում էր սպորտի զարգացման կարիքն ու նշանակությունը, սակայն այս ծրագիրը ոչ մի ձայնի չարժանացավ քվեարկության արդյունքում: Մեջբերենք քննարկումից մեկ միտք, որպեսզի պարզ դառնա այս «հանելուկի» բացատրությունը: «Մեխանիզատորներ ունենք, որոնք հանուն գյուղի ամեն ինչ արել են, առանց մի կոպեկի: Էլի կանենք, դուք միայն ջրի հարցը լուծեք»: Ընդհանուր շահ հասկացության մակարդակը գյուղում, թերևս, բարձր է, և մարդիկ պատրաստ են գյուղի զարգացման համար ներդրում ու անհատույց աշխատանքներ կատարել: Վերադառնալով առավելագույն ձայներ հավաքած խմելու ջրի ծրագրին՝ մեջբերենք մի քանի փաստեր, որոնք հավաքագրվել էին մեր կողմից պարբերաբար իրականացվող մոնիտորինգի ընթացքում.

– Համայնքի ղեկավարի առաջարկով խմելու ջրի ջրագծերի մոնտաժման և բաքի տեղադրման աշխատանքներում իր ֆինանսական ներդրումն ունեցավ «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» հասարակական կազմակերպությունը: Ֆինանսավորումը կատարվեց պետական բյուջեի հաշվին՝ շուրջ 545 հազար դրամի չափով: Ջրագծերի վերանորոգման հետ կապված օժանդակ աշխատանքներին մասնակցած տասը բանվորներներ վարձատրվեցին քսանմեկ աշխատանքային օրերի դիմաց:
– Համայնքի բնակիչները ջրաֆիկացման աշխատանքների իրականացման ողջ ընթացքում ակտիվ մասնակցություն են ունեցել՝ անհատույց ու կամավորության հիմունքներով:

Ամփոփելով նշենք, որ «համայնք» հասկացությունն Արևիկում իրոք ձևավորված է, և գյուղի այս «ակտիվը» անհրաժեշտ է զարգացնել ու ներդնել հանուն գյուղի զարգացման՝ զարգացնելով փոխադարձ վստահությունն ու խթանելով համատեղ աշխատանքը: Այս դեպքի վերլուծությունն ավարտենք Արևիկ համայնքի ղեկավարի խոսքերով. «Հաջորդ տարվա բյուջեի պլանավորման ժամանակ ավելի ճիշտ է հենց այս ճանապարհով համայնքի բնակիչների հետ համագործակցել: Նրանց հետ է պետք քննարկել ու խորհրդակցել: Հիմնախնդիրներն իրենցն են, իրենք էլ թող առաջարկություններ անեն: Իսկ մենք էլ պատրաստ ենք քննարկել և լուծումներ գտնել այս կամ այն տարաձայնությունների առկայության պարագայում: Համահամայնքային քննարկման տարբերակն ավելի արդյունավետ է, քան միանձնյա կամ աշխատակազմի ուժերով բյուջեի

կազմումը: Ես զգացի համայնքի հիմնախնդիրները միասին քննարկելու ազդեցությունը, վերջիվերջո, մենք կառավարում ենք բնակիչների գումարները, ուրեմն իրենք իրավունք ունեն տեղեկացված լինելու, թե իրենց վճարած գումարները մենք ինչի վրա ենք ծախսում»:

«Ախր, որ հարկ չենք մուծում, էդ գույքն էլ ոիրտեղից պիտի առնենք...»:

Ոչինչ, ոտքի վրա էլ կքննարկենք...

ՀԱՄԱՅՆՔ՝ ԱՇՈՏԱՎԱՆ

Մարզ՝ Սյունիք

Տեղական ՀԿ՝ «Սիսիանի զարգացման կենտրոն»

Աշոտավան համայնքի 2008 թվականի բյուջեում ներառելու առաջարկով քննարկման դրված սցենարները.

1. *ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, լուսավորության համակարգի վերանորոգում,*
2. *հանդամիջյան ճանապարհների բարեկարգում,*
3. *կոյուղագծերի մասնակի վերանորոգում,*
4. *գերեզմանատուն տանող ճանապարհի բարեկարգում, լուսավորության և խմելու ջրի խողովակի մոնտաժում:*

Սցենարները՝ հակիրճ

1. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, լուսավորության համակարգի վերանորոգում

Խնդիրը.....

1970-ականներին նոր բնակավայրում հիմնվելուց հետո, Աշոտավան համայնքում կառուցվեց և շահագործման հանձնվեց այդ ժամանակների պահանջներին բավարարող, շուրջ 3կմ ընդհանուր երկարություն ունեցող ներգյուղական ճանապարհների ամբողջությամբ ասֆալտապատ և լուսավորված ցանց:

Խորհրդային կարգերի փլուզումից հետո, ինչպես և հանրապետության մյուս համայնքներում, Աշոտավանում նույնպես ենթակառուցվածքների համեմատաբար զարգացած համակարգը հայտնվեց բացիթողի վիճակում: Տարիների ընթացքում ճանապարհների ասֆալտի ծածկույթն ամբողջովին մաշվեց, գունավոր մետաղների «որսորդների» ջանքերի շնորհիվ գյուղի լուսավորության սյուներն ամբողջությամբ ամայացան: Երեկոյան ժամերին բնակիչները խուսափում են դուրս գալ տներից՝ վստահ չլինելով, թե հանդիպած գազանը շուն կլինի, թե գայլ:

Առաջարկություն.....

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տարվում են աշ-

խատանքներ ճանապարհային ցանցի կապիտալ վերանորոգումը հանրապետական նշանակության ծրագրերի մեջ ներառելու ուղղությամբ: Մինչ այդ, հաշվի առնելով հարկային վարչարարության կատարելագործման հետևանքով համայնքի բյուջեի եկամուտների հավաքագրման ցուցանիշի բարձրացումը և ճանապարհային ցանցի շահագործումն ապահովելու անհրաժեշտությունը, համայնքի իշխանությունները նախատեսում են 2008 թվականի բյուջեում առանձնացնել շուրջ 2 մլ դրամ՝ ներհամայնքային ճանապարհները հարթեցնելու, առանձին հատվածները խճապատելու, և լուսավորության համակարգը վերականգնելու նպատակով:

2. Հանդամիջյան ճանապարհների բարեկարգում

Խնդիրը.....

Աշոտավան համայնքը Սիսիանի տարածաշրջանում հողային ֆոնդի տեսանկյունից աղքատ համայնքներից մեկն է: Բացի այդ, համայնքի սեփականություն հանդիսացող շուրջ 415հա հողատեսքերից մոտ 65 տոկոսն անջրդի են, որոնք հիմնականում համայնքի բնակչության սեփականություն հանդիսացող վարելահողերն են: Վերլուծությունները ցույց են տալիս, որ այս պայմաններում 1հա-ից ստացվող եկամուտները խիստ ցածր են:

Իրավիճակն էականորեն բարդացնում է նաև դեպի հանդերը տանող ճանապարհների վատթարագույն վիճակը: Դրանք գրեթե բացակայում են, արդյունքում լրացուցիչ ծախքեր են առաջացնում գյուղացիների համար: Գրեթե անհնար է գյուղտեխնիկան տեղափոխել այդ ճանապարհներով մեխանիզացված վարուցանք կամ բերքահավաք կազմակերպելու նպատակով: Անձրևների ժամանակ առաջացած սելավային հոսքերի պատճառով առկա ճանապարհները դառնում են ամբողջովին անանցանելի:

Առաջարկություն.....

Թեպետ համայնքի իշխանությունների կողմից ժամանակ առ ժամանակ աշխատանքներ տարվում են հանդամիջյան ճանապարհների բարեկարգման ուղղությամբ, սակայն առավել արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է իրականացնել առավել մեծածավալ հարթեցման և խճապատման աշխատանքներ՝ դեպի հանդերը տանող հիմնական ճանապարհի 300մ հատվածի վերանորոգում, սելավատարների հորատում և 15-20մ երկարությամբ դրենաժի կառուցում: Այս ամենը անելու համար առաջարկվում է համայնքի 2008թ. բյուջեում նախատեսել շուրջ 2մլն դրամ՝ հանդամիջյան ճանապարհների բա-

ռեկարգման նպատակով:

3. Կոյուղագծերի մասնակի վերանորոգում

Խնդիրը.....

Աշոտավան գյուղում, 1970-ականներին նոր վայրում վերահիմնելու ընթացքում, կառուցվեց ջրահեռացման և կոյուղու կենտրոնացված համակարգ՝ մաքրման կայանով: Չնայած վերջինս այդպես էլ չգործեց, սակայն կոյուղու և ջրահեռացման համակարգն այնուամենայնիվ մինչ այժմ շարունակում են ծառայել համայնքի բնակչությանը:

90-ականների տնտեսական ճգնաժամը իր ազդեցությունը թողեց գյուղի բոլոր ենթակառուցվածքների, այդ թվում՝ կոյուղու համակարգի վրա: Ժամանակի ընթացքում ֆինանսական միջոցների պակասի, ներդրումների բացակայության արդյունքում այն ավելի ու ավելի է մաշվում, հաճախակի են դառնում վթարները:

Համայնքի բնակչության, իշխանության և այլ պատասխանատու մարմինների կողմից ժամանակ առ ժամանակ իրականացվում են առանձին հատվածների վերանորոգման աշխատանքներ, որոնք սակայն չեն ապահովում անհրաժեշտ արդյունավետություն:

Առաջարկություն .....

Համայնքի իշխանությունների կողմից վարվում են աշխատանքներ կոյուղու և ջրահեռացման համակարգը համապետական ներդրումային ծրագրերի շրջանակներում վերանորոգելու ուղղությամբ: Մինչ այդ, առաջարկվում է համայնքի 2008թ. բյուջեում նախատեսել շուրջ 2մլն դրամ գյուղի կոյուղու համակարգի մայր խողովակաշարերի մասնակի վերանորոգման, խցանումների մաքրման և այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացման համար:

4. Գերեզմանատուն տանող ճանապարհի բարեկարգում, լուսավորության և խմելու ջրի խողովակի մոնտաժում

Խնդիրը.....

Գյուղի տարածքում գտնվող գերեզմանոցում, 1860-ականներին գյուղի հիմնադրումից ի վեր իրենց հանգրվան են գտել գյուղի կայացման համար մեծ ներդրում ունեցող մարդիկ:

Գյուղի գերեզմանոցը, որը փաստորեն ունի ավելի քան հարյուր հիսուն

տարվա պատմություն, այսօր կտրվել է գյուղից այն պարզ պատճառով, որ դեպի գերեզմանատուն տանող ճանապարհը խիստ անբարեկարգ է, իսկ երբեմն դառնում է նաև բացարձակապես անանցանելի: Գյուղի տարածք գայլերի հաճախակիացող ներխուժումները դարձնում են գերեզմանատուն այցելությունը իսկական փորձություն, իսկ ջրի պակասությունը ջնջել է մեր պատկերացումն այն մասին, որ գերեզմանատունն, ի վերջո, հանգստի գոտի է. այնտեղ է գտնվում Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակի հուշարձանը, իսկ քիչ վերևում՝ նորակառույց Կաթողիկե Սուրբ Խաչ եկեղեցին:

Առաջարկություն .....

Համայնքի իշխանությունները 2008 թվականի ընթացքում նախատեսում են հարթեցնել գյուղից գերեզմանատուն տանող շուրջ 500մ երկարությամբ ճանապարհը, իրականացնել խճապատում, ճանապարհի երկայնքով և գերեզմանատան տարածքում կանգնեցնել լուսավորության 3 սյուներ՝ լուսամփոփներով, ապահովել էլեկտրաէներգիայի սնուցում՝ մոնտաժելով շուրջ 500մ էլեկտրական լար, գերեզմանատուն հասցնել ջուր՝ շուրջ 300մ երկարությամբ խողովակով:

Քվեարկության արդյունքները

	Կողմ
Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, լուսավորության համակարգի վերանորոգում	52
Հանդամիջյան ճանապարհների բարեկարգում	4
Կոյուղագծերի մասնակի վերանորոգում	44
Գերեզմանատուն տանող ճանապարհի բարեկարգում, լուսավորության և խմելու ջրի խողովակի մոնտաժում	1
Ընդամենը	101

ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համահամայնքային քննարկման արդյունքները և համայնքի բյուջեն

Աշոտավան համայնքի ավագանու որոշման քաղվածքում կարդում ենք հետևյալը.

– 1,2 մլն դրամ հատկացնել Աշոտավան համայնքի գյուղամիջյան ճանապարհների բարեկարգման և լուսավորության համակարգի վերանորոգման աշխատանքներին,
– 200,0 հազար դրամ հատկացնել համայնքի կոյուղու համակարգի մասնակի վերանորոգմանը:

Քննարկման արդյունքները ցույց են տալիս միանգամից երեք սցենարների՝ գյուղամիջյան ճանապարհների, հանդամիջյան ճանապարհների և կոյուղագծերի վերանորոգման ծրագրերի կարևորությունը: Իսկ քվեարկությունը հստակ առանձնացրել է երկու՝ կոյուղագծերի վերականգնման և գյուղամիջյան ճանապարհների վերականգնման առաջնահերթությունը: Բնակիչներից յուրաքանչյուրը քվեարկության ընթացքում ուներ մեկ ձայնի իրավունք, և եթե քննարկման ընթացքում բնակչի համար կարևորների շարքին է դասվում միաժամանակ մի քանի խնդիր, ապա քվեարկության ընթացքում ձայնը տալիս է դրանցից առավել առաջնահերթի օգտին: Դժվար է վերջնական որոշում կայացնել, երբ երկու ծրագիր քիչ թե շատ հավասար ձայներ են ստանում բնակչության կողմից: Ահա սա է պատճառը, որ քննարկման արդյունքները՝ բնակչության կողմից արտահայտած կարծիքները, իրենց տեսակետը հիմնավորող փաստարկները, արտահայտված զգացումներն ու մտքերը նույնպես չափազանց կարևոր են որոշում կայացնելու համար: Սա է պատճառը, որ Աշոտավան համայնքում որոշվել է բյուջեից միջոցներ հատկացնել միանգամից երկու ծրագրի համար: Ի լրումն, 2008 թվականին սկսվեց բարեկարգվել նաև հանդամիջյան ճանապարհները՝ այսինքն, ոչ միայն քվեարկության արդյունքներն են հաշվի առնվել, այլև բնակչության արտահայտած մտահոգությունները:

2008 թվականին կոյուղագծերի վերականգնման ծրագրի շրջանակներում շուրջ յոթանասուն մետր կոյուղագիծ ամբողջությամբ նորացվել է և շուրջ 100-120 մետր՝ մասնակիորեն վերանորոգվել, ինչի արդյունքում մոտավորապես երեսուն ընտանիք այժմ ունի կոյուղագիծ: Թեպետ, ինչպես հավաստում է համայնքի ղեկավարը. «Իհարկե շատ անելիքներ կան, կոյուղագծերի սպասարկման համար գումար չենք գանձում, մինչդեռ անընդհատ վերանորոգում է արվում, շուտով յոթ-ութ ընտանիք նույնպես

կոյուղագծի վերանորոգման աշխատանքների արդյունքները կտեսնեն»: Իրականացվել է նաև հանդը տանող ճանապարհների բարեկարգման ծրագիրը: Երկու ճանապարհ կա, և երկու ճանապարհներն էլ վերանորոգվել են մինչև գյուղատնտեսական աշխատանքների սկիզբը, որոնք մատչելի են դարձել գյուղատնտեսական տեխնիկայի համար ու արդեն իսկ ծառայել են գյուղացիներին:

Եզրակացությունը մեկն է. Աշոտավան գյուղի համահամայնքային քննարկումն իր ազդեցությունն ունեցավ բյուջեի, ինչպես նաև համայնքի իշխանությունների բուն աշխատանքների վրա:

Վստահության գործոնը

Մարդկանց մտահոգությունները լսվեցին ու իրականություն դարձան: Թեպետ, քանի որ այս խնդիրները մեկ տարում հնարավոր չէ լուծել, ապա վստահության գցված սերմը պետք է «խնամել, հոգ տանել և մեծացնել»: Գյուղապետարանը ոչ միայն արձագանքել է բնակչության կողմից առաջացրած խնդիրներին, այլև այլ ծրագրերի զուգակցման միջոցով լրացուցիչ օժանդակություն և առավել արդյունք ապահովել, քան նախատեսվում էր:

Գերազանցել պլանավորվածը, նշանակում է կերտել վստահություն, սակայն հաճախ նույնիսկ նախատեսվածի գերազանցումով կարող են չբավարարվել ակնկալիքները: Սա ցանկացած իշխանություն-հասարակություն հարաբերությունների մշտական խնդիր է: Այս իրավիճակն է հենց դրդում, որ մասնակցային ժողովրդավարության մոդելն սկսի աշխատել, որ մարդիկ մասնակցեն գյուղի խնդիրների քննարկմանը, վեր հանեն դրանք, գիտակցեն, որ ոչ բոլոր խնդիրներն է հնարավոր միաժամանակ լուծել, ինչպես նաև զգան գյուղի հիմնախնդիրները լուծելու պատասխանատվության բեռը: Համահամայնքային քննարկման մասին համայնքի ղեկավարը նշում է. «Այս միջոցառումն իրոք շատ լավ օրինակ է խնդիրները վեր հանելու, բացահայտելու համար: Պլանավորում ենք նման միջոցառում կրկին անցկացնել: Այս ձևն իրոք աշխատող է. բնակչության հետ քննարկման միջոցով սահմանել առաջնահերթությունները»: Թերևս այս դեպքում է, որ պետք է հիշենք հին հայկական ասացվածքը. «գեղ կանգնի, գերան կկոտրի»:

Համահամայնքային քննարկումն ու հարկահավաքության գործընթացը

2008 թվականին Աշոտավան գյուղի հարկերի հավաքագրումը էա-

կան աճ է արձանագրել 2007-ի համեմատ: Դեռևս տարին չավարտված, երբ հարկային մուտքերի վերջնական արդյունքները պարզ չէին, հարցազրույցի ընթացքում Աշոտավան համայնքի ղեկավարը նշել էր, որ գյուղում հարկահավաքման խնդիր չկա, մարդիկ գիտակցաբար մուծում են իրենց հարկերը, իրենց ծանուցագրերը ստանում ու կամավոր գալիս են հարկերը մուծում: Նույնիսկ սոցիալապես անապահով ընտանիքներն են պատրաստակամ դարձել մուծելու հարկերը, սակայն ի վիճակի չեն: Ըստ համայնքի ղեկավարի, այս շերտը, թեկուզ դանդաղ, բայց սկսել է վճարումներ կատարել: Համայնքի ղեկավարի կողմից բարձրացրած հիմնական խնդիրը նախկին տարիների ապառքներն են, որոնք մեծ չափերի են հասել: Ու այստեղ էլ ինչ-որ օբյեկտիվ պատճառներ կան. «Մարդիկ մեկնաբանում են, որ անջրդի հողերը ջրովի հողերի հիմքով են հաշվարկվել և համարում են, որ այդ հաշվարկն օբյեկտիվ չէ, և իրական պատկերը չի արտացոլում»:





2008 թվականի տվյալներից երևում է, որ ոչ միայն հարկերն են էականորեն աճել, այլև գրանցվել է ապառքների էական կրճատում: Հողի հարկի գծով ապառքները մնացել են գրեթե նույնը՝ նշված օբյեկտիվ պատճառներով պայմանավորված, սակայն գույքահարկի ապառքները նվազել են: Եթե համայնքի ղեկավարը փորձել է գերազանցել բնակչության կողմից սահմանված առաջնահերթությունն ու ակնկալվող ծրագրերի իրականացումը, ապա բնակչությունն էլ գերազանցել է իշխանությունների ակնկալիքները՝ հարկերի վճարման մասով: Թերևս սա է այն դրական ուղին, երբ հարկերը վերածվում են ծրագրերի, իսկ ավելի «շատ» հարկերը հնարավորություն են ընձեռում արագացնել ծրագրերի իրականացումն ու մեծացնել ծավալները:

«Ես մասն եմ համայնքի»

Աշոտավան համայնքում իրականացված համահամայնքային քննարկման ու 2008 թվականին դրա արդյունքների իրականացման այս դեպքը բացահայտում է մի առանձնահատկություն, որը կարող է համակարգվել և օգտագործվել այլ համայնքների կողմից: Կոյուղագծերի վերականգնումը կատարվում է համայնքի բյուջեի հաշվին, մինչդեռ բնակչությունից կոյուղագծերի սպասարկման ծառայությունների դիմաց գումարներ չեն գանձվում: Փաստորեն յուրաքանչյուր առանձին տնային տնտեսության կողմից հստակորեն ընկալվում է այս ծրագրի շահեկանությունը. Յուրաքնչյուր կոնկրետ ընտանիք տեսնում և գիտակցում է, որ իր կոյուղագիծն է վերանորոգվում՝ ընդհանուր միջոցների հաշվին: Համայնքի ղեկավարը նշում է. «Մարդիկ կամավոր օգնում էին, հատկապես, երբ իրենց տան կոյուղագիծն էր, սակայն մասնագիտական գործի կարիք միշտ եղել է, իսկ այդ աշխատանքների դիմաց, իհարկե, վարձատրվել են մասնագետները»: Սա բավական հետաքրքիր լուծում է, երբ մասնավոր և համայնքային ներդրումների արդյունքում աշխատանքների արդյունավետությունը բարձրանում է ու ավելի մեծ ծավալների և արագ աշխատանքներ են կատարվում: Բնակչությունը, փաստորեն, իր ներդրումն է ունենում աշխատանքի ձևով, իսկ գյուղապետարանը ապահովում է տեխնիկան, միջոցները, մասնագիտական աշխատանքը:

Մասնավոր և համայնքային ուժերի համադրման մոդելը կարող է բազմապատիկ ազդեցություն ունենալ գյուղի զարգացման համար: Թեպետ այս դեպքը հեշտ է շարադրել, իրականում այն դժվար իրականանալի գործընթաց է, քանի որ ինչ-որ պահից սոցիալական արդարության գաղափարը կամ ավելի ճիշտ դրա չպահպանումը կարող է խանգարել մասնավոր-համայնք համագործակցությանը: Բավական է, մեկը չաշխատի, կամ իր ներդրումը չունենա և տվյալ աշխատանքների ամբողջ ծանրությունն ընկնի համայնքի բյուջեի վրա, երբ մյուս՝ իր աշխատանքով ներդրում արած համայնքի անդամը դժգոհություն արտահայտի: Ըստ համայնքի ղեկավարի նման խնդիրներ գյուղում չեն ծագել, քանի որ. «Գյուղը շատ համախմբված է. այսօր գյուղում շերտավորում, բևեռացում, սոցիալական խիստ տարբեր խմբեր չկան»:

Ամեն դեպքում, պետք է այս մոդելով զինվել և այն կյանքի կոչել, իսկ մեր առաջարկությունն այն է, որ ապագա համահամայնքային քննարկման առարկա դարձվեն այսպիսի հարցեր, որոնք կտան պատասխաններ, թե

բացի գյուղի բյուջեի միջոցներից ինչ այլ ակտիվներ ունի գյուղը, որ կարող է ներդնել ու նպաստել կատարավող աշխատանքներին:

Քննարկումների համար դպրոցի մարզադահլիճն էլ լավ է...



Գրառողը մուտքագրում է հնչած մտքերը:

«Տեսնես էս մեծերն ինչի՞ մասին են էսպես տաք-տաք վիճում...»

ՀԱՄԱՅՆՔ՝ **ԱՐԶԱԿԱՆ**

Մարզ՝ Կոտայք

Տեղական ՀԿ՝ «Չարենցավանի համայնքային աջակցության կենտրոն»

Արզական համայնքի 2009 թվականի բյուջեում ներառելու առաջարկով քննարկման դրված սցենարները.

1. *գերեզմանոց տանող ճանապարհահատվածի վերանորոգում և լուսավորության համակարգի մոնտաժում,*
2. *երիտասարդական պուրակի կառուցման աշխատանքների շարունակում,*
3. *ոռոգման ցանցի վերանորոգում,*
4. *մշակույթի տան հիմնանորոգում:*

Սցենարները՝ հակիրճ

1. Գերեզմանոց տանող ճանապարհահատվածի վերանորոգում և լուսավորության համակարգի մոնտաժում

Խնդիրը.....

Արզական գյուղի երբեմնի ասֆալտապատ ճանապարհային տնտեսությունը էապես մաշված է: Մեծ ու փոքր ակոսներով ներհամայնքային ճանապարհները լրջորեն խոչընդոտում են թե հետիոտնի ու մեքենաների երթևեկը, թե համայնքի տնտեսական զարգացմանը: Դրանք չոր եղանակներին դառնում են փոշու աղբյուր, թաց եղանակներին՝ ցեխի ու կեղտաջրերի կուտակման տեղ:

Յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեից միջոցներ են տրամադրվում փողոցների ասֆալտապատման նպատակով: Մասնավորապես 2007-2008 թվականներին ասֆալտապատվել են շուրջ 3000 գմ. ճանապարհներ: Սակայն ավելի քան 15 կմ երկարություն ունեցող ողջ ցանցի վերականգնումը պահանջում է երկարաժամկետ և շարունակական ներդրումներ և աշխատանք:

Առաջարկություն.....

2009 թվականին համայնքի իշխանությունների կողմից նախատես-

վում է իրականացնել ևս մի հատվածի, դեպի գերեզմաններ տանող շուրջ 500 գմ. երկարությամբ ներհամայնքային փողոցի ասֆալտապատում և լուսավորության համակարգի մոնտաժում:

Համայնքի ինքնակառավարման մարմինների աշխատանքների բարելավման, հարկային վարչարարության կատարելագործման և դրա հետևանքով համայնքի բյուջեի եկամուտների հավաքագրման ցուցանիշի բարձրացման շնորհիվ հնարավորություն է ստեղծվել համայնքի 2009թ. բյուջեում նախատեսել շուրջ 60 մլն դրամ՝ աշխատանքներն իրականացնելու համար:

Նախատեսվում է իրականացնել համապատասխան նախագծահաշվարկային աշխատանքներ, 500 գմ. ճանապարհահատվածի ասֆալտապատում ողջ լայնությամբ, սելավատար առուների վերականգնում, համապատասխան հզորության տրանսֆորմատորի տեղադրում, լուսավորության սյուների տեղադրում, էլեկտրական լարերի ու լուսավորության սարքավորումների մոնտաժում:

2. Երիտասարդական պուրակի կառուցման աշխատանքների շարունակում

Խնդիրը.....

Չնայած Արզական գյուղն ունի շուրջ 200 տարվա պատմություն, տարածքի բնակլիմայական պայմաններն ու առկա աղբյուրները մշտապես հրապուրել են հանգստացողներին ու զբոսաշրջիկներին, առկա են բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ, սակայն գյուղի աշխատավորի հանգիստը կազմակերպելու համար պայմաններ գյուղում, որպես այդպիսիք, բացակայում են: Խոսքը, մասնավորապես, հանգստի կազմակերպման և զանգվածային միջոցառումների անցկացման վայրի մասին է:

Պետք է փաստել նաև, որ տոների կամ հասարակական միջոցառումների ժամանակ համայնքի բնակչության կողմից որպես հավաքատեղի օգտագործվում է գյուղի 1941-1945 թթ. Երկրորդ աշխարհամարտի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողի շրջակա տարածքը, որը, սակայն, նախատեսված չլինելով նման նպատակների ծառայելու համար, որոշակի անհարմարություններ է պատճառում թե՛ միջոցառման մասնակիցներին և թե՛ համայնքի բնակչությանը:

Առաջարկություն.....

2008 թվականի ընթացքում խնդիրը կարգավորելու նպատակով հա-

մայնքի իշխանությունների կողմից ձեռնարկվեցին համապատասխան միջոցներ և բյուջեից հատկացվեց շուրջ 2 մլն դրամ վերոհիշյալ հուշարձանի շրջակայքում «Երիտասարդական պուրակ» հիմնելու ուղղությամբ: Արդեն իսկ իրականացվել են նախագծահաշվարկային աշխատանքներ, տարածքը հարթեցվել է, գցվել են նախատեսված շինության հիմքերը և որոշակիորեն ուրվագծվել է ապագա պուրակի հատակագիծը: Ծրագիրը նախատեսված է ավարտին հասցնել մինչև 2011 թվականը, ուստի հաշվի առնելով, որ որոշակիորեն բարձրացել է համայնքի բյուջետային գործընթացի արդյունավետությունն ու բարելավվել է հարկահավաքման ցուցանիշը, համայնքի իշխանությունները նախատեսում են 2009 թվականի տարեկան բյուջեում առանձնացնել շուրջ 20 մլն դրամ ծրագրի իրագործումը շարունակելու նպատակով:

2009 թվականին նախատեսվում է բարեկարգել նախագծով սահմանված հողատարածքը, կառուցել և ավարտուն տեսքի բերել բեմահարթակը և ապահովել ընդունելի պայմաններ մշակութային և հասարակական մասսայական միջոցառումներ անցկացնելու համար:

3. Ոռոգման ցանցի վերանորոգում

Խնդիրը.....

Արզական գյուղի ոռոգման ջուրը համայնք է հասնում հարևան գյուղերով անցնող բաց ջրատարով, որը, նախագծված ու շահագործման հանձնված լինելով դեռևս 1960-ականներին, և՛ բայորապես, և՛ ֆիզիկապես մաշվել է և խոչընդոտում է համայնքի գյուղատնտեսության ոլորտի ինտենսիվ զարգացմանը:

Համայնքի ինքնակառավարման մարմինների կողմից տարվում են աշխատանքներ յուրաքանչյուր տարի մասնակի վերանորոգումների ուղղությամբ, սակայն հարցը պահանջում է կապիտալ մեծածավալ ներդրումներ:

Առաջարկություն.....

Համայնքի ինքնակառավարման մարմինների աշխատանքների բարելավման, հարկային վարչարարության կատարելագործման և դրա հետևանքով համայնքի բյուջեի եկամուտների հավաքագրման ցուցանիշի բարձրացման շնորհիվ հնարավորություն է ստեղծվել Արզական համայնքի 2009թ. բյուջեում նախատեսել շուրջ 60մլն դրամ ոռոգման ջուրը հիմնական ջրատարից համայնքի ոռոգման ներքին ցանց փակ խողովակաշարով հասցնե-

լու նպատակով: Նախատեսվում է տեղադրել և մոնտաժել շուրջ 2,5 կմ երկարությամբ 300մմ տրամագծով խողովակաշար, որի արդյունքում ներկայում ինքնահոս ոռոգման ցանցի ծածկույթից դուրս գտնվող շուրջ 200 հա վարելահողեր և 280 տնամերձ հողատարածքներ կմտնեն ոռոգման համակարգի սպասարկման տիրույթ:

4. Մշակույթի տան հիմնանորոգում

Խնդիրը.....

Արզական համայնքի մշակույթի տունը, որ հիմնվել է 80-ականներին, գյուղի մշակութային կյանքի համար էական նշանակություն ուներ: Գյուղի մասնագետների ու շնորհալիների ջանքերի շնորհիվ գործում էին ամենատարբեր խմբակներ, ինչպես արվեստի, այնպես էլ տարատեսակ արհեստների ուսուցման գծով: Առկա գույքային և աշխատանքային ռեսուրսները թույլ էին տալիս կազմակերպել գյուղի ինչպես մեծահասակների այնպես էլ երիտասարդության հանգիստն ու ժամանցը, արտադպրոցական կրթությունը:

Սակայն, ինչպես հանրապետության գրեթե բոլոր գյուղական համայնքներում, այնպես էլ Արզականում, 90-ականներին վրա հասած տնտեսական և սոցիալական դժվարությունները դուրս մղեցին մշակութային կյանքը համայնքի առօրեայից: Ֆինանսական բավարար ռեսուրսների բացակայության պատճառով մշակույթի տան շենքն ու գույքը մատնվեցին անուշադրության, որոնք մաշվեցին և դարձան օգտագործման համար ոչ պիտանի:

2007 թվականին համայնքի ուժերով ու համայնքի ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ հիմնանորոգվեց մշակույթի տան տանիքը՝ շուրջ 500 քմ. ընդհանուր մակերեսով: Այնուամենայնիվ, այդքանով շենքի, գույքի և համայնքի մշակութային կյանքն ակտիվացնելու և վերականգնելու հարցը չլուծվեց:

Առաջարկություն.....

Նպատակ ունենալով վերականգնել երբեմնի աշխույժ մշակութային կյանքը համայնքում, բարձրացնել արվեստի դպրոցի գործունեության արդյունավետությունը, համայնքի ինքնակառավարման մարմինները նախատեսում են 2009-2012 թվականների ընթացքում ամբողջապես վերականգնել մշակույթի տունը և դրա լիարժեք գործունեությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է նախատեսել Արզական համայնքի 2009 թվականի բյուջեում շուրջ 15

մլն դրամ՝ ուղղելով.

ա. կամ մշակույթի տանը գործող գրադարանի հատվածի հիմնանորոգմանը,

բ. կամ մշակույթի տան շուրջ 1000քմ. տարածքում նոր դռներ և պատուհաններ տեղադրելուն:

Համայնքի իշխանությունները, ներկայացնելով տվյալ հարցը համահամայնքային քննարկման, ցանկանում են պարզել Ձեր նախընտրությունը 2009 թվականի նախատեսված ներդրման ուղղության հարցում:

Քվեարկության արդյունքները

1. Ծրագրերի առաջնահերթությունը

	Կողմ
Գերեզմանոց տանող ճանապարհահատվածի վերանորոգում և լուսավորության համակարգի մոնտաժում	9
Երիտասարդական պուրակի կառուցման աշխատանքների շարունակում	6
Ոռոգման ցանցի վերանորոգում	34
Ընդամենը	49

2. Մշակույթի տան ոռ հատվածը հիմնանորոգել

	Կողմ
Գրադարանի հիմնանորոգում	12
Դռների և պատուհանների տեղադրում	46
Ընդամենը	58

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համահամայնքային քննարկման արդյունքները և համայնքի բյուջեն

Այս համայնքում քննարկումն անցկացվել է 2009 թվականի բյուջեի համար: Նշենք, որ մոնիտորինգի ընթացքում համայնքի ղեկավարը բավական գոհ է մնացել արդյունքներից և վեր հանված խնդիրները լուծելու

պատրաստակամություն է ստանձնել: Նշենք նաև, որ, թերևս ինչպես գրեթե բոլոր համայնքներում, այնպես էլ Արզականում, ներկայացված խնդիրները նոր չէին բնակչության համար. հիմնական խնդիրը դրանց առաջնահերթության ցանկի որոշումն էր՝ համաձայնեցված ցանկի որոշումը:

Երբեմն կարող է թվալ, որ խնդրի սրությունը, կարևորությունն այնքան ակնհայտ է, որ քննարկման կարիք նույնիսկ կարող է չլինել: Մինչդեռ փորձը ցույց է տալիս, որ համայնքի բնակչության հետ կոնսենսուս ունենալու փաստը պակաս կարևոր չէ: Թող թեկուզ ամենաակնհայտ խնդիրը լինի դա, բայց համաձայնեցված գործընթացի միջոցով դրա կարևորության արձանագրումը լայն ճանապարհ է բացում հետագա գործընթացի համար: Ինչպես նշում է համայնքի ղեկավարը. «Երկու խնդիրն էլ մեզ համար նորություն չէր: Դրանք բազմաթիվ անգամ քննարկվել էին ավագանու նիստերում, նաև աշխատակազմի հետ: Իրականում համայնքի բնակիչները, ովքեր մասնակցում էին այդ քննարկմանը, հաստատեցին հենց այն ուղղությունը, որն ավագանու և աշխատակազմի հետ քննարկումների արդյունքում ամրագրել էինք: Մինչդեռ այժմ ունենք հիմնախնդիրների լուծման մի առաջնահերթություն, որը կարծես ժողովրդի հոգուց է բխում, ուստի հնարավորության դեպքում մեր ծրագրերը հենց ըստ այդ առաջնահերթության էլ առաջ ենք տանելու: Քննարկման արդյունքները հաշվի առնելով՝ ոռոգման ցանցի, մշակույթի տան դռների և պատուհանների, իսկ եթե հնարավորությունները ներեն, ուրեմն ողջ շենքի վերանորոգումը այս տարի կավարտենք»:

Վստահության գործոնը

Արզական համայնքում համահամայնքային քննարկմանը նախատեսվածից քիչ մարդ էր ժամանել: Փորձենք վերլուծել պատճառները: Թերևս պատճառներից մեկը կարող է լինել 2008 թվականի տարեվերջից սկսած ճգնաժամը, և համաձայն համայնքի ղեկավարի. «2009 թվականն առայժմ վատ ենք սկսել: Ես յոթը տարի աշխատում եմ, սակայն առաջին անգամն է, որ այսքան վատ ենք սկսում: Չէի ասի ճգնաժամն ուղղակիորեն, սակայն այնուամենայնիվ ազդել է մեր վրա: Բայց ես հուսով եմ, որ Արզական համայնքը կհամախմբվի, ինչը թույլ կտա մեղմել այդ ազդեցությունը»:

Մյուս խնդիրը գուցե նրա մեջ է, որ բնակչությունը սովոր չէ նման քննարկումներին, չի վստահում նման գործընթացներին և չի հավատում,

որ իր բարձրացրած ձայնը արձագանք կստանա: Մինչդեռ պարզվում է Արզականում նախկինում էլ եղել են քննարկումներ, բնակչությունը հավաքվել և ընդհանուր հիմնախնդիրներ է քննարկել: Սակայն, ինչպես նշում է համայնքի ղեկավարը. «Ճիշտ է տարբեր ներդրումային ծրագրերի շրջանակներում կարիքներն ու հիմնախնդիրները առաջադրվում են համայնքի կողմից, սակայն նման քննարկումները ժողով էն հիշեցնում, քննարկումներն որպես այդպիսիք չէին գոհացնում, հռետորական էին, ամբոխային, իսկ այս ֆորմատն այլ էր, բոլորին արտահայտվելու իրավունք էր տրվում»: Թերևս արհեստավարժ սեղանավարները կարողանում են ստեղծել այն անմիջական մթնոլորտը, որտեղ տեղի է ունենում բավական արդյունավետ հաղորդակցություն, և Արզականի փորձը հաստատում է դա: Բավական է մեկ կամ մի քանի անհաջող քննարկում, որից հետո բնակիչները թերահավատորեն կմոտենան ու հեռու կպահեն իրենց գյուղին հուզող խնդիրների քննարկմանը մասնակցելուց:

Արզականում այս խնդիրը գիտակցվում է, այդ պատճառով, ինչպես նշում է համայնքի ղեկավարը. «Իշխանության և ժողովրդի միջև միջնորդի դերը հասարակական կազմակերպությունն է, որ կարող է ճիշտ կատարել: Շատ հաճախ ժողովուրդը իրեն մի տեսակ մերժված է զգում իշխանության կողմից, մեկուսացված: Ես մեր համայնքի պաշտոնյաների առջև դրել եմ նաև այս հարցը, որ ունենանք բանավեճեր, կազմակերպենք այն լսարանները, որոնք թույլ կտան բանավիճել: Ես կարծում եմ, որ եթե հասարակական կազմակերպությունը ճիշտ դերակատարում ստանձնի, համերաշխություն կձևավորվի գյուղին հուզող ցանկացած հարցի քննարկման ժամանակ»:

Համահամայնքային քննարկումը Արզականում նպաստեց նրան, որ իշխանության կողմից ավելի լավ գիտակցվի բնակչության և ՏԻՄ-ի հաղորդակցության կաևորությունը, ուստի համահամայնքային քննարկումից հետո որոշում է կայացվել լրացնել այդ բացը: Կազմվել է հանդիպումների ժամանակացույց և թաղ առ թաղ նախատեսվում է բնակչության հետ հանդիպումներ անցկացնել, որպեսզի. «լսենք, մոտիկից խոսենք, հասկանանք ինչ է կատարվում, և որ թաղի հիմնախնդիրները հենց թաղի բնակիչները բարձրացնեն»: Համայնքի ղեկավարը համարում է, որ կան մանր խնդիրներ, որոնք հնարավոր է համապատասխան վերաբերմունքով և քիչ ծախսերով լուծել, եթե միայն դրանք լինեն բնակիչների առաջարկությունը, ինքը՝ բնակիչը, կմասնակցի: Անհրաժեշտ է շփումներն ակտիվացնել, իրավունքի ու պարտականությունների կատարման մասին իրազեկումը ճիշտ

մակարդակի վրա դնել:

Նշենք, որ համահայնքային քննարկումից հետո, ըստ համայնքային հանդիպումների ժամանակացույցի, նախատեսվում էր հանդիպում անցկացնել շուրջ ութսուն բնակչի հետ, որոնց արդեն իսկ հրավերքներ ուղարկվել էին:

«Ես մասն եմ համայնքի»

Արզական գյուղի համահամայնքային քննարկման ժամանակ հետաքրքիր բանավեճ ծագեց ջրի խնդիրների շուրջ: Հարցը վերաբերում էր խմելու ջրի անխնա օգտագործմանը, ջրաչափերի տեղադրմանը, վարձավճարների չափին: Այնպես է ստացվում, որ խմելու ջուրն օգտագործվում է ոռոգման նպատակով, կամ որպես «սառնարան»: Մինչդեռ գյուղի մյուս կեսն այդ պատճառով զրկվում է ջրից: Այստեղ չենք փորձի լուծումներ առաջադրել նշված կոնկրետ խնդրին, սակայն նշենք, որ հաճախ համայնքներում անհրաժեշտություն է ծագում քննարկել և լուծել ոչ միայն ռեսուրսների հայթայթման խնդիրը, այլ նաև դրանց վերաբաշխումը: Երբ ընդհանուր կանոններ չեն գործում ու գյուղի մի մասը շահում է ի հաշիվ մյուսի, ապա ցանկացած խնդրի լուծում անավարտ կարող է մնալ: Գյուղը, որպես ամբողջություն, նման դեպքերում կարող է շահած դուրս չգալ: Սա կարող է հիմք հանդիսանալ սոցիալական անարդարության սկզբի, որի անտեսումը, հետագայում, կարող է թողնել անդառնալի հետևանքներ, գյուղում կարող են գծվել բաժանարար գծեր: Լուծու՞մը. կազմակերպել քննարկում, այս հարցը դնել լուրջ բանավեճի, բացահայտել առկա շահերի բախումը, ոչ թե շրջանցել կամ թաքցնել խնդրի սուր անկյունները, այլ լուծումը գտնել թեկուզ մի քանի քննարկումների ընթացքում: Նման խնդիրներն այն շարքից են, որոնց լուծումը պահանջում է մարդկանց վարքի փոփոխություն:

Տեղական ՀԿ ներկայացուցիչները հմտացել են քննարկումների իրականացման գործում:

Մի խելքը լավ է...

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ

Տեղական հասարակական կազմակերպությունների դերն իսկապես կարևոր էր 10 մարզերում անցկացված 10 համահամայնքային քննարկումների ժամանակ: 10 ՀԿ-ներից յուրաքանչյուրն իր մարզում էական ներդրում ունեցավ և փորձ ձեռք բերեց՝ հետագայում որպես բնակչության և տեղական իշխանությունների միջև ակտիվ միջնորդ հանդես գալու տեսանկյունից: Այս հատվածում փորձենք ամփոփել ՀԿ-ների ձեռք բերած ներուժը և դրա կիրառումը մասնակցային ժողովրդավարության հետագա զարգացման առումով:

Բոլոր 10 ՀԿ-ների անդամները բավական բարձր գնահատական են տվել անցկացված վերապատրաստման ծրագրին՝ նշելով մի քանի առանձնահատկություն: Թեպետ ՀԿ-ներն ակտիվ են ու ունեն քննարկումներ անցկացնելու փորձ, սակայն այդ փորձը սահմանափակվում է սեմինարներ, ֆորումներ, նիստեր, խորհրդակցություններ վարելով: Մինչդեռ վերապատրաստումը համակարգեց փորձի վրա հիմնված գիտելիքն ու հմտությունները, և, ինչպես ՀԿ-ների ներկայացուցիչներն են գնահատում, մասնակիցների մոտ զարգացրեց այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝

- բնակչության հետ քննարկումներ անցկացնելու համարձակությունը.
- քննարկման մասնակցի կարծիքի վրա այլ մասնակիցների կողմից ճնշումներ թույլ չտալու և այլոց կողմից իրենց կարծիքը պարտադրելը բացառելու հմտությունը.
- բնակչության մտքերն ու կարծիքները պատշաճ գրառելու պատասխանատվության գիտակցումը.
- սեղանների շուրջ հեշտ, անկաշկանդ և բաց քննարկում ծավալելու մթնոլորտի ապահովումը.
- բոլորի կարծիքը հաշվի առնելու ունակությունը.
- կրքերը հանդարտեցնելու կամ, երբեմն, հույզեր գեներացնելու կարողությունը,
- ինտերակտիվ ձևով քննարկում անցկացնելու մեթոդոլոգիան.
- խնդրի շուրջ հարցերի խորացման և մանրամասնեցման տեխնիկայի կիրառումն այնկերպ, որ բացահայտվի բնակչության մտահոգությունները, մտավախությունները, շահերը և անմիջական վերաբերմունքը, պատասխանները լինեն անկեղծ և ինքնաբուխ:

ՀԿ ներկայացուցիչներից մի քանիսը շեշտում են ոչ միայն վերապատրաստման արդյունավետությունը, այլ նաև ստացված գիտելիքներն ու

հմտությունները գործնական կիրառելու կարևորությունը: Հատկապես արդյունավետ է եղել ՀԿ-ների երիտասարդ անդամների մասնակցությունը, քանի որ վերջիններիս համար առավել դժվար է բնակչության տարբեր տարիքի ներկայացուցիչների հետ բովանդակային քննարկումներ անցկացնելը:

Հարցվողների մի մասն էլ մոնիտորինգի ընթացքում շեշտել է հմտությունների զարգացման կարևորությունը, քանի որ այլ ծրագրերում դրանք նույնպես իրենց կիրառումն են գտել: ՀԿ-ները՝ լինելով ակտիվ տեղական ինքնակառավարման ոլորտի տարբեր ծրագրերում, բնակչության հետ շփման մշտական կարիք ունեն: Ուստի այս հմտություններն իրենց կիրառությունն են գտել ոչ միայն այստեղ նկարագրված միջոցառումներում, այլև մասնակցային ժողովրդավարությունն ապահովող մի շարք այլ ծրագրերում:

Այն հարցին, թե ինչպիսի դժվարությունների են ՀԿ-ները հանդիպում, տրվել են մի քանի պատասխաններ: Սկզբում առանձնացնենք ներքին կարողություններին առնչվող դժվարությունները, որոնց մեջ մտնում է քննարկման ժամանակ բազմակարծություն ապահովելու կարևորությունը: Թեպետ, ինչպես նշում են ՀԿ-ները, սա մշակույթի խնդիր է, երբ բնակչության մի ստվար հատված նախընտրում է իր անձնական կարծիքը «տեղավորել» համընդհանուր կարծիքի շրջանակներում: Այս առումով ՀԿ ներկայացուցիչները կարևորում են այնուամենայնիվ այնպիսի հմտությունների տիրապետումը, որոնք կնպաստեն, կօժանդակեն իրենց՝ այդ «պատը» ջարդելը հնարավոր դարձնելուն:

Հաջորդ դժվարությունը ՀԿ-ի՝ որպես կայուն ինստիտուտի կայացման խնդիրն է: Մարզային ՀԿ-ները շատ հաճախ են «ապրում» միջոցառումից միջոցառում, ծրագրից ծրագիր: Այսպես ասած երբեմն նրանք մատնվում են հարկադիր պարապուրդի, մինչդեռ ձեռք բերած հմտություններն ու ունակությունները անհրաժեշտ է մշտապես կիրառել, որպեսզի դրանք զարգանան: Մշտական ակտիվությունը սրա լավագույն լուծումն է:

Այն հարցին, թե ինչպես պետք է ՀԿ-ները համայնքներում աշխատեն, դուրս գան մարզկենտրոնից դեպի համայնքներ, տարբեր պատասխաններ են հնչել: Առաջին խնդիրը մասնագիտացման խնդիրն է: Որոշ ՀԿ-ներ հետաքրքրված են համայնքներում տեղական ինքնակառավարման և բյուջետավարման խնդիրներով, մյուսներին հետաքրքրում է մասնակցային ժողովրդավարության գործընթացը, երրորդները կարևորում են համայնքների սոցիալական զարգացման խնդիրները, իսկ մեկ այլ ՀԿ ցանկանում

է մասնակցային մեթոդներով ու մոդելներով զարգացնել համայնքների տնտեսությունը: Այսինքն, կախված իրականացվող մասնակցային ժողովրդավարության տարբեր ծրագրերով սահմանված առաքելությունից՝ ՀԿ-ների հետաքրքրության աստիճանը կարող է տարբեր լինել: Նշենք, որ մի քանի տեղական ՀԿ-ներ, այնուամենայնիվ, մի քանի համայնքներում անցկացրել են բյուջետային քննարկումներ, կիրառելով գրեթե նույն մեխանիզմը, որը ներկայացվում է սույն հետազոտության մեջ, և փորձը ցույց է տվել, որ այդ քննարկումները հաջողություն են ունեցել: ՀԿ-ները խիստ կարևորել են համահամայնքային քննարկման մեթոդով համայնքի բյուջեի քննարկումը և ցանկություն արտահայտել այն ավանդույթ դարձնել:

ՀԿ-ների դիտարկումը համահամայնքային քննարկումների առնչությամբ նույնպես հետաքրքրական է: Չկրկնելով արդեն իսկ ներկայացված ազդեցությունները, նշենք ՀԿ-ների կողմից արտահայտված առանձին արժանահիշատակ դիտարկումներ.

– համահամայնքային քննարկումից անմիջապես հետո բնակչության մոտ բարձրանում է հետաքրքրության և ոգևորության աստիճանը: Մարդիկ դառնում են նվազ անտարբեր.
– համահամայնքային քննարկումն ուղղակի ժողովրդավարություն չի բերում, սակայն այն ժողովրդավարության գործընթաց է: Սեղանի շուրջ քննարկման դինամիկան ցույց է տալիս, որ ժողովուրդը վերջապես իր ձայնը փորձում էր բարձրացնել.
– մարդկանց մոտ քննարկումներից հետո շահագրգռվածության աստիճանը էականորեն աճում է, մարդիկ սկսում են զանգել, հետաքրքրվել, հարցեր տալ: Կարելի է արձանագրել, որ համայնքի մասնակցությունը կառավարմանը ապահովված է.
– երբ համահամայնքային քննարկման փորձը պատմում ես այլ համայնքներին, այն մեծ արձագանք է գտնում:

Ամփոփելով նշենք, որ փորձը ցույց տվեց հասարակական կազմակերպությունների՝ որպես միջնորդ հանդիսանալու ու համահամայնքային քննարկում անցկացնելու էական դրական ազդեցությունը մասնակցային ժողովրդավարություն ապահովելու խնդրում: Մի կողմից համայնքների ղեկավարներն էին մեծ նշանակություն տալիս հասարակական կազմակերպությունների արհեստավարժ և չեզոք դիրքից միջնորդ հանդիսանալու խնդրին, մյուս կողմից ՀԿ-ներն իրենք էին լիովին գիտակցում և իրականացնում այդ դերը: Թերևս միակ խնդիրը մնում է ՀԿ-ների առաքելության, մասնակցային ժողովրդավարության այս և այլ մեխանիզմների ու

մոդելների կիրառման ու դրանց իրագործման համար անհրաժեշտ միջոցների ապահովումը, քանի որ արդեն իսկ առկա են կարողություններ, փորձ ու ցանկություն:

Որպես եզրափակիչ խոսք մեջբերենք հարցվողներից մեկի արտահայտված միտքը. «Անցկացված քննարկման արդյունքներից շատ գոհ ենք, քանի որ բնակչության շրջանում դրանք արձագանք գտան: Բնականաբար մենք տեղի բնակչությանն ավելի մոտ ենք, ավելի շատ շփում կա, և այդ արձագանքն իրոք նկատելի է: Այնքանով, որ բնակիչը տեսավ, որ իր տուն ջուր է հասնում, այդքանով մենք՝ ՄԶՄԿ-ն և մեր ՀԿ-ն, մեր դերն իրականացրեցինք: Մենք կարողացանք բնակիչներին օգնել, որ իրենց խնդիրները հենց իրենք լուծեն: Մենք իրականում ընդամենը շարժիչ ուժն էինք, սակայն բնակչության մոտ տպավորություն կա, որ նաև մենք արեցինք, որ իրենք ջուր ունեցան: Մեզ համար կարևորն արդյունքն է: Մեզ հաջողվեց արդյունք ապահովել, և համոզված ենք, որ այդ արդյունքը կլինի շարունակական»:

Իրականացված տասը համայնքային քննարկումների արդյունքների համալիր վերլուծությունը պարարտ հող է ստեղծում համայնքի մակարդակում մասնակցային ժողովրդավարության հետագա զարգացման համար: Փորձելով ամբողջականացնել մասնակցային ժողովրդավարության այս գործիքի կիրառման արդյունքում սերտած դասերը, դրանք ամփոփել ենք առավել կարևորված չորս փոխկապակցված հիմնական ուղղություններով: Դրանք են. քննարկմանը հաջորդած քայլերի հետևողականությունը, վստահության ձևավորումը համայնքի ղեկավարության և որոշումների կայացման գործընթացի հանդեպ, քննարկման ու դրան հաջորդած քայլերի ազդեցությունը տեղական հարկերի հավաքագրման վրա, քննարկումների ազդեցությունը համայնքում սոցիալական համերաշխության վրա:

«Երբ խոսքը դառնում է գործ...»
(քննարկումից անդին)

Համայնքային քննարկումներին հետևած ժամանակահատվածում իրականացված դիտարկումներն աներկբա հաստատում են մասնակցային ժողովրդավարության արդյունավետությունը համայնքի տարեկան բյուջեի ընդունման գործընթացում: Դիտարկումները, մասնավորապես, հիմք են տալիս պնդելու, որ համայնքի բյուջեն ընդունելու գործընթացում տեղական ինքնակառավարման մարմինները հիմնականում հաշվի են առել համայնքային քննարկման արդյունքները:

Համայնքային քննարկման արդյունքները քվեարկության արդյունքները չէին սոսկ: Քննարկումների ընթացքում վերլուծվել են առաջարկված ծրագրերի նպատակահարմարությունը, դրանց համեմատական առավելություններն ու թերությունները: Համայնքային քննարկումները վեր հանեցին ամենակարևորը՝ մարդկանց գերակայություններն ու դիրքորոշումները հիմնավորող փաստարկներն ու դրդապատճառները: Փորձառու սեղանավարների միջնորդությամբ քննարկումը բազմիցս փոխակերպվել է մտքի գրոհի: Քննարկման մասնակիցները, ի լրումն առաջարկված տարբերակներին կողմ և դեմ փաստարկների, նոր մտքեր ու տարբերակներ էին առաջադրում, ինչն օգտակար եղավ բյուջեի քննարկումների ընթացքում: Դրանք, քննարկումից անմիջապես հետո, ամփոփվել և տրամադրվել են համայնքի

ղեկավարներին: Հատկանշական է, որ առանձին դեպքերում համայնքի ավագանին որոշել է քննարկման ընթացքում բնակիչների հնչեցրած տեսակետներն ու նախապատվություններն անմիջականորեն ներառել համայնքի տարեկան բյուջեում:

Համայնքային քննարկումների գործընթացում կարևորվել է խնդիրների առաջնահերթության որոշումն ու **համաձայնեցումը**: Երբեմն, թվում էր, թե առանձին խնդրի սրությունն ու կարևորությունն այնքան ակնհայտ ու անվիճելի է, որ քննարկման կարիք անգամ չկա: Սակայն քննարկումների արդյունքում պարզ էր դառնում, որ անգամ նման պարագայում, խնդրի կարևորության շուրջ համընդհանուր համաձայնության հասնելը նվազ կարևոր չէ ՏԻՄ գործունեության արդյունավետության համար: Սա բազմիցս հնչեցրել են թե՛ համայնքների ղեկավարները, թե՛ բնակիչները:

Դիտարկումները փաստում են, որ համայնքային քննարկումներն էապես խթանել են բնակիչների **հետաքրքրությունը** համայնքային կյանքի ու ծրագրերի հանդեպ: Հատկանշական է, որ քննարկման մասնակիցները սկսել են հետաքրքրություն ցուցաբերել համայնքի ավագանու նիստերի հանդեպ և ավելի հաճախ մասնակցել դրանց: Միաժամանակ, բնակչության նման ակտիվությունը, հետևողականությունն ու հետաքրքրությունն էականորեն անդրադարձել են բյուջեի ընդունման գործընթացի վրա: Հետևությունն ակներև է. համայնքի բնակիչների ակտիվությունը չպետք է լինի միջոցառումից միջոցառում, իսկ մասնակցային գործընթացը՝ առիթից առիթ: Հատկանշական է նաև, որ գյուղական համայնքներում քննարկման ներկայացված սցենարները հիմնականում միմյանց բացառում էին, ուստի մարդիկ քվեարկում էին, այն գիտակցությամբ, որ տվյալ տարվա բյուջեի միջոցներով միայն մեկ ծրագիր է հնարավոր իրականացնել: Այս հանգամանքը որոշակիորեն պարտավորեցրել է համայնքների ղեկավարին և ավագանուն հետևողական լինել կայացված որոշումների իրականացման հարցում:

Համեմատաբար հավակնոտ սցենարների վերլուծությունը փաստում է, որ կարևոր է քննարկումների ընթացքում վերլուծել ոչ միայն համայնքի բնակիչների ցանկությունները, այլև դրանց իրագործման **հնարավորությունները**:

Քննարկումների վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ համայնքային քննարկումը տեղին է համայնքային ծրագրերի բոլոր փուլերում՝ թե՛ բյուջեի հաստատումից առաջ, թե՛ հետո: Չէ՞ որ ՏԻՄ

որոշումը վերջին ատյանի ճշմարտություն չէ: Համայնքի ղեկավարությունը պետք է բաց լինի՝ նոր մտքերի ու առաջարկների համար: Պիտի պատրաստակամություն ունենա՝ ճշգրտելու սեփական տեսակետն ու լրացնելու կայացրած որոշումը, այդ թվում՝ բյուջեի մասին: Ի վերջո՝ անհրաժեշտ է վստահություն սերմանել համայնքի առաջնահերթ խնդիրները բացահայտելու գործում համայնքային քննարկման գործընթացի և արդյունքների հանդեպ:

Դիտարկումները փաստում են, որ քննարկման արդյունքների հետևողական կենսագործման վրա էական ազդեցություն է գործում համայնքին տրամադրվող արտաքին աջակցությունը: Ընդ որում՝ նման ազդեցությունը կարող է հավասարապես դրական կամ բացասական լինել: Այսպես, առանձին դեպքերում բնակիչների կողմից համեմատաբար նվազ կարևորված ծրագիրը հետագայում օժանդակություն է ստացել **արտաքին աղբյուրներից:** Արդյունքում, հնարավոր օժանդակությունը չկորցնելու համար համայնքը պարտավորվել է սեփական ներդրում կատարել: Այսպիսով, համայնքային քննարկմանը մասնակցած բնակիչների ձայնը «լսելի չի դարձել» արտաքին միջամտության և աջակցության պատճառով: Հարկ է հաշվի առնել, որ համայնքին արտաքին աջակցության առկա մեխանիզմը էականորեն ազդում է համայնքի գերակայությունների սահմանման վրա: Հատկանշական է նաև, որ առանձին դեպքերում արտաքին օժանդակությամբ իրականացվող ծրագիրը մշակվել և իրագործվել է բնակչության կամարտահայտությանը համահունչ:

“Yes, We can!”
(վստահությունը ղեկավարների և որոշումների հանդեպ)

Դիտարկումները միանշանակորեն հաստատում են համայնքի ղեկավարության և բնակչության միջև կապի ու փոխադարձ վստահության ամրապնդման գործում համայնքային քննարկման՝ մասնակցային ժողովրդավարական կառավարման մեխանիզմի դրական ազդեցությունը: Այս առումով կարևորվում է բնակչության առաջարկների ընդունումը, դրանք կյանքի կոչելն ու ընթացիկ արդյունավետ հաղորդակցությունը:

Ակներև է, որ քննարկումների ձևաչափը նույնքան կարևոր է, որքան քննարկումների երևույթն ընդհանրապես: Ու թեև ակնհայտ է, որ ժողովային՝ հռետորական-ամբոխային քննարկումները չեն գոհացնում մարդ-

կանց և չեն նպաստում վստահության ձևավորմանը, այդուհանդերձ, ներկայում համայնքը շարունակում է ակտիվ հաղորդակցության դաշտում առավելապես ապավինել ավանդական՝ անհատական, դեմառդեմ մեթոդներին: Հաղորդակցության զանգվածային մեթոդը կիրառվում է սահմանափակ ու պասիվ ձևաչափով, իսկ հաշվետվողականության ու թափանցիկության առավել արդյունավետ ու պարզ մեխանիզմները խիստ հազվադեպ են կիրառվում: Մինչդեռ, անչափ կարևոր է, որ արտահայտվելու հնարավորություն ունենա քննարկման յուրաքանչյուր մասնակից: Պատահական չէ, որ համայնքների թե՛ ղեկավարները և թե՛ բնակիչները քննարկումներից առաջ թերահավատորեն էին վերաբերվում գործընթացի անկեղծությանն ու արդյունավետությանը: Բոլորը մտավախություն ունեին, որ քննարկումը լինելու է զուտ ձևական և որևէ էական հետևանք չի ունենալու: Դիտարկումները փաստում են, որ վստահության ձևավորման առումով, կարևոր է սեղանավարների արհեստավարժությունը, քննարկման ընթացքում անկեղծ ու անմիջական մթնոլորտի ստեղծումը և մասնակիցների միջև արդյունավետ հաղորդակցության ապահովումը:

Համայնքային քննարկման ընթացքում համայնքի ղեկավարի, ավագանու անդամների, ՏԻՄ աշխատակազմի հետ գյուղի խնդիրների անմիջական ու անկեղծ քննարկման արդյունքում գյուղացիների վերաբերմունքն արդեն իսկ փոխվում է՝ փլվում է անվստահության պատը:

Քննարկման արդյունքների իրագործումն անգնահատելի դեր ունի համայնքում ՏԻ ինստիտուտի, առաձին ղեկավարների հեղինակության ու նրանց հանդեպ վստահության ձևավորման գործում: Նման դեպքերում բնակիչները տեսնելով, որ իրենց բարձրացրած հարցերը լուծվեցին, համոզվում են, որ համայնքի ղեկավարները իրավամբ ի վիճակի են բավարարել իրենց կարիքները: Չէ՞ որ քննարկման մասնակից բնակիչները համոզվեցին, որ իրենց կարծիքը հաշվի է առնվել՝ աղբյուր հուշարձանը տեղափոխվել է, շենքերի տանիքները վերանորոգվում են, ճանապարհները ասֆալտապատվում են և լուսավորվում: Ուրիշ էլ ի՞նչ է հարկավոր վստահության համար: Միաժամանակ, դիտարկումները փաստում են, որ քննարկման արդյունքներից էականորեն տարբերվող հետագա որոշումները բնականաբար վատ են անդրադարձել համայնքի ղեկավարների ու բնակչության միջև վստահության վրա: Թերևս մեկ կամ երկու անհաջող քննարկումից հետո բնակիչները կդառնան թերահավատ

և կօտարվեն իրենց հուզող խնդիրների լուծման գործընթացից, ինչը ծայրահեղ անցանկալի է:

Ուրախալի է, որ համայնքների ղեկավարների բացարձակ մեծամասնությունը ընկալել է քննարկումների օգտակարությունն ու դրանց կիրառման ներուժը: ՏԻՄ ղեկավարները, իրենց հանդեպ բնակիչների վստահության խնդիրը կարևորելով՝ գրեթե առանց բացառության պատրաստակամ են շարունակական դարձնել նման քննարկումները: Առանձին համայնքի ղեկավարներ, համոզվելով համայնքային քննարկման արդյունավետության մեջ, որոշել են ամենամյա քննարկումներ կազմակերպել՝ նախքան տարեկան բյուջեի ընդունումը: Առանձին դեպքերում համայնքի ղեկավարը մտադիր է բնակիչների քննարկմանը դնել նախորդ երեք տարիներին կատարված աշխատանքը, իրականացված ծրագրերի արդյունքներն ու բյուջեի հաշվետվությունը: Այս պարագայում, մասնակցային ժողովրդավարության մեխանիզմի միջոցով բնակիչների ձայնը լսելը և բնակչության կարիքները հոգալու ունակություն ցուցաբերելը, քաղաքական առումով լավ շարժառիթ է համայնքների ղեկավարաների համար՝ մարդկանց ձայները շահելու տեսանկյունից: Արդյունքում շահում է համայնքը, շահում են բնակիչները, շահում են համայնքների ղեկավարները:

Ակնհայտ է, որ մասնակցային ժողովրդավարությունը որևէ կերպ չի սահմանափակում համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների կայացման իրավասությունը, չէ որ համայնքային խնդիրների լուծման պատասխանատվությունն ի պաշտոնե կրում են հենց նրանք: Սակայն անկախ այն հանգամանքից, թե որոշումները կայացվել են բնակիչների անմիջական մասնակցությամբ կամ առանց դրա, արդիական է մնում արդյունավետ ու թափանցիկ **հաղորդակցության** խնդիրը: Կայացրած որոշումների հիմնավորումները պետք է հստակ ներկայացվեն բնակչությանը՝ անկախ որոշումների ընդունման գործընթացի բուն ձևաչափից:

Մասնակցային ժողովրդավարության մարտահրավերների թվում հիշատակելի է համայնքի ղեկավարության փոփոխությունը, որի արդյունքում շատ հաճախ փոփոխվում են նաև նախկինում հաստատված գերակայությունները: Դիտարկումները փաստում են, որ համայնքային քննարկումների արդյունավետության վրա առանձին դեպքերում էականորեն ազդել է հենց համայնքի ղեկավարության փոփոխությունը: Սա, թերևս, պայմանավորված է ՏԻՄ նոր ղեկավարության օրակարգով ու

գերակայություններով: Այդուհանդերձ, գերակայությունների փոփոխության պարագայում անգամ, հույժ ցանկալի է, որ համայնքի նոր ղեկավարը անցկացնի ևս մեկ համայնքային քննարկում և ներկայացնի գերակայությունների փոփոխության փաստարկները, դրանք դնի համայնքային քննարկման: Այլապես համայնքների ղեկավարները կանգնում են բնակիչների վստահության կորստի իրական վտանգի առջև: Այս առումով կարևոր է նաև յուրաքանչյուր համայնքային քննարկման արդյունքների արձանագրումն ու դրանք առավելագույնս ներկայացուցչական դարձնելը: Չէ՞ որ բուն քննարկումն ու դրա արդյունքները պիտի վստահություն ներշնչեն համայնքի յուրաքանչյուր անդամին, այդ թվում՝ համայնքի հաջորդ ղեկավարին:

Մասնակցային ժողովրդավարության մեխանիզմի՝ համայնքային քննարկումների ի հայտ եկած առանձնահատկություններից մեկը վերաբերում է ծավալուն կամ երկարաժամկետ ծրագրերին: Չէ՞ որ հաճախ քննարկման ընթացքում բարձրացված խնդիրները մեկ տարում հնարավոր չէ լուծել: Դրանց պլանավորումն ու իրագործումը ժամանակատար է: Հարկերի զգալի մասը հավաքվում է տարեվերջին, մինչդեռ մեծ ծրագրերը հաճախ պահանջում են գնումների ընթացակարգով նախատեսված մրցույթի կազմակերպում և այլ տևական կազմակերպչական գործընթացներ: Այս իրողությանն անտեղյակ բնակիչները թերևս թերահավատորեն կարող են մոտենալ համայնքային քննարկումներին: Չէ՞ որ, մինչև բնակչի աչքը չտեսնի, միտքը չի վստահի: Ընդհանուր առմամբ, երկարաժամկետ ու հեռանկարային համայնքային ծրագրերի իրագործումը մասնակցային ժողովրդավարության մեխանիզմներով խնդրահարույց է: Նման ծրագրերի քննարկումը բնակիչների հետ բնականաբար անհրաժեշտ է: Սակայն հարկավոր է ճշտել նաև քննարկմանը հաջորդող կոնկրետ քայլերը, ձևավորված վստահության մթնոլորտը չխաթարելու նպատակով, հնարավորինս խնամել վստահության սերմերը մինչև դրանք ծիլեր տան:

Քննարկումների փորձի վերլուծությունը խոսում է և այն մասին, որ ՏԻ ինստիտուտի լիազորությունների վերաբերյալ բնակչության ընդհանուր **իրազեկման** մակարդակը խիստ կարևոր է մասնակցային ժողովրդավարության և դրա մեխանիզմների գործարկման համար: Նվազ կարևոր չէ նաև կոնկրետ համայնքում ավագանու իրական դերակատարումը:

Կարևոր է, որ համայնքային քննարկումը դառնա հայտնի, կայացած

ինստիտուտ, որի միջոցով ուղղակիորեն կարելի է քննարկել ու լուծել համայնքի հիմնախնդիրները: Վստահության կողպեքը չես բացի պլանավորված ծրագրերի կատարման կամ, անգամ, գերակատարման բանալիով: Վստահության բանալին համայնքի բնակիչների ակնկալիքներին տեղյակ լինելն է, դրանք հասկանալն ու հնարավորինս բավարարելը և, ինչու՞ չէ, նաև դրանց ձևավորմանը նպաստելը: Մասնակցային ժողովրդավարությունը կռում է հենց այս բանալին:

«Եվ թող զմեզ զպարտիս մեր, որպես և մեք թողումք մերոց պարտապանաց»
(բնակիչը նաև հարկատու է)

Ավա՜ղ, երկրում դեռևս տարածում ունի այն մտածողությունը, որ հարկեր վճարելը բնակչի պարտականությունն է, իսկ ծրագրերի իրականացումը՝ համայնքի ղեկավարության բացառիկ իրավասությունը: Համայնքի ղեկավարներից դեռևս հաճախ ես լսում. «մենք արինք այս, գյուղապետարանն այս ծրագիրն արեց և այլն», երբեմն էլ՝ «ես արեցի այս, ես արեցի այն...» ու այսպես շարունակ: Մասնակցային ժողովրդավարության ներկայացվող մեխանիզմը գալիս է փոխելու նման մտածելակերպը: Հատկանշական է, որ համայնքների ղեկավարները գիտակցում են կապը տեղական իշխանությունների հանդեպ վստահության և հարկ վճարողի **գիտակցության** միջև, որի ձևավորումը տարիներ է պահանջում:

Համայնքային քննարկումները ընդհանուր առմամբ նպաստել են համայնքի բնակիչների շրջանում հարկային **պատասխանատվության** աճին: Այսպես, քննարկումներին հաջորդող ժամանակահատվածում արձանագրվել է տեղական հարկերը հոժարակամ վճարելու հստակ միտում: Հարկային մուտքերը թիրախ համայնքներում հիմնականում ավելացել են, իսկ ապառքները՝ կրճատվել:

Միաժամանակ, կարևորվում է հարկերի հավաքագրման գործընթացի վերաբերյալ բնակիչներին իրազեկելու խնդիրը: Բնակիչները պետք է գիտենան, թե որքան գումար է հավաքվել, որոնք են պարտքերը, տույժերը, տուգանքները և այլն: Ավելի՛ն, համայնքային քննարկումների արդյունքների իրագործումը հարկավոր է անմիջականորեն պայմանավորել հարկերի վճարման գործընթացով: Բուն քննարկումների ընթացքում բազմիցս նշվել է, որ համայնքի ընթացիկ և ծրագրային խնդիրները հնարավոր կլինի լուծել միայն այն դեպքում, երբ բնակիչները

կանոնավոր կերպով վճարեն հարկերը: Հատկանշական է, որ քննարկումներից հետո առանձին բնակիչներ պարբերաբար հետաքրքրվել են, թե որքան գումար է ծախսվել աշխատանքներում, ինչ է իրականացվել և այլն: Բնակիչների շրջանում հատկապես դրական արձագանք է գտել այն ՏԻՄ-երի գործունեությունը, որոնք տրամադրելով համապատասխան տեղեկություններ, շեշտել են, որ դրանք իրենց՝ բնակիչների, գումարներն են, որոնք ՏԻՄ-ի աշխատանքի շնորհիվ վերջիվերջո վերադարձվում են բնակիչներին՝ ապրանքների ու ծառայությունների, պատրաստի արդյունքի տեսքով:

Արդեն նշել ենք, որ առանձին դեպքերում գյուղի հիմնական ծրագրերն իրականացվել են **արտաքին աջակցությամբ**, մինչդեռ հարկատուների ներդրումը համեմատաբար աննշան է եղել: Դիտարկումները հիմնավորում են, որ նման իրավիճակները չեն նպաստել համայնքային խնդիրների լուծմանը սեփական ներդրումն ունենալու մոտեցման ամրագրմանը, ուստի և չեն նպաստել տեղական հարկերը վճարելու բնակչի շահագրգռությանը: Եվ կրկին, աջակցության ծրագրերը պետք է չափազանց զգուշորեն մոտենան համայնքին, և գիտակցեն, որ ծրագրերով ոչ միայն ներդրումներ են կատարում համայնքում, այլև ազդում են մարդկանց ու համայնքում որոշումների կայացման մոդելի վրա՝ կարող են ինչպես բարելավել, այնպես էլ խաթարել տեղական ժողովրդավարությունը համայնքում: Նման ծրագրերի պլանավորումը, գերակայությունների ընտրությունը, ինչպես նաև որոշումների կայացման, իրականացման ու մոնիտորինգի խնդիրները անհրաժեշտ է առավելագույնս քննարկել համայնքի բնակչության՝ հարկատուների հետ:

Դիտարկումները հուշում են նաև, որ նպատակահարմար է քննարկումները կազմակերպել ոչ միայն ապագա ծրագրերի, այլև համայնքի նախորդ ծրագրերի ու հավաքված հարկերի շուրջ:

«Ես մի ծիլն եմ քո արտի» (ազդեցությունը համայնքում սոցիալական համերաշխության վրա)

Մեր ժամանակներում սոցիալական հարաբերությունները հաճախ տեղի են տալիս տնտեսական հարաբերությունների առջև: Այդուհանդերձ շուկան ամեն խնդիր չէ, որ կարող է լուծել, ուստի համայնական ջանքերի անհրաժեշտությունը մնում է արդիական: Այս առումով կարևորվում են համայնքի անդամների փոխադարձ ընկալումը որպես նույն համայնքի անդամներ, ընդհանուր խնդիրների գիտակցումն ու դրանք համատեղ

ուժերով լուծելու անհրաժեշտությունը:

Համայնքային քննարկումների փորձը ցույց է տալիս, որ մասնակցային ժողովրդավարության այս մեխանիզմը կարող է էականորեն բարելավել բնակիչների «սա իմ համայնքն է» ընկալումը: Սա իր հերթին արմատավորում է «համայնքի զարգացման համար ինքս էլ եմ պատասխանատու» ընկալումը: Իրավամբ, համայնքի ղեկավարությունը հնարավորինս պետք է ձեռնպահ մնա համայնքի խնդիրներին միանձնյա՝ միակողմանի, լուծումներ տալուց: Փոխարենը հարկավոր է ստեղծել փոխադարձ վստահության մթնոլորտ, բարձրացնել համայնքի յուրաքանչյուր անդամի պատասխանատվության զգացումը, ինչպես նաև ընդհանուր գործին օգնելու ու համատեղ ջանքերով համայնքը զարգացնելու պատրաստակամությունը: Համայնքում բաժանարար գծերը հարկավոր է հնարավորինս վերացնել, իսկ համայնքային քննարկումը լավագույնս ծառայում է հենց այս նպատակին:

Համայնքային քննարկումների փորձը ցույց տվեց, որ գյուղական համայնքներում բնակչության տարբեր հատվածների միջև էական՝ «հարուստ/աղքատ», «մտավորական/հասարակ գյուղացի», «ահել/ջահել» և այլ **բաժանարար գծեր** չկան: Նման համայնքներում ընդհանուր շահից բխող ծրագրեր իրականացնելու ներուժը համեմատաբար մեծ է:

Ակներևաբար, տարբեր են քաղաքային և գյուղական համայնքային խնդիրները: Տարբեր են թե՛ բարդությամբ, թե՛ դրանց լուծելու համար անհրաժեշտ կամ առկա ռեսուրսների առումով: Ընդ որում առավել մեծ բյուջետային միջոցները հնարավորություն են ընձեռում իրականացնել մի քանի խոշոր կամ երկարաժամկետ ծրագիր միաժամանակ: Հարկ է հաշվի առնել, որ քաղաքային բնակչությունը նվազ միատարր է, և այստեղ որոշիչ են հատվածական շահերը: Մասնակցային ժողովրդավարության մեխանիզմը քաղաքային համայնքի պարագայում առավել արդյունավետ կարող է կիրառվել, եթե հաշվի առնվեն մի շարք գործոններ: Նախ, համաքաղաքային քննարկումները պետք է կազմակերպել կանոնավորապես, դրանք հրավիրելով ոչ միայն համայնքի բյուջեի, այլ քաղաքին հուզող այլ կարևոր խնդիրների քննարկման նպատակով: Երկրորդ, հարկավոր է ուժեղացնել քաղաքապետարանի հանրային կապերի գործառույթը՝ տեսանելի դարձնելու համար արվածը: Անհրաժեշտ է պարզ մեխանիզմներով բարձրացնել քաղաքային իշխանությունների հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Քաղաքի զարգացմանն ուղղված ծրագրերին զուգահեռ՝ հարկ է իրականացնել նաև քաղաքի սոցիալական

խնդիրների լուծմանն ուղղված ծրագրեր: Անհրաժեշտ է կազմակերպել «համաթաղային» քննարկումներ, երբ քննարկման ենթակա խնդիրները հատվածական են: Ի վերջո, անհրաժեշտ է ուժեղացնել քաղաքապետարանի համայնքային ծառայողների վերլուծական կարողությունները, կատարել սոցիոլոգիական, վիճակագրական հարցումներ, հրապարակել քաղաքին առնչվող վերլուծությունները և այլն:

Որոշ դեպքերում, բնակիչներն, ի լրումն հարկերի, առանձին աշխատանքների կատարման ձևով անմիջական ներդրում են ունեցել համայնքային ծրագրի իրականացմանը: Մասնավոր և համայնքային ուժերի համադրման նման մոդելը, ճիշտ իրականացման դեպքում, բազմապատիկ ազդեցություն է ունեցել համայնքի զարգացման համար: Այդուհանդերձ, նման համադրումը նուրբ մոտեցում է պահանջում: Չէ՞ որ այս դեպքում մասնավոր-համայնք համագործակցության տանող ճանապարհն անցնում է սոցիալական արդարության բարակ սառույցի վրայով: Եվ այս հատվածում սայթաքելու պարագայում, համագործակցությունը կարող է բնավ չշահել, անգամ՝ տուժել: Առաջարկվող լուծումը պարզ է. հարկ է համայնքային քննարկման փուլում անդրադառնալ ոչ միայն ծրագրերին ու դրանց իրականացման համար անհրաժեշտ համայնական միջոցներին՝ բյուջեին, այլև համայնքի այլ ակտիվներին, որոնք կարող են նպաստել ծրագրի իրականացմանը:

Ընդհանուր միջոցներով՝ համայնքի բյուջեով, իրականացվող ծրագրից հաճախ անմիջականորեն օգտվում է բնակիչների **մի հատվածը** միայն: Ուստի նման պարագայում խնդիրը ոչ միայն պահանջվող ռեսուրսներն են, այլև դրանց օգտագործման նպատակահարմարությունն ի բարօրություն բոլորի: Այլ խոսքով, օրակարգում ոչ միայն ռեսուրսների, այլև դրանց վերաբաշխման խնդիրն է: Նման իրավիճակում մասնակցային ժողովրդավարության մեխանիզմի կիրառումը հույժ կարևոր է: Չէ՞ որ, ըստ էության համայնքի մի հատվածը շահում է՝ ի հաշիվ մյուսների: Սոցիալական արդարության մարտահրավերներն այստեղ աչքի են զարնում, ինչի արդյունքում հայտնված բաժանարար գծերը խաթարելու են հարկերի հավաքագրումն ու համերաշխությունը համայնքում: Եվ կրկին՝ լուծման բանալին համայնքային քննարկումների միջոցով ընդհանուր համաձայնության ձեռքբերումն է, հեռանկարի ձևավորումը և համերաշխության ու վստահության ամրապնդումը:

Հատկանշական է, որ արտագնա աշխատանքի երևույթը լրացուցիչ բաժանարար գծեր է քաշում հենց գյուղում: Այսպես, արտագնա աշ-

խատողների զգալի մասը հող չի մշակում, հողից եկամուտ չունի, ուստի և հակված է հողի հարկը չվճարելու: Արդյունքում, նման բնակիչները լինելով համեմատաբար առավել ունևոր, օգտվում են համայնքային ծրագրերից, որոնք իրականացվել են համեմատաբար աղքատ՝ հող մշակող գյուղացիների հարկերի հաշվին: Նման իրավիճակը հղի է սոցիալական լարվածություն ծնելու վտանգով, որը հարկավոր է չեզոքացնել, այդ թվում՝ այլընտրանքային մեխանիզմներով: Օրինակ կարելի է քննարկել գյուղի զարգացման հիմնադրամ ստեղծելու գաղափարը, ուր վճարումներ կկատարեն արտագնա աշխատանքի մեկնած համագյուղացիները՝ հիմնադրամի միջոցով նույնպես մասնակից դառնալով գյուղի ծրագրերին:

Դիտարկումները փաստում են, որ համայնքի կուսակցականացումը բաժանարար գծեր է ստեղծում համայնքում: Այդուհանդերձ, քաղաքական կուսակցությունների դերն ու ազդեցությունը համայնքի զարգացման վրա դեռևս համալիր ուսումնասիրության կարիք ունի: Ընդ որում, համայնքի զարգացման վրա իրենց գործունեության ազդեցության ինքնագնահատման կարիք ունեն առաջին հերթին հենց քաղաքական կուսակցությունները:

Դիտարկումները հավաստում են նաև, որ մասնակցային ժողովրդավարության մեխանիզմների իրականացման առումով կարևոր է հատկապես համայնքի երիտասարդ անդամների դերը:

Համայնքի զարգացմանը մասնակցային ժողովրդավարության նպաստն անմիջական է, իսկ խորհուրդը պարզ.

Եղիցի՛ խոսք և կամք...

Եղիցի՛ գործ և վստահություն...

Եղիցի՛ պատասխանատվություն և համերաշխություն...

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հատվածներ համայնքերում իրականացված քննարկումների ընթացքում համայնքների անդամների կողմից հնչեցված մտքերից:

– Գյուղացիները գյուղի սահմաններում քիչ հող ունեն, հիմնական հողատարածքները գյուղից դուրս են: Երբեմն լինում են դեպքեր, երբ տրակտորներն են շրջվում հանդեր տանող ճանապարհին, մարդիկ են վնասվում: Գյուղացին հոգնած, փոշոտ գալիս է տուն էդ դարուփոսերի միջով: Հանդի աշխատանաքը քիչ է, հիմա էլ ճանապարհի դժվարությունները տար:
– Ճանապարհների վերանորոգման արդյունքում շուրջ 30 տոկոսով կնվազեն տրանսպորտային միջոցների շահագործման ու պահպանման ծախքերը: Բարեկարգումն էլ իր հերթին թույլ կտա լուծել աղբահանության խնդիրը: Ցանկալի կլիներ փողոցներում գոնե երկու աղբամաններ տեղադրել:
– Նորմալ ճանապարհ ունենանք կարող ենք և կարգին կոշիկներ հագնել:
– Եթե գյուղամիջյան բոլոր փողոցները չեն վերանորոգվելու, իմաստ չունի նորոգել մի մասը: Էս դեպքում փող ծախսել չարժի: Ընդամենը վերջերս էր՝ վերանորոգեցին, այսօր էլի կիսաքանդ վիճակում է:
– Չեմ կարծում, որ նպատակահարմար է բյուջեից գումար հատկացնել գերեզմանոցի տարածքը պարսպապատելու համար: Առաջարկում եմ ուղղակի պահակի հաստիք սահմանել, ով էլ կվերահսկի տարածքը: Իսկ գերեզմանոցի հարցը համայնքի յուրաքանչյուր անդամ ինքը կլուծի: Պարսպապատումն իհարկե կարևոր է, սակայն ոչ առաջնային:
– Փող կա, չգիտեք ինչպե՞ս ծախսեք: Լավ, անասունների համար խմելու ջրի տաշտամանների տեղադրումն էնքան էլ կարևոր չի: Անասուններն առանց հատուկ տաշտամանների էլ յոլա կգնան, գլխաքանակն այդքան շատ չի, որ տաշտեր տեղադրվեն: Դրա փոխարեն թող ճանապարհը վերանորոգվի՝ երեխես չոր ճամփով գնա-գա:
– Գյուղում մի լիճ ունենք, որտեղ երեխաներն են լողում: Նույն տեղում անասուններն են ջրում: Բա դա եղավ գո՞ր՝ իսկական վարակի բուն է:
– Հարգելիս, երեխայիս մանկապարտեզ եմ ուղարկում, տեղաշորն էլ հետն եմ տանում: Մարդիկ երեխաներին չեն ուղարկում մանկապար-

տեզ, որովհետև պայմաններ չկան: Հանդեսի ժամանակ հարևան տներից ենք աթոռ վերցնում:

– Մանկապարտեզը պիտի բարեկարգվի ու վերազինվի: Երեխաները մանկապարտեզ գնան՝ կթեթևանա ծնողների հոգսը: Գյուղում լավ մանկավարժներ ունենք, նոր խմբեր կբացվեն, նրանք էլ աշխատանքով կապահովվեն: Էլ չասած, որ դպրոց հաճախող վեց-յոթ տարեկան երեխաներ ունենք, նույնիսկ ինքնուրույն նստել-վեր կենալ չեն սովորել: Դա հենց մանկապարտեզ չհաճախելու խնդիրն է:
– Վատ չէր լինի կարողանայինք վերանորոգել մշակույթի տան շենքը, բայց միթե կարծում եք շենքի պատերը սպիտակեցնելով մշակութային կյանքը կաշխուժանա: Դատարկ շենք պահելու փոխարեն ավելի լավ է մտածենք թատերական մի խմբակ հիմնելու մասին: Մեր գյուղում շատ տաղանդավոր երիտասարդներ ու երեխաներ ունենք: Ունենք գեղարվեստի և թատերական ինստիտուտների շրջանավարտներ, որոնց էլ աշխատանքով կապահովենք:
– Մանկապարտեզին համահավասար կարևոր է զբոսայգու ու հանգստի գոտու կառուցումը: Երեխաները խաղալու տեղ չունեն: 5000 դրամ ենք ծախսում, որ երեխաներին տանենք Երևան՝ այգում խաղալու ու կարուսել նստելու:
– Մի ժամանակ գյուղում սրճարան ունեինք: Տխրեցինք, երբ այն փակվեց: Սրճարանում տարբեր միջոցառումներ էին կազմակերպվում: Ամռանը բազմաթիվ հյուրեր էինք ունենում հարևան գյուղերից, քաղաքից: Համոզված եմ, որ զբոսայգի ունենալու դեպքում նորից նման հաճելի ամառներ կունենանք:
– Մինչև հանգստի գոտի հիմնելը եկեք, նախ, մեր երիտասարդներին սովորեցնենք, թե ինչպես պետք է հոգ տանել շրջակա միջավայրի մասին: Կանաչ տարածք ունենք ու հպարտանում ենք, զգույշ լինենք անապատի չվերածվի:
– Կոյուղու խնդիրը գյուղի համար շատ հրատապ է: Գիտեմ, որ հսկայական ծախսեր է պահանջում, սակայն եթե գյուղապետարանը նախաձեռնի, բոլորը կհամախմբվեն ու կօժանդակեն, ներդրումներ կանեն:
– Ինչ խոսք, գյուղացու կյանքն աստիճանաբար բարելավվում է. ընտանիքները մեքենաներ են ձեռք բերում, ճանապարհների հարցն էլ հրատապ է դառնում: Դե ուրեմն ովքեր մեքենա ունեն թող համախմբվեն ու սարքեն իրենց ամենօրյա օգտագործման ճանապարհը:
– Ճանապարհն այս տարի հարթեցնենք, խճապատենք, հաջորդ տարի

նորից նույնը կլինի: Արժի՞ դրա վրա փող ծախսել:

– Մարզադպրոցի կառուցման համար մի քանի աղբյուրներ արդեն իսկ նախանշվել են. մարզպետը խոստացել է շենք հատկացնել, Ազգային Ժողովում մեր պատգամավորները ևս որոշակի աջակցություն են խոստացել: Բյուջեի միջոցներն էլ, որ ներդնենք, կունենանք մի ավարտուն ծրագիր: Իսկ երբ դպրոցը կառուցվի ու շահագործման հանձնվի, համայնքի բյուջեին մեր մասնակցությամբ արդեն մենք կստանձնենք պահպանությունը:
– Մանկապարտեզ ունենալը ոչ այնքան ֆինանսների խնդիր է, որքան մտածողության. մարդիկ ամեն ինչ կանեն, որպեսզի իրենց երեխաները դաստիարակված մեծանան: Այսօր խիստ մեծ տարբերություն կա մանկապարտեզ հաճախած և տանը մեծացած երեխաների մեջ, հատկապես երբ նրանք սկսում են դպրոց հաճախել:
– Էհ, հասանք մշակույթի տան հիմնանորոգմանն ու հասկացա, որ պետք է ճանապարհները սարքենք՝ երեխեքի կոշիկները չի մաշվի, կանանց «կաբլուկները» չեն կոտրվի, մեր «պագրիշկեքը» չեն ծակվի...
– Գյուղի հազարամյակի տոնակատարությունն էր, անձրև էր գալիս, մեծ հովանոցների տակ ենք նշել: Բա դա շնո՞րհք էր: Որ մշակույթի տան վերանորոգման ծրագրին ընթացք տրվի, գյուղի սեփական ներդրումներից բացի, օտար երկրներում ապրող ու աշխատող մեր համագյուղացիները ևս նեցուկ կլինեն:
– Ամեն օր լսում ենք գյուղի զարգացման հրամայականի, պետության հոգածության ու աջակցության մասին: Մի գյուղ էլ մենք ենք ու գյուղի շինականն էլ ենք մենք, էլիտան էլ: Ուրեմն մենք կորոշենք, թե որն է մեր կարևորագույն խնդիրը:
– Մենք ունենք ավելի մեծ խնդիրներ, օրինակ, ջրի հարցը. ջրով լի բաժակը մի քանի րոպե թողնում ես, հատակին ավազի շերտ է առաջանում: Արդյո՞ք այս դեպքում գերեզմանոցի մասին խոսելը տեղին է:
– Ներկայացված ծրագրերից յուրաքանչյուրի իրականացումը կախված է հարկերի վճարումից: Այսօր գյուղացին ոչ թե չի ուզում հարկեր վճարել, այլ ի վիճակի չէ: Մի տարի կարկուտ է, մյուս տարի՝ երաշտ. ինչպե՞ս վճարենք հարկերը: Պետական աջակցություն է անհրաժեշտ, օրինակ՝ համապատասխան վարկային քաղաքականությունը: Առանց նման աջակցության նման քննարկումներն անարդյունավետ են:
– Եթե հարկ չենք մուծում, գույք էլ չենք կարողանա գնել: Առաջինն այս հարցը պիտի լուծենք գյուղում:

– Մեծ գյուղ ենք և իհարկե մեզ մանկապարտեզ է հարկավոր: Թե չէ, ութ երեխա ունեմ, ո՞ւմ թողնեմ, որ գնամ աշխատելու: Եթե մանկապարտեզ լինի, այդ հարցն էլ կլուծվի:
– Հեշտ ենք ասում՝ մանկապարտեզի համար գույքի ձեռքբերում, սակայն այն ներդրումները, որ առաջարկվում են, բավարարելո՞ւ են գյուղի պահանջարկը: Համաձայն եմ լրացուցիչ տեղեր կստեղծվեն 30 երեխաների համար: Բայց ինչպե՞ս են ընտրվելու այդ երեխաները: Գրեթե համոզված եմ, որ այդ ընդլայնումը կռվախնձոր է դառնալու գյուղի համար: Պե՞տք է արդյոք դա մեզ:
– Մանկապարտեզի համար մի ձեռքս եմ բարձրացնում, ճանապարհների համար՝ երկուսը, որովհետև այս խնդիրը բոլորի հետ է առնչվում՝ ի տարբերություն մանկապարտեզի:
– Ճանապարհների վերանորոգման հարցն ուղղակիորեն անդրադառնում է հարկատու-հարկահավաք հարաբերություններին: Գյուղում գրեթե բոլորը մեքենա ունեն ու վճարում են գույքահարկ: Համայնքի բյուջեն գոյանում է նման հարկերից և նորմալ ճանապարհի առկայության դեպքում գյուղացին այլևս չի տա «ո՞ւր են է իմ վճարած հարկերը» հարցը:
– Գյուղի զարգացման հետ գերեզմանոցի ցանկապատումը կապ չունի: 180 աստիճանով տարբերվող բաներ են: Նախ կյանքն է հարկավոր կարգավորել, հետո՝ շիրիմների ապահովությունը:
– Մի հարց ունենք. էսքան խոսելուց ու ընտրելուց հետո, ե՞րբ է խոսքը գործ դառնալու:
– Երեխեն ծարավ եղավ, ինչքան ուզում եք մանկապարտեզ լինի... Գյուղը բաժանված է տարբեր թաղամասերի և տարբեր թաղամասերի բնակիչները շահագրգռված չեն լինի աշխատուժ ներդնել մանկապարտեզի վերականգնման համար, որովհետև դրանից օգտվելու է հիմնականում մի թաղամասի բնակչությունը: Մինչդեռ ջրատարի վերանորոգումը բոլորի շահերից է բխում:
– Ամռանը Սարուխանում մնում ենք մենք՝ երեք մեխանիզատորներս ու կնանիք: Ու՞մ համար են համերգ կազմակերպելո՞ւ, որ մշակույթի տուն կամ պուրակ հիմնենք:
– Գյուղը երկու մասի է բաժանված գետակով, և շատ լավ կլիներ, որպեսզի նոր կամուրջով գյուղը վերջապես միասնական համայնք դառնար:
– Ջուր եղավ՝ ցանում եմ: Ցանեցի՝ եկամուտ ունեմ: Եկամուտ ունեմ՝

հարկ եմ մուծում: Բերքի աճեցնողը ջուրն է, ոռոգման հարցը լուծենք, հետո կմտածենք այլ ծրագրերի մասին:

– Թեև մենք ապրում ենք կենտրոնական փողոցում, կարծում ենք, որ միջանկյալ փողոցների վերանորոգումն առավել կարևոր է, քանի որ այդ փողոցներից ջրերը գալիս լցվում են կենտրոնական և յուրաքանչյուր վերանորոգում ընդամենը կես տարվա կյանք է ունենում: Ճիշտ է, կենտրոնական փողոցը գյուղի դեմքն է, բայց պետք է ուշադրություն դարձնենք մեր իրական խնդիրներին:
– Միջանկյալ ճանապարհներն են գյուղն իրար կապում ու գյուղացիներին միմյանց շփվելու հնարավորություն տալիս, պետք է այս նպատակով գումարը ծախսել է:
– Կենտրոնական և հարակից փողոցների երեխաները խիստ տարբերվում են իրարից, քանի որ գալիս են կեղտոտված, ցեխոտ ու արժանանում են նաև ընկերների ծաղրին: Սա նաև մեծ հոգեբանական խնդիր է առաջացնում:
– Գյուղապետն ասում է, որ համայնքի գործազուրկները հրաժարվում են ասենք առուների մաքրման գործով զբաղվել ու ստիպված է լինում մայրաքաղաքից աշխատուժ բերել: Ասում են. «ամոթ է առուները մաքրելը ու չեն գալիս, այդպես էլ մնում են իրենց խղճուկ թոշակի կամ նպաստի հույսին, սակայն արժանապատիվ աշխատել ու վաստակել հրաժարվում են»:
– Մշակույթի տունը վերանորոգվել է անցյալ տարի, շատ լավ վիճակում է գտնվում: Խմբակներ կան, երաժշտական դպրոց: Աստիճանաբար ավելանում է դրանց թիվը: Այս դինամիկան շարունակվում է և նոր գումարներ ծախսել արդեն իսկ կայացած ծառայության վրա, անիմաստ է, երբ այդ գումարները շատ սուղ են:
– Մեկ-մեկ էլ համայնքի ղեկավարին լսենք ծրագրերի ընտրության հարցում, մենք իրեն ընտրել ենք, որ ինքն էլ մեզ օգնի ընտրենք:
– Մենք հիմնականում ինչ ենք անում՝ բերք ենք արտադրում: Այդ բերքն ինչ պետք է անել՝ շուկա տանել: Ինչով պետք է տանել՝ ճանապարհով: Ուրեմն պետք է առաջնահերթ վերանորոգել ճանապարհները:
– Ձրի վարձը ես չեմ տալիս, որովհետև ինձ էդ ջուրը չի հասնում: Եթե չեմ օգտվում, ինչի՞ տամ:
– Մշակույթի տան տանիքի համար գումար հիմա ծախսելը անլուրջ է, ախր նախ գյուղացու մասին մտածեք, առողջության մասին մտածեք, հետո նոր մշակույթից խոսեք: Մշակույթի տան տանիքը շան հինգե-

րորդ ոտն է, առանց դրա էլ կվազի...

– Վատ հարց չի մեր հերոսների համար հուշարձանի կառուցումը, բայց էդ կարելի է անել այն դեպքում, երբ փողն արդեն շատ է ու չգիտենք էլ ինչի վրա ծախսել: Ջրի հարցը լուծենք, նորմալ ապրենք, լավ բերք ունենանք, հաջորդ տարի էլ հուշարձանի կառուցումը կսկսենք:
– Հուշարձանի կառուցումն ու հաճախակի այցելությունները կնպաստեն նաև նրան, որ գյուղի երեխաները հայրենասիրության ոգով կդաստիարակվեն: Հարևանի երեխեքը գնացին, զոհվեցին... Բա իմ թոռներին չպատմեմ նրանց մասին:
– Երկու երեխա ունեմ և չգիտեմ ինչ անել. տանել Երևան, թե՞ Չարենցավան, որովհետև եթե ես իմ մանկությունն անց եմ կացրել մուլտֆիլմեր ու կինոնկարներ դիտելով, սպորտային խմբակներ հաճախելով, նրանք ոչինչ չունեն այստեղ: Ինչպե՞ս եմ ապահովելու նրանց բազմակողմանի զարգացումը:
– Ոռոգման ցանցի վերանորոգումը մեծ հարց կլուծի, հողն է մեզ պահում, առանց ջուր այս հողը ինչ անեմ, մենակ հարկ հո չեմ տամ:
– Բա որ հանկարծ երկրի տնտեսական վիճակը վատանա, ու այսօր մեր գյուղի այն անդամները, որ զբաղված են ծառայությունների ոլորտում նորից «վերադառնան» հողին, այդ ժամանակ ի՞նչ պիտի անենք առանց ոռոգման:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Համահամայնքային քննարկման ձևաչափը

Համահամայնքային քննարկումներում կարևորվել են քաղաքացիների տեսակատները: Ուստի ելույթներին, հարց ու պատասխանին գործընթացում նվազագույն տեղ ու ժամանակ է հատկացվել, հիմնական շեշտը դնելով հենց քաղաքացիների մասնակցությամբ քննարկումներին:

Կիրառված ձևաչափում քննարկումների մասնակիցները՝ համայնքի անդամները, յուրաքանչյուր սեղանի շուրջ 10-15 հոգի, անդրադառնում են համայնքի զարգացման խնդիրներին, դրանց լուծման ուղղությամբ տեղական իշխանությունների ձեռնարկած քայլերին, որոշումների ընդունման գործընթացին, ռեսուրսների բաշխմանն ու ծրագրերի մշակմանը: Սեղանի շուրջ քննարկումը վարում է հմուտ սեղանավարը, որի հիմնական գործառույթը խնդրո առարկայի շուրջ քննարկման բաց և ժողովրդավարական ընթացքն ու առողջ մթնոլորտն ապահովելն է:

Հնարավորինս առարկայական քննարկում ապահովելու նպատակով մասնակիցներին, նախքան բուն քննարկումը, տրամադրվում է խնդրի վերաբերյալ բազմակողմանի հակիրճ տեղեկատվություն:

Առանձին սեղանների շուրջ ընթացող համաժամանակյա քննարկումը, կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների շնորհիվ, վերափոխվում է բոլոր մասնակիցների ամբողջական ու միասնական քննարկման: Քննարկման մասնակիցների ձևավորած գաղափարները, տեսակետներն ու առաջարկները գրառողը արձանագրում և մուտքագրում է համակարգիչ: Մուտքագրված տեղեկություններն անլար համակարգչային ցանցի միջոցով գրառողն ուղարկում է քննարկման օպերատորին: Վերջինս խմբագրում է ստացած ձևակերպումները և արտածում էկրաններին: Այսպիսով, քննարկման առանձին մասնակիցների հնչեցրած մտքերը, տեսակետներն ու առաջարկները մատչելի են դառնում ողջ լսարանին:

Քննարկման ավարտին յուրաքանչյուր մասնակից արտահայտում է իր նախապատվությունը՝ քվեարկելով քննարկման դրված սցենարներից որևէ մեկի օգտին: Քվեարկության արդյունքները համակարգչի օգնությամբ ամփոփվում և անմիջապես արտացոլվում են էկրաններին: Քվերակության հրապարակված արդյունքները, մի կողմից, քննարկման արդյունքում մասնակիցների նախապատվության արտահայտությունն են, մյուս կողմից՝ առաջարկ որոշում կայացնողների համար:

Քննարկման և քվեարկության արդյունքներն ամփոփվում և տրամադրվում են բոլոր շահագրգիռ կողմերին՝ որոշում կայացնողներին, համայնքների անդամներին և լրատվամիջոցներին:

Որոշում կայացնողներին հարկ է ներգրավել քննարկումների կազմակերպման գործընթացի վաղ փուլում: Նրանց աջակցությունն անհրաժեշտ է թե՛ աշխատանքների արդյունավետ կազմակերպման առումով, թե՛ քննարկման շահագրգիռ ընթացքի համար: Էլ ավելի կարևոր է նրանց արձագանքը քննարկման ընթացքում հնչած տեսակետներին:

Այսպիսով, համահամայնքային քննարկում կազմակերպելու համար անհրաժեշտ է.

– վեր հանել և հստակ սահմանել քննարկման դրվող խնդիրները.
– քննարկման մասնակիցներին տրամադրել ամփոփ հիմնական տեղեկատվություն՝ սցենարներ, որոնք պատշաճ կերպով և հնարավորինս պարզ արտահայտում են քննարկվող խնդիրների էությունը.
– ապահովել քննարկումների համար անհրաժեշտ տարածք և պայմաններ.
– տեղակայել համահամայնքային քննարկումների իրականացման համար անհրաժեշտ ծրագրային ապահովմամբ զինված համակարգչային սարքավորումները և ապահովել դրանց միացումը համակարգչային ցանցին.
– ներգրավել համապատասխան հմտություններ ունեցող սեղանավարների և գրառողների, տեխնիկական և օժանդակ անձնակազմ.
– համայնքի բնակիչներին ժամանակին տեղեկացնել քննարկման նպատակների, բնույթի, վայրի և ժամանակի մասին.
– ապահովել քննարկումների անխափան ընթացքը.
– ամփոփել քննարկումների արդյունքներն ու դրանց ամփոփ հաշվետվությունը տրամադրել բոլոր շահագրգիռ կողմերին:

Հաջորդ էջում ներկայացվում է համահամայնքային քննարկման տիպական նկարագրությունը.


Էկրան
Սեղանավար
Գրառող
Համակարգիչ
WiFi
Պրոեկտոր
Համակարգիչ
WiFi
Սեղանավար
Գրառող
Համակարգիչ
WiFi
Սեղանավար
Գրառող
Համակարգիչ
WiFi
WiFi ցանցի
ընդունիչ / հաղորդիչ
Հոսքային
հիշեցնող
Կենտրոնական արտինիստրատոր
(քննարկման օպերատոր)
Սեղանավար
Գրառող
Համակարգիչ
WiFi
Սեղանավար
Գրառող
Համակարգիչ
WiFi
WiFi
Համակարգիչ
Պրոեկտոր
Էկրան

Մասնագետների և ընթերցող լայն հասարակության ուշադրությանը ներկայացվող սույն օժանդակ ձեռնարկը նախատեսված է մասնակցային ժողովրդավարության և տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստման դասընթացներում կիրառելու նպատակով:

Գրքում զետեղված են հանրապետության բոլոր մարզերի տաս համայնքներում իրականացված տեղական բյուջեների քննարկումների, դրանց արդյունքում որոշումների կայացման, իրականացված ծրագրերի, հարկերի հավաքագրման և համայնքային այլ խնդիրների վերաբերյալ տասը նախադեպերի ուսումնասիրություններ:

This book is produced with the financial assistance of the European Union. The contents of this book are the sole responsibility of the International Center for Human Development and can under no circumstances be regarded as reflecting the position of the European Union.

Գիրքը հրատարակվել է Եվրոպական Միության օժանդակությամբ: Գրքի բովանդակության բացառիկ պատասխանատվությունը կրում է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, և այն չի կարող համարվել իբրև Եվրամիության տեսակետ: